



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2794

9(47.925)
μ-17

W 220

2104

150

18 NOV 2011



ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ
ԸՍՏ ՄՈՎՍ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ
ԿԱՄ
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՆՆԵՐ
ՄՈՎՍ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՄԱՍԻՆ

8863

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Թ Ա.

ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

ԸՍՏ ՄՈՎԱ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ԿԱՄ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՎԱ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՄԵԱԻՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1906.

9(47.395)

m-17
ալ

ՊՐՈՖ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՅ

31 AUG 2007

ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

ԸՍՏ ՄՈՎԱ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ԿԱՄ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՎԱ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՄԵԱԻՆ

1907
ԵԿԻ
Դ

[ԳԼ. Թ. — ժ. Մեծն Տրդատ. ժե. Գահ-Նամակ. ժ. Զ. Ս. Սահակ
Ե. Ս. Մաշտոց. ժե. Անկումն Արշակունեաց. — Եղբակացու (Թիւն):

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՐՍԷՆ ՍԱՐԿ. ՍԻՄՈՆԵԱՆՑ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1906.

Ա Ջ Դ

1903 թ. լոյս տեսաւ Մոսկուա Պրոֆ. Գր. Խալաթեանցի ընդարձակ ուսումնասիրութիւնը՝ Հայ Արշակունիք ըստ Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան», — փորձ աղբիւրների քննադատութեան — ոուսերէն լեզուով (Մասն Ա. հետազօտութիւն, էջ Փ.Ձ + 400, Մ. Բ. Երկր, էջ 193): Ի նկատի առնելով որ շատերը մեր Տաճկահայ եւ այլ ազգային քանասէրներից անձեռնհաս են ծանօթանալու այդ լուրջ աշխատութեան հետ՝ ոուս լեզուն չիմանալու պատճառով, մենք սկսեցինք մաս-մաս թարգմանել այդ հետազօտութիւնը «Հանդէս Ամսօրեայ», ի էջերում՝ (Թ. 9, 12, 1904, 6, 8, 1905, 4, 6, 1906)՝ առանց հետեւելու ոուս քնազրի

գլուխների դասաւորութեան, ուրեմն եւ ժամանակագրութեան կարգին: Տասն եւ ութ ընդարձակ գլուխներից մենք թարգմանել ենք առ այժմ՝ չորսը՝ Ս. Սանակ եւ Ս. Մաշտոց, Արշակունեաց անկումը Հայաստանում, Մեծն Տրդատ եւ Գահնամակ, որոնք լոյս են տեսնում այժմ՝ “Ազգային Մատենադարանի”, շարքում՝ առանձին գրքոյկով:

Մոսկուա, Ապրիլ 1906:

ԹԱՐԳՄԱՆԻԶԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

1. Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի գործունէութիւնը յսգուա Հայ լուսաւորութեան	1— 38
2. Արտաշիր եւ Արշակունեաց անկումն Հայաստանում	38— 72
3. Մեծն Տրդատ (գլ. Ա.)	73— 93
4. Գահ-նամակի մասին	94—103
5. Մեծն Տրդատ (գլ. Բ.)	104—124

Ս. ՍԱՀԱԿԻ ԵՒ Ս. ՄԱՅՏՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒ-
ԹԻՒՆԸ ՅՕԳՈՒՑ ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Սուրբ Մաշտոցի կենսագրութիւնը մեր ձեռքը հասել է երկու խմբագրութեամբ. առաջինը՝ որ լոյս է տեսել 1833 թուին Վենետիկում, աւելի ընդարձակ է եւ շարագասութեան կողմից նկատելի կերպով տարբերում է երկրորդից, որը լոյս է տեսել 1854 թ. դարձեալ Վենետիկում՝ «Սոփերք» կոչուած շարքի մէջ: Վերջերս (1894 թ.) վերոյիշեալ երկու խմբագրութիւններն եւս տպագրուեցին մի գրքի մէջ: Այս երկու խմբագրութեանց մասին քննական գրականութեան մէջ յայտնուեցին տարբեր կարծիքներ. Վենետիկի Մխիթարեաները¹ նոյն իսկ մինչեւ այսօր կորիւնի իսկական խմբագրութիւնը համարում են երկրորդը, այն է աւելի համառօտ եւ գրական տեսակէտից աւելի հարթ կազմուած խմբագրութիւնը: Սակայն խնդրի խոր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս,

¹ Տես օր. չ. Բ. Սարգիսեանի, քննութիւն Ագաթանգեղոսի մասին 1890, էջ 109 եւ հետ. նաեւ «Կորիւն» 1894 թ. հրատ. յառաջաբանը: Նոյն կարծիքի է նոյնպէս Անդրեայի հայագէտ Կոնիքերը («Հանդէս» 1903. Փետ.):

որ համառօտ խմբագրութիւնը ինքնուրոյն մի գործ չէ եւ կազմուած է, ինչպէս ես ենթադրում եմ, խորենացու զօրեղ ազդեցութեան տակ, եւ հետեւաբար իւր ներկայ դիրքով հազիւ թէ թ. դարուց առաջ գրուած լինի: ¹ Առաջին կամ ընդարձակ խմբագրութեան հարազատութեան ապացոյցներ են ի միջի այլոց այն մի շարք համապատասխան եւ նոյնանման կտորները, որ ունի մեր այս խմբագրութիւնը համեմատած Ղազար փարպեցու հետ (պատմութեան ա. մասում հայոց նշանագրերի գիւտի մասին), որը օգտուել է Կորիւնից եւ մասամբ նաեւ Ագաթանգեղոսի հետ, որի վերջնական խմբագրութեան վրայ Ս. Մաշտոցի կենսագիրը զօրեղ ազդեցութիւն է ունեցել:

Այսպիսով ուրեմն մի կողմից ունենալով Կորիւն (առաջին խմբագրութիւնը), միւս կողմից Ղազար, մենք կարող էինք վերաստուգել եւ ճշգրտել խորենացուն:

Սկսենք Հայոց նշանագրերը գտնողին աւնունից:

Բոլոր հին հեղինակները մինչեւ Ը դարը Յ. Բ. զօր օր. Կորիւնը, Եղնիկ Կողբացին, ² Կ. Պոլսոյ Պատրիարք Պրոկղը (390—446 թ.)

¹ Նորայր եր հետազօտութեան մէջ Կորիւնի մասին (էջ 397 եւ շար. Թիֆլ. 1900) երկրորդ խմբագրութիւնը կեղծ Կորիւն է անուանում եւ նրա կազմուելու ժամանակը հասցնում է մինչեւ իՍ եւ իՐ դարերը:

² Սրան են վերագրում «Եղնիկայ առ Մաշտոց» տես Հ. Բ. Սարգիսեան քննութ. Ազատական. մասին էջ 383:

«մեր երանելի հարց ուղղած թղթում», ¹ Ղազար փարպեցին, ² Աբրահամ Կաթողիկոսը ³ (Չ դ.), Է դարու անանուն հեղինակը. ⁴ Յովհան Օձնեցի կաթողիկոսը ⁵ Ը դարու սկզբում, Մովսէս Կաղանկատուացին (Է դարու հին խմբագրութեամբ), ⁶ — Մաշտոց ⁷ են անուանում հռչակաւոր սուրբ գործչին: Ինքը խորենացին

¹ «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնաց» Ջարքանալ. Վէնետ. 1889, էջ 664, «Գիւրթ թղթոց» էջ 1 եւ 9 (Թիֆլ. 1901):

² Ղազար փարպեցու պատմութեան մէջ ամեն աեղ յիշում է «Մաշտոց» բացառութեամբ մի հատուածի (էջ 39—41), որտեղ նոյն անձը կոչւում է «Մեսրոպոյ» Այս հատուածի յետոյ ներմուծուած լինելու մասին կը խօսուի մի փոքր յետոյ:

³ «Թուղթ Գ. րդ առ եպիս. Կիւրիւն», տես Ուլխտանէս հրատ. Ղազարչապատ մ. բ. էջ 84:

⁴ Ընդօրինակողներէց փոքր ինչ աղծաուած ձեւով *Μαστήγ τζηγ τόν μακάριον*, տես Migne, Patrol. s. g. t. 127, p. 901.

⁵ «Մատենագրութիւնք», Վէնետ. էջ 66, «Գիւրթ թղթոց», էջ 220:

⁶ Հրատ. Էմիլնի էջ 71, 72, 160, 176 եւ միայն երկու աեղ (էջ 69 եւ 73, եւ Պարիզի հրատ. 189—195) եւ այն խորագրերում եւ ոչ բնագրում յիշում է «Մեսրոպոյ»:

⁷ Կան ընթերցուածք Մաշտոց, Մաշղոց, Մաշձոց եւ Մաժոց: Այս անունը թեւեւ սակաւ, բայց պատահում է մատենագիրների մէջ. Գ դարում Ստեփան Սիւնեցու Պատմութեան մէջ (հրատ. Էմիլնի էջ 18) յիշում է ոմն երանելի Մաշտոց, որը Սիւնեցում մեարոպոլիտ է նշանակուել: Գրեթէս Բ եւ Յովհաննէս Բ (Չ դ.) կաթողիկոսների թղթերում — «Մաշտոց, եպիսկոպոս Խոռխոռուենաց» (Ջարքանալ. Պատմ. հայ դպրութեան մ. ա. տիպ Բ, էջ 400—401, Ստեփ. Օրբէլ. էջ 66 եւ Մ. Կաղանկ. էջ 95, հրատ. Էմիլնի). յայտնի է նաեւ Մաշտոց անունով կաթողիկոս † 897:

իւր Պատմութեան Բ գրքի սկզբում, այսինքն այնտեղ, որտեղ նա անցողակի յիշում է երանելի Ուսուցչին, նոյնպէս Մաշտոց է կոչում (միայն մի անգամ), սակայն յետոյ Գ գրքի վերջում, որտեղ նոյն անձին նուիրուած են մի քանի գրուիներ, աւելի քան երեսուն դէպքում այլ կերպ չէ կոչում նրան, բայց միայն Մեսրոպ: Մովսէս Խորենացուց յետոյ, մեր բոլոր մատենագիրները, զոցա թւում նաեւ Կորիւնի երկրորդ խմբագրութիւնը, հետեւելով նրան սկսեցին գլխաւորապէս գործ ածել Մեսրոպ անունը, իսկ մի քանիսը երկու անունն եւս, համարելով մէկը իբրեւ իսկական անուն, իսկ միւսը մականուն: «Վարք Ս. Յերսիսի» (էջ 110) ըստ երեւոյթին այդ մտքով գործածութեան առաջին օրինակը տուաւ, բայց յայտնի չէ — ի՞նչ տեղեկութիւնների վրայ հիմնուած:

Իսկապէս ի՞նչ է նշանակում «Մաշտոց»: Գարագաշեան¹ այս անունը յունական μάστος բառից է առաջացած համարում, որ նշանակում է, ըստնորա, «բարձրութիւն», հաւանօրէն եկեղեցական որեւէ տիտղոսի մտքով, որը ստացել էր Ս. Մաշտոց Բիւզանդիոնում՝ նման «Ալումիտ» — Ἀλομητος («անխոնջ») կամ ըստ Խորենացու Եկեղեցիաստէս — Ἐκκλησιαστης — տիտղոսներին:

Եթէ յիրաւի «Մաշտոց» անունը առաջացած է μάστος-ից, հապա զոր կանոնով հայերս

¹ «Բննակ. Պատմ. Հայոց», Գ. էջ 193; Գ. էջ 22:

առաջին հնչիւնը σ փոխել ենք — շ-ի, իսկ երկրորդ ε ց-ի:

Բաց ի դրանից պէտք էր նախապէս ապացուցանել, թէ Բիւզանդիայում գոյութիւն ունէր μάστος եկեղեցական տիտղոսը, որ Գարագաշեան չէ անում:¹ Μάστος բառի նախնական նշանակութիւնն է «պտուկ», «կուրծք», յետոյ «ստինք» (կենդանիների) եւ վերջապէս «բարձրութիւն», «բարձունք». որպէս եկեղեցական տիտղոս գոնէ Սուիդասի (Suidas) բառարանում չէ յիշում:

Ինձ թւում է, որ մեզ հետաքրքրող այս անունը կարելի էր պակաս խիզախութեամբ բացատրել հայերէն լեզուի մաշտել բայարմատից — մաշտ, որ նշանակում է «մազերը թափուել», «ճաղատանալ», -ոց մասնիկով կը նշանակէ «անհեր», «ճաղատ»: Թէեւ «մաշտել» բառը կարող է ունենալ նաեւ մի այլ նշանակութիւն, որ մեզ հասած յիշատակարանների մէջ չի պահուել:

Ինչ վերաբերում է եկեղեցական ծիսարանի կամ Արարողագրքի «Մաշտոց» կոչ-

¹ Նման, ըստ իս, քիչ հաւանական ստուգաբանութիւն է առաջարկում Գարագաշեան (Գ. 22) նաեւ «Մեսրոպ», անուան, առաջացած համարելով պարսից? մնչընֆ բառից, «Գրագիր», «բարտուղար» նշանակութեամբ, սակայն թէ ինչպէս «մնչընֆ-ից» կարող էր «Մեսրոպ», առաջ գալ, այդ մասին լուծւ է նա: Հ. Բ. Սարգիսեան (Ազատանգղ. էջ 404) «Մեսրոպ», ասորական Մար-Սիովպ — այսինքն — «տէր Սերովբէ»-ից է համարում առաջացած, որ ինձ նոյնպէս կամայական է թւում:

մանը, ինչ թուում է, հակառակ մեր բանասիրութեան մէջ ընդհանրացած կարծիքին,¹ որ այդպէս կոչուել է ծիսարանը կազմողի, աւելի ճիշտ նրա խմբագրողը Մաշտոց գիտնական կաթողիկոսի անունով, որը վարում էր կաթողիկոսութիւնը թ. դարու նոյն իսկ վերջերում:²

Այսպէս թէ այնպէս մի բան աներկբայելի է, որ Հայոց տառերը գտնողը իսկական անունը «Մաշտոց» էր, ուստի եւ պէտք է վերականգնել այդ անունը:

Մաշտոցի կենսագրութիւնը եւ Հայոց տառերի գիւտի պատմութիւնը խորենացին տալիս է ընդհանրապէս համաձայն իւր աղբիւրների — Կորիւնի եւ Ղաղարի, բայց թոյլ է տալիս նոցա համեմատութեամբ նաեւ բաւական կարեւոր շեղումներ: Օր. «Մաշտոց»ը ըստ նորա (Գլ. խէ) «սնեալ եւ ուսեալ (էր) առ մեծին Ներսիսի», — ցուցմունք որ ըստ ամենայն հաւանականութեան փոխ առած է «Վարք Ս. Ներսիսի»³ գրուածքից եւ որը հազել թէ համապատասխան է իրականութեան: Մեծն Ներսէս ինչպէս երեւում է Փաւստոսից եւ կարելի է մակարերել Ամփանոսից վախճանուեց 373 թուից ոչ ուշ, որովհետեւ հետեւեալ իսկ տարին Ղաղենտիանոս կայսեր († 378) հրամանով

¹ Տես Ն. Շնորհալու «Ընդհանրական»ը հրատ. Երուսաղ. էջ 274: Համընան «Հայոց Պատմ.» Ա. 769:

² Տես ի միջի այլոց Հ. Տաշեանի «Ցուցակ հայ ձեռ. վեհ. Մխ.» Վիեննա 1895, էջ 64:

³ «Սոփերք» Զ. էջ 83, 110:

նենդութեամբ սպանուեց հայ Պապ Թագաւորը,¹ որին մեղադրում էին յիշեալ հայ կաթողիկոսին թունաւորելու գործում. իսկ Ս. Մաշտոց վախճանուեց, ինչպէս յայտնի է, 439 թ., այսինքն Ս. Սահակի մահից († 438) վեց ամիս յետոյ, այն է «Յազկերտ Բ.ի (438—457 թ.) թագաւորութեան առաջին տարին»: Այս հաշուով անգամ, եթէ ենթադրենք, որ Մաշտոց ապրել է 75 տարի, ապա նա Ս. Ներսիսի մահուան տարին 8—9 տարեկանից աւելի չէր կարող լինել: Ոչ նուազ նշանակութիւն ունի եւ այն հանգամանքը, որ այս մասին լուում են, թէ Ս. Մաշտոցի կենսագիրը (նոյն իսկ երկրորդ խմբագրութիւնը) եւ թէ Ղաղար Փարպեցին:

Ինչ վերաբերում է տառերի գիւտի պատմութեան խորենացին զարդարել է այն նոր մանրամասնութիւններով, որոնք չեն հաստատուում հին աղբիւրներից:

Պէտք է դիտել, որ մինչեւ Հայոց տառերի գիւտը Հայաստանում — արքունիքում եւ պետական վարչութեան մէջ «արքունի դպրոց», ինչպէս որոշակի ասում է Ղաղար,² գործ էին ածում հրովարտականների եւ դատաստանական վճիռների մէջ ասորի եւ յոյն լեզուները, միեւնոյն ժամանակ ասորերէնը գործածական էր նաեւ եկեղեցական պաշտամունքներում:³ Երբ Մաշտոցն առաջին անգամ յղացաւ Հայոց

¹ Տես Սոյն Հետազոտութեան էջ 186—187:

² «Պատմ. Հայոց» էջ 34:

³ Ibid., էջ 36:

տառերը գտնելու բախտաւոր միտքը, եւ այդ միտքը համակրութեամբ ընդունեց Ս. Սահակ կաթողիկոսից, նոքա դիմեցին այդ ժամանակայ Հայոց թագաւոր Ղուամշապուհին, որը, ի պատասխան նոցա առաջարկութեան, յայտնեց, թէ ինքը առաջուց ըսած է եղել Դանիէլ անունով մի Ասորի եպիսկոպոսի մասին, որի մօտ իբր թէ գտնուում էին Հայոց տառեր: Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի թախանձանքով ուղարկուում է Ղահարիձ անունով մէկը արքայական հրովարտակով այդ նշանագրերի մասին Ղուամշապուհին հաղորդող¹ Հաբէլ երէցի մօտ (որը յիշեալ Դանիէլի բարեկամը կամ ազգականն էր)՝ այդ նշանագրերը Հայաստան բերելու: Հաբէլ շտապում է դէպի Դանիէլ եւ գտնելով նրա մօտ ցանկացեալ նշանագրերը, բերում է Հայոց թագաւորին եւ կաթողիկոսին: Սակայն երբ սկսում են գործագրել, տեսնում են, որ այս այբուբենը Հայոց լեզուի բոլոր հնչիւններն արտայայտելու համար անկատար է, ուստի ինքը՝ Մաշտոցը, որն այնչափ ոգեւորուած էր այս գաղափարով, իւր հետ վերցնելով մի քանի աշակերտներ՝ ուղեւորուեց Ազարիք («ի կողմանս Արամի») յուսարով՝ թէ հմուտ անձանց գործակցութեամբ կը կազմէ Հայոց լեզուի լիակատար այբուբենը: Նա այս նպատակով կանգ է առնում Ասորւոց երկու քաղաքներում: Ամիգում եւ Եդեսիայում, ուր տեղական եպիսկո-

¹ Այս մասին աւելի պարզ է խօսում Ղազար (էջ 37) քան Գորիւն (էջ 8):

պոսներն Ակակիոս եւ Բաբելլաս ջերմ եւ համակրալից ընդունելութիւն են ցոյց տալիս: Իւր հետ առած երիտասարդներին Մաշտոց երկու խմբակի է բաժանում. մի խումբը տեղաւորելով Ասորւոց դպրոցում Եդեսիայ մէջ, ուր բնակուում էր եւ ինքը,¹ միւսն ուղարկում է Սամոսատ քաղաքը Եփրատ գետի վրայ, Յունսոց դպրոց՝ այս երկու լեզուներն ուսանելու: Նոյն Եդեսիա քաղաքում Ս. Մաշտոցը մնաց մի առ ժամանակ նուիրելով իւր անձը խստամբերկեանքի, պահեցողութեան ու աղօթքների եւ շարունակ զբաղուելով հայերէն նշանագրերի գիւտի հոգսերով: «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ, ասում է կորիւն, վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օձան գտանելոյ, որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ... նորոգ եւ սքանչելի աշովն (sic) իւրով նշանագիրս հայերէն լեզուին», որոնց նա անյապաղ սկսեց անուններ

¹ Նորայր («բնասեր», Ը. 13—16, եւ հետագօտութիւն կորիւնի մասին էջ 17) իրաւամբ առաջարկում է կորիւնի բնագրի մէջ (էջ 9, տող 33, տիպ 1833) «ի յունական դպրութիւնն», խօսքից յետոյ. «անտի, բառից առաջ ոչ թէ վերջակէտ դնել, ինչպէս գրուած է, այլ միջակէտ, որ 1894 հրտ. մէջ ուղղուած է: Սրան հարկ եմ համարում աւելացնել, որ նոյն նախագասութեան մէջ «գումարէր», բառից յետոյ հարկաւոր է ոչ թէ ստորակէտ, ինչպէս գրուած է բոլոր տպագրութեանց մէջ, այլ վերջակէտ միայն այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ Մաշտոցն երիտասարդներին Սամոսատ ուղարկելուց յետոյ, ինքը մնաց Եդեսիայում: Ի դէպ մի այլ սրբագրութիւն եւս էջ 21, տող 20, «գիմաստութիւն», բառից յետոյ նոյնպէս պէտք է, ըստ իս, ստորակէտ եւ ոչ թէ վերջակէտ դնել:

տալ եւ որոշ կարգերի վերածել, ապա եւ կապել եւ վանկեր յօրինել: Յետ այսորիկ նա հրաժարական տալով ասորի եպիսկոպոսներին եւ իւր հետ վերցնելով իւր աշակերտներին (որ ասորական դպրոցումն էին ուսանում), ուղեւորուեց Սամոսատ (նոցա մօտ, որոնք յուր նական դպրոցումն էին ուսանում), ուր նա ընդունեց տեղական եպիսկոպոսից եւ ընդհանրապէս հոգեւորականութիւնից մեծ յարգանքով: Այս քաղաքում Մաշտոց գտաւ մի ոմն «գրիչ հելենական դպրութեան», չոտիանոս անունով եւ նրա գործակցութեամբ կարգաւորեց իւր գրած նոր հայերէն այբուբենի «նուրբ, կարճ, երկայն, պարզ եւ բարդ» հնչիւնները: Սրանից անմիջապէս յետոյ, իւր երկու երէց աշակերտների — Յովհան Եկեղեցացու եւ Յովսէփ Պաղնացու հետ միասին նա ձեռնարկում է (Ս. Գրքի) թարգմանութեան սկսելով Սողոմոնի առակներից: Այս թարգմանութիւնը արտագրուեց նոյն չոտիանոս գրչի ձեռքով, որը միեւնոյն ժամանակ վարժեցնում էր աշակերտներին հայոց գեղագիր գրչութեան: Կատարելով այս ամէնը Ս. Մաշտոց վերադարձաւ Հայաստան եւ իւր ջանքերի արդիւնքները ներկայացրեց Ղաւմաշապուհ թագաւորին եւ Ս. Սահակ կաթողիկոսին:

Ահա թէ, իրապէս, ինչպէս պիտի մակաբերել ըստ Կորինթի հայոց նշանագրերի գիտի աւելի ստուգագոյն պատմութիւնը, որ այնքան հակառաբար եւ խառնաշփոթ են աւանդում

յետին աղբիւրները, որոնց թւում նաեւ խորենացին:

Մասնաւորապէս, մեր Մովսէսին պիտի վերագրել հետեւեալ, ըստ իմ կարծեաց, կամայական յաւելումներն եւ փոփոխութիւնները. — Ղաւմաշապուհ թագաւորի Միջագետք երթալը, Պարսից Ղաւմ թագաւորի հրամանով, երկիրը խաղաղացնելու, — բոլորովին անհասկանալի դժուարութիւններ, որ կրում էր այնտեղ Հայոց թագաւորը քարտուղար չունենալու պատճառով (Ս. Մաշտոցի արքունիքը թողնելուց յետոյ), «քանզի» բացատրում է մեր պատմագիրը հակառակ Ղաղարի «Պարսկականաւն վարէին (որտեղ) գրով» (Գլ. Ծբ):

Այս բոլորը պակասում է նոյն իսկ Կորինթի երկրորդ խմբագրութեան մէջ, որ ենթարկուած է խորենացու այնչափ զօրեղ ազդեցութեանը:

Այնուհետեւ խորենացու գրչին պէտք է վերագրել, — Հաբէլ երէցի մասին տուած ոչ այնքան պարզ տեղեկութիւնները, որին մեր պատմագիրը, բացի դրանից, վերագրում է հայոց այբուբեն կազմելը, Գանիէլ եպիսկոպոսի օգնութեամբ, — եւ թագաւորի դեսպան Ղահրիճի Խաղունի նախարարական ցեղից սերուելը (Գլ. Ծգ):

Մինչեւ իսկ այս յաւելումներն եւս պակասում են Ս. Մաշտոցի կենսագրի Կորինթի երկրորդ խմբագրութեան մէջ:

Վերջապէս Ս. Մաշտոցի դէպի Միջագետք արած ճանապարհորդութեան մանրամասնութիւնները, այն է. — նրա այցելութիւնը Գանիէլ եպիսկոպոսին, Եփեսոսի դիւանապետ եւ հեթանոս հռետոր պղատոնին, — նրա ուղեւորութիւնը, ըստ ցուցման այս հռետորի, Փիւնիկիայից Սամոս (ակներեւ է կղզին) սոյն հռետորի ուսուցիչ, մեծ գիտնական Եպիփանին որոնելու նպատակով, — զուր որոնումն այս վերջինիս, որ մեռած լինելով թողել էր իրեն աշակերտ Հռոփանոս անունով գրչին, — եւ ինչ որ մանաւանդ կարեւորն է տառերի գիւտին նախընթաց հրաշալի տեսիլը, հանդերձ երեւութացեալ աջով «գրելով ի վերայ վիմի ա, ե, է, ը, ի, ո, ւ, եւ սրանից անմիջապէս յետոյ Մաշտոցի ձեռնարկած (հին կտակարանի) 22 կանոնական գրքերի եւ Նոր կտակարանի հայերէն թարգմանութիւնը (Գլ. ծգ), — այս ամէնը նոյնպէս պէտք է վերագրել մեր պատմաՏօր հնարագիտութեան, որ այսու հանդերձ թերեւս օգտուել էր նաեւ յետին ասանդութիւններից:

Այս բոլորը, կրկնում եմ՝ ես, պէտք է վերագրել միայն մեր պատմաՏօր հնարագիտութեան, թէեւ նոյն տողերը հեթանոս ճարտասան Պղատոնի, Հայոց նշանագրերը գտնողի դէպի Փիւնիկիա եւ Սամոս կատարած ճանապարհորդութեան եւ նրա հրաշալի տեսիլի մասին, մենք գտնում ենք բառացի նոյնութեամբ նաեւ Ղազարի պատմութեան մէջ: Խնդիրն այն է, որ

Ղազար, ինչպէս վերեւն էլ յիշեցի հետեւում է Վորիւնի առաջին կամ հին խմբագրութեանը, որը Հայոց նշանագրերի գտնողին առանց բացառութեան «Մաշտոց» է կոչում, եւ բացի դրանից բնաւ անձանօթ են նրան, փոքր ինչ առաջ յիշուած Մաշտոցի ճանապարհորդութեան առասպելական մանրամասնութիւնները եւ նրա հրաշալի տեսիլը: Մինչդեռ Ղազարի տպագիր հրատարակութիւններում, այս իսկ հատուածը առաջ է բերուած ոչ միայն համաձայն Մ. Խորենացու պատմածին, այլ կատարելապէս յար եւ նման նրան: Այս նմանութիւնը ինձ կասկածելի թուեց եւ ես դեռ 1901 թ. գիմեցի Ս. Էջմիածին գիտնական Գալուստ Տէր-Մկրտչեանին. խնդրելով համեմատել Ղազարի պատմութեան մեզ հետաքրքրող այս հատուածը Մայր-Աթոռի մատենադարանում գտնուած նոյն հեղինակի ճեռագիր օրինակներում: Համեմատութիւնից երեւաց, որ Ղազարի պատմութեան պահպանուած ամենահին մի ձեռագիր օրինակի մէջ, այն է Թ. 611, ըստ ցուցակի Գէորգ կաթողիկոսի, վերջիշեալ հատուածը պակասում է, եւ նա ներմուծուած է Ղազարի պատմութեան 1774 թ. գրուած ձեռագրի մէջ՝ Մ. Խորենացու «Պատմ. Հայոց» առաջին հրատարակութիւնից, որ լոյս տեսաւ 1695 թ. Ամստերդամում: Բայց որովհետեւ Ղազարի առաջին տպագիր հրատարակութիւնը (1793) 1774 թուին գրած ձեռագրից էր, ապա ուրեմն հասկանալի է,

Թէ մեզ հետաքրքրող հատուածը ամբողջովին ընկաւ նաեւ Ղազարի պատմութեան բնագրի մէջ¹:

Որպէս զի համոզուինք, թէ Խորենացին որպիսի կամայականութեամբ կերպարանափոխում է Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի յետագայ պատմութիւնը, տեսնենք ի՞նչ է հաղորդում Կորիւնը նոցա մասին:

Հայոց նորագիւտ տառերը Հայաստան բերելուց յետոյ, Ս. Մաշտոցի ձեռքով մեր երկրում սկսւում է մտաւոր լուսաւորութեան մի զօրեղ գործունէութիւն. դպրոցներում մտցնում են դասաւանդութիւն հայոց լեզուի, բանում են նոր դպրոցներ եւ ամէն կերպ աշխատում են ժողովրդի մէջ հետաքրքրութիւն զարթեցնել դէպի ուսումն եւ դպրութիւնը. դրանից զատ սկսում են թարգմանել հայերէն այլեւայլ գրուածքներ:

Սրա հետ միաժամանակ Ս. Մաշտոց ուղեւորւում է հայկական զանազան գաւառներ, առանձնապէս Գողթն եւ Սիւնիք, ամէն տեղ հիմնելով նոր դպրոց եւ յաջողութեամբ մտցնելով հայ դպրութիւնը. իսկ Վրաստանում եւ Աղուանքում օգտուելով իշխանաւորների հովանաւորութիւնից եւ հոգեւորականութեան աջակցութիւնից նա հիմք է դնում երկու ազգու-

¹ Սոյն համեմատութեան մանրամասնութիւնը տես յօդուած Հ. Գ. Տէր-Մկրտչեանի «Արարատ», 1901 թ. Նոյեմ. «Դեկտ.» էջ 542-549. եւ առանձին արտատպ. էջ 1-8:

թիւնների դպրութեան՝ կազմելով նոցա համար առանձին այբուբեն:

Երբոր բաւականաչափ գործ կատարուած էր Հայաստանի պարսկական բաժնի մտաւոր եւ հոգեւոր լուսաւորութեան համար, Ս. Սահակ կաթուղիկոսը եւ Մաշտոցը սկսեցին հոգ տանել նաեւ հայ ժողովրդի միւս կիսի մասին, որ գտնւում էր Յունաց կայսեր իշխանութեան տակ: Ս. Մաշտոց իւր աշակերաններից շատերի հետ անցաւ Հայաստանի յունական բաժինը, ուր, շնորհիւ նախօրօք տարածուած իւր բարի համբաւի, հանդիպում է փառաւոր ընդունելութեան ոչ միայն հոգեւորականութեան, ժողովրդի ու նախարարների, այլ եւ երկրի սպարապետ Անտիոքի՝ կողմից: Թէոդոս (Բ) կայսրը տեղեկանալով վերջինից Ս. Մաշտոցի այցելութեան նպատակի մասին, հրամայում է ընդունել նրան «վայելուչ մեծարանօք» եւ արժանացնել ակումբիտ (ἀχοίμητος) հոգեւոր տիտղոսին: Չբաւականանալով սրանով, Ս. Մաշտոց թողնելով իւր աշակերտների մեծագոյն մասը, նոցանից աւագագունի, Ղեւոնդի հետ միասին Մեկտինէ քաղաքում տեղական եպիսկոպոսի Ակակիոսի հովանաւորութեան ներքոյ, ինքը

¹ Կորիւնի ձեռագրները ունին Անտիոխ եւ Անտիսի, արից պէտք է եզրակացնել, թէ զօրավարի անունն Անտիոք էր, մինչդեռ Խորենացու ազգեցութեամբ, որի մէջ (ԳԼ. 85) նոյն զօրավարը Անատոլ է կոչուած, Կորիւնի հրատարակիչները «Անտիոխ» ընթերցուածը Անատոլիս են սրբագրել: Կորիւնի Բ.րդ խմբագրութիւնն եւս «Անատոլ» ունի համաձայն Խորենացու:

Գերջանի եպիսկոպոս Գինթի եւ աշակերտներէ-
րից մի քանիսի հետ միասին ուղեւորուում է
կայսերական քաղաքը Վ. Պոլիս, որտեղ նա փա-
ռաւոր ընդունելութիւն եւ պատիւ է գտնում
Ատտիկոս պատրիարքից եւ Թէոդոս կայսրից,
լիովին կատարում են նրա խնդիրքը — Հայոց
լեզուն Հայաստանի յունական բաժնի դպրոց-
ներում, աւանդելու եւ այդ դպրոցների պահ-
պանութեան համար արքունիքից միջոցներ յատ-
կացնելու: Ս. Մաշտոցի մայրաքաղաքից վերա-
դարձը նմանուում է մի յաղթական գնացքի.
ամեն տեղ ընդունում են նրան արտակարգ
պատիւներով, իսկ Յունական Հայաստանի սպա-
րապետը, ստանալով Հայոց դպրոցներին վերա-
բերեալ կայսերական հրովարտակը, առանց
յապաղելու սկսում է հրամայուածը ի կատար
ածել:

Այս ամենից յետոյ Ս. Սահակ եւ Մաշ-
տոց հոգալով հայ դպրոցները զարգացնելու եւ
ճոխացնելու մասին նորանոր թարգմանութիւններ
րով, իրենց աշակերտներից երկուսին —
Յովսէփին եւ Եղնիկին — ուղարկում են
Ատրիք, որպէս զի նոքա այնտեղ զբաղուին
ասորի Ս. Հարց երկերը հայերէն թարգմանե-
լու: Այս թարգմանիչները, վերջացնելով իրենց
աշխատութիւնը եւ ուղարկելով այն Հայաստան
իւրեանց ուսուցիչներին, ուղեւորուում են Վ. Պո-
լիս, յոյն լեզուն ուսումնասիրելու եւ նրանից
թարգմանութիւններ անելու: Այս երկուսին,
մի քանի ժամանակից յետոյ, միանում են նոյն-



102
103
104
105

պէս ընկերներից երկուսը — Ղեւոնդ եւ
Վորիւնը, որոնք գալիս են կայսերական քա-
ղաքը նոյն նպատակով: Այստեղ միառժամանակ
մեալով եւ միասին գրական այլեւայլ աշխա-
տանքներով զբաղուելով մեր թարգմանիչները
վերագառնում են հայրենիք, իրենց հետ վերա-
նելով Ս. Գրքի ճշգրիտ օրինակները:
Բազմաթիւ գրուածքները եւ Նիկիոյ ուսումնասիր-
ժողովների կանոնները:



Ստանալով այս ձեռագիրները Ս. Սահակ
որ դեռ առաջ թարգմանել էր յունարե-
նից՝ մի շարք եկեղեցական գրքերի եւ Ս. Հարց
գրուածքների նորից սկսեց թարգմանել Եզ-
նիկի հետ միասին այն (Ս. Գիրքը), որ առաջին
անգամ Հայոց տառերի գիւտից անմիջապէս
յետոյ «փութանակի» թարգմանուած էր եւ
բացի դրանից նաեւ այլեւայլ գրոց բազմաթիւ
մեկնութիւններ:

Գառնանք խորենացուն:

Հայոց գրերի գիւտը պատմելուց յետոյ
խորենացին խօսում է Հայաստանի Պարսից
բաժնում բացուած դպրոցների եւ ուսման մա-
սին, «բայց ի յունաց մասէն» նկատում է
մեր պատմագիրը ոչ առանց նպատակի, «որք

1 «Հայոց տառերի գիւտից անմիջապէս յետոյ «Փու-
թանակի», կատարուած թարգմանութիւն (Ս. Գրքի),» ասե-
լով, թերեւս պէտք է հասկանալ Ս. Մաշտոցի ձեռքով
կատարուած այն թարգմանութիւնը Ատրիքէնից, որը յետոյ
նորից Ս. Սահակը աշակերտների հետ միասին նայել
ստուգել եւ խմբագրել է հիմնուելով յոյն ընտիր օրինակ-
ների վրայ:

ընդ ձեռնադրութեանն տուգանեցան վիճակեալ յաթոռն Կեսարու վարել յունական դպրութեամբ եւ ոչ ասորուով: Բայց այստեղ չէ որ խօսքը ոչ թէ ասորուոց, այլ հայոց գրերի մասին է, հապա ինչո՞ւ համար է այս առարկութիւնը: Այդ նրա համար, որ ստիպէ ընթերցողին ենթադրել, թէ ինչ որ արգելքներ եղան Բիւզանդիայի կողմից յունական Հայաստանում հայ դպրոցներ բանալու, մի հանգամանք, որ ինչպէս տեսանք պակասում է Կորինի մէջ:

Մեր հեղինակը մի այլ անպատեհ բան է հաղորդում Նոյն պատմութեան շարունակութեան մէջ. Ս. Գրքի թարգմանութիւնը, որ Ս. Սահակը կատարել է իբր թէ «ասորերէնից», խորենացին բացատրում է նրանով, թէ Հայոց կաթողիկոսը ձեռքի տակ չունէր Աստուածաշնչի յունական բնագիրը «քանզի, բացատրում է նա, նախ ի Մերութանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել գաշխարհս Հայոց՝ չտային Պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն ասորի» (գլ. ԾԳ):

Բայց մի՞թէ Մեհրութանը արդարեւ այրեց բոլոր յունական գրքերը մինչեւ վերջին օրինակը եւ մի՞թէ Բիւզանդիայի հետ ունեցած այնքան յաճախակի յարաբերութեան ընթացքում, Հայոց թագաւորի եւ կաթողիկոսի համար դժուար էր ձեռք բերել այնքան կարեւոր եւ անհրաժեշտ մի գիրք, որպիսին Ս. Գիրքն է:

Եւ այս այնպիսի մի ժամանակ, երբ Վաստիպուհ թագաւորը, Հայոց գրականութեան այդ հովանաւորը «օգտուում էր, խորենացու ասելով (ծա գլ.) թէ յունաց կայսեր եւ թէ Պարսից արքայի բարեկամութիւնից եւ վստահութիւնից, միաժամանակ վարելով Հայաստանի թէ Պարսից եւ թէ Յունաց բաժինների իշխանութիւնը»: Այս պատճառով ինձ թոյլ եմ տալիս ենթադրել, որ Մեհրութանի վրայ ծանրացող այս սոսկալի մեղադրանքը, հազիւ թէ ունենայ որեւէ մի լուրջ հիմք: Բաց ի դրանից՝ Նոյն խորենացու առարկած պարսիկ վերակացուների արգելումը յոյն լեզուն ուսանելու՝ սակաւ արժանի է հաւատոյ, որովհետեւ բոլոր յիշեալ ժամանակը Պարսկական Հայաստանում տիրում էին թագաւորներ, որոնք հովանաւորում էին հայոց Եկեղեցին եւ այնքան ինքնուրոյն էին, որ հազիւ թէ թոյլ տային այդքան խիստ եւ անարդար մի կարգադրութիւն իրենց երկրի մէջ: Եւ այդ ինչ «Պարսիկ վերակացուներ» էին Հայոց թագաւորների գոյութեան օրով: Յամենայն դէպս դժուար է ենթադրել, որ Ս. Սահակ կաթողիկոսը չկարողանար ձեռք բերել Ս. Գրքի գէթ մի օրինակ յունարէն լեզուով, եթէ կամենար:

Բաց ի սրանից այն վկայութիւնը, թէ Ս. Սահակը «ասորերէնից», է թարգմանել, առաջ է բերել Մովսէս այն նպատակով, որ մի առանձին նշանակութիւն վերագրէ յունարէնից թարգմանութեանը, ինչպէս քիչ ներքեւ կը տեսնենք:

Սակայն Խորենացին չէ շատանում միայն այս շեղումներով իւր աղբիւրներից, նա աւելի հետու է գնում: Այսպէս հակառակ Կորիւնի բացարձակ ցուցման, Խորենացին իրեն նիւթ պատրաստելու նպատակով, յետագայ թղթերի համար, հնարում է Ս. Սահակի ուղեւորութիւնը դէպի Յունական Հայաստան, որ բնաւ չկայ Կորիւնի մէջ: Այսու հանդերձ մեր պատմիչը, առանց քաշուելու, յայտնում է թէ Ս. Սահակին այնտեղ ցոյց են տալիս ոչ արժանի ընդունելութիւն, եւ թէ երկրի կառավարիչներն այնքան ատելութեամբ էին լցուած դէպի նա, որ չընդունեցին նրանից Ս. Մաշտոցի հնարած Հայոց գրերը: — Ահաւասիկ պատրաստ է արդէն միտումաւոր մի նիւթ, որի շուրջը բոլորուելու է ԾԻ, գլխում զետեղած բոլոր հինգ թղթերի բովանդակութիւնը:

Բայց սորա ինչ թղթեր են: Կորիւնի պարզ եւ անկեղծ պատմութիւնը Մաշտոցի Յունական Հայաստան եւ Կ. Պոլիս մայրաքաղաքը այցելելու մասին՝ Խորենացին հաղորդում է նամակների ձեւով Ս. Սահակից կայսեր, Պոլսոյ Պատրիարքին եւ Անատոլ զօրավարին եւ առաջին երկուսի պատասխաններով Հայոց կաթողիկոսին — աւելացնելով իւր կողմից անստոյգ մանրամասնութիւններ կամ ուղղակի անպատեհութիւններ, օրինակի համար, թէ Ս. Սահակ գանգատուում է կայսեր, որ նրան յունական Հայաստանում արժանաւոր ընդունելութիւն չեն ցոյց տուել եւ երկրի կառավարիչներն այնքան

էին ատում իրեն, որ չընդունեցին Հայոց գրերն եւ այլն, կամ թէ միեւնոյն Յունական Հայաստանի սպարապետ Անատոլին (նրան ուղղած թղթում) գրում է. «Նորհ ունի Աստուծոյ յաղագս գ.բեզ պատրաստել մեզ յապաւինութիւն, եւ թէնա՝ զուր առաքինութեան Մեսրոպայ յիշեալ... ոչ փոքր արար նոցա ընդունելութիւն», եւ այլն: Կամ թէ յիշենք կայսեր մեղադրանքը Ս. Սահակին թէ «արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զմաստից գիւտս»: Կամ զոր օր. Ատտիկոս պատրիարքի բերանը դրած անսովոր գովասանքը իւր նախորդի — Յովհան Ոսկեբերանի վերաբերմամբ, որը ինչպէս յայտնի է, նրա անձնական թշնամին էր եւ նրանից քիչ առաջ կայսեր հրամանով արտաքսուած էր մայրաքաղաքից: Նոյն իսկ «Աղբիւր Եկեղեցւոյ», արտայայտութիւնը, որ գործ է ածել վերջին թղթում Ոսկեբերանի վերաբերմամբ Խորենացին՝ առել է Սոկրատի Եկեղեցական Պատմութեան հայերէն թարգմանութիւնից, որ է. գարու վերջին է վերաբերում¹:

Խորենացու կամայական յաւելումներին պէտք է վերագրել նախ Ս. Սահակի թու Վարդանի² (որի մասին, ի դէպ է ասել, մեր պատ-

¹ Վաղարշապատի հրատ. 1897 թ. էջ 542 եւ 557, նոյն արտայայտութիւնը «Աղբիւր Եկեղեցւոյ», գործ է ածել Գրիգոր Նազիանզացին Ս. Աթանասի վերաբերմամբ: Տե՛ս ձեռ. վէճ. Մխիթ. Nr. 217, էջ 109բ:

² Կարեւի էր կրկին ցոյց տալ մի քանի կէտ թղթերի մէջ, որ մէջ է բերել Մովսէս, ըստ երեւոյթի,

մագիրն իսկոյն եւ եթ մոռանում է) Մաշտոցին ընկերակցելը, վերջինիս Վ. Պոլիս արած պատգամաւորութեան ժամանակ, որպէս զի այս միջոցով արժանացնէ նրան Բիւզանդական «ստրատելատ» տիտղոսին եւ լուծեամբ անցնի նրա ժառանգական եւ բարձրագոյն պաշտօնի, այն է՝ սպարապետութեան կամ ամբողջ Հայոց զօրքի Տրամանատարութեան մասին. — Բ-րդ Ս. Մաշտոցի Բիւզանդիայում «էկկլեսիաստ» տիտղոսի արժանանալը, հակառակ Վորիւնի վկայութեան, որ նրան «Ահուհիտ» տիտղոսն է վերագրում. — Գ-րդ ինչ որ «սուտակասպաս» մարդոց գրած Տրապուրական թղթերի վրայ յենուելը, որոնց շնորհիւ Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի աշակերտները Յովսէփի եւ Եղնիկ, Ղեւոնդ եւ Վորիւն իբր թէ «առանց Տրամանի վարդապետացն իւրեանց» եւ կարծես թէ հակառակ նոցա ցանկութեան ուղեւորուած են Վ. Պոլիս, եւ Գ-րդ, թէ ուղեւորուել են նոյն տեղն երկու այլ աշակերտներ Յովհաննէս եւ Արձան, որ Վորիւնից չէ հաստատուած:¹ Աւելորդ չէ նկատել, որ «յուլիարար ուղեւոր-

ող առանց նպատակի. այն է՝ նրա ձգտումը պաշտօնական վաւերացնելու նոյն իսկ կայսեր բերանով, հաւասարեցնել Հայոց կաթողիկոսին Վեսարիոյ արքեպիսկոպոսին. նրան որից կախուած էր սկզբում Հայոց եկեղեցին: (Համմ. նաեւ Դարագլանի քնն. Պատմ. Գ. էջ 219):

¹ Թէեւ Արձան յիշում է նաեւ Ղազարի Պատմ. մէջ (էջ 205) որպէս Մաշտոցի աշակերտ, սակայն սրա Բիւզանդիա ուղեւորուելու մասին պատմիչը ոչինչ չէ ասում:

եալ եւ ծուլարար դեզերեալ Պատարեցան ի Վեսարիա, — փոխ է առած Փիլոսից:¹

Սակայն այս բոլոր քմահաճ փոփոխութիւնները շատ աննշան են համեմատութեամբ այն տողերի, որ առաջ է բերում Խորենացին իւր ՎԱ գլխի վերջը: Նա ասում է, որ Ս. Սահակ եւ Մաշտոց ստանալով Պոլսից վերադարձած իրենց աշակերտներին² Ս. Գրքի ճշգրիտ ձեռագիրները, ձեռնարկեցին նոցա հետ (այսինքն՝ աշակերտներ) նորից թարգմանել արդէն մի անգամ «փութանակի թարգմանածը»³, բայց «քանզի, պնդում է Խորենացին զարմանալի համարձակութեամբ, անզէտը էին (վարդա-

¹ «Յաղագս նախահն» հոյ թարգմ. էջ 114, նաեւ տես Նորայր «Քննասէր», Բ. էջ 50:

² Ս. Գրքի ձեռագրերի հետ միասին աշակերտները ըստ Խորենացու ասութեան, Ս. Սահակին բերին նոյնպէս Վիւրեղ Աղէքսանդրացու եւ Պրոկղ Վ. Պոլսեցու Թղթերը, նաեւ Եփեսոսի ժողովի կանոնները: Խորենացին բաց է թողնում «Կանոնք Նիկիոյ ժողովին», որի մասին յիշում է Վորիւն, զրա փոխարէն աւելցրած են «Թուղթք», որոնց մասին ուղղակի չէ յիշում Ս. Մաշտոցի կենսագիրը (էջ 25), զրա հետ միասին առանց յարմարեցնելու նոցա աշակերտների Վ. Պոլսից վերադառնալու ժամանակին: Ինչ վերաբերում է Խորենացու Եփեսոսի ժողովի նկարագրին (կա գլ. սկիզբ) եւ նրա մէջ մասնակցող Ս. հարց ցուցակին, զորքա կազմուած են զլուստորապէս Սոկրատի հայերէն թարգմանութեան (հմտ. էջ 645—661) եւ Խորենացու ընդհանուր աղբիւր կազմող Կայսերաց պատմութեան հիմամբ:

³ Ընդունելով հանդերձ արժ. Հ. Ս. Պարոնեանի առաջարկութիւնը այս տեղի վերաբերմամբ «թարգմանեալն փութանակի», գործի էտ. թիւը շատ քիչ կը փոխուի (հմտ. Նորայր «Քննասէր», Ա. էջ 14):

պեաները) մերում արուեստի, ի քաղում՝ մասանց թերացեալ գործն գտանէր, վասն որոյ առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ զմեզ (sic) առաքեցին յԱղեքսան դրի այ՝ ի լեզու պանծալի ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան:»

Այսպիսով ուրեմն բանից դուրս է գալիս, որ Ս. Գրքի նաեւ երկրորդ թարգմանութիւնը, որ ձեռնարկած էր ըստ Կորիւնի վկայութեան, յունական ընտրելագոյն ձեռագրերի հիման վրայ, ոչ գոհացուցիչ ճանաչուեց, եւ Ս. Սահակ եւ Մաշտոց, որ իրենց աշակերտների հետ միասին, երկար տարիների ընթացքում պատրաստուել հին Ասորի եւ Յոյն օրինակելի գիրոցն երուում, իրենց ընդարձակ գիտութեամբ եւ անհերքելի փորձառութեամբ — միանգամայն անկարող են ճանաչում այս գործին, որովհետեւ նոցա բոլորին մի ինչոր «արուեստ», էր պահասում: Այդ պատճառով կարիք զգացուեց մարդիկ ուղարկել այս անգամ արդէն Աղեքսանդրիա, որպէս զի նոքա այստեղ ձեռք բերէին նախ քան թարգմանութեան ձեռնարկելն այդ արուեստը¹, եւ այսու հանդերձ ուղարկել ոչ այլ ոք, բայց միայն հէնց իրեն խորենացուն՝ պատմութեանը անյայտ իւր ընկերների հետ միասին: Ուստի ամենեւին զարմանալու էք, որ Գրքի վերջին գլխում խորենացին ուղղակի յայտնում է իւր մասին, ինչպէս մի աշակերտի, որ

զերազանցում է իւր ուսուցիչներին, (ով ուրախացի ընդ յառաջագիմութիւն աշակերտիս... մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս) եւ որը կրթուած է «ամենիմաստ արուեստիւ եւ կատարելագոյն յարմարութեամբ»:

Սրանից հետոն թուում է թէ այլ եւս անկարելի է երթալ: Գրչի մի շարժումով մեր պատմիչը վստահանում է ոչնչացնել այն մարդոց մեծագոյն վաստակներն, որոնց ըստ վկայութեան Կորիւնի եւ Ղազարի երախտագարտ է մի ամբողջ ազգ եւ իրեն վերագրել Ս. Գրքի արդէն գոյութիւն ունեցող յուն արէնից հայերէն թարգմանութեան պատիւը, այսինքն այն թարգմանութեան, որը նա առանց քաշուելու փորձում է վարկաբեկ անել:

Պէտք է դիտել, որ մեր պատմահօր ցուցմունքների հիմամբ կամ աւելի ճիշտ նոյն իսկ նրա այն վկայութեան ազդեցութեամբ, — թէ իրեն Ս. Սահակ եւ Մաշտոց Աղեքսանդրիա են ուղարկել միւս աշակերտների Բիւզանդիայից Ս. Գրքի ընտիր ձեռագրերով վերադառնալուց եւ Աստուածաշնչի հայ լեզուով երկրորդ անգամ թարգմանելուց յետոյ — կազմուել է խորենացու հետ ուղարկուածների, այսպէս կոչուած «երկրորդ թարգմանիչների» աւանդութիւնը: Սոցա թուին վերագրում են Գաւրի թ Անյաղթին, Եղիշէին, Ղազարին եւ այլոց: Սակայն այս աւանդութիւնը, չնայելով նրա շատ տարածուած լինելուն, նա մանաւանդ յետին պատմիչների մէջ, չունի բաւական հաստատուն

¹ Հմմտ. նաեւ Գարազաշ. Քննակ. Պատմ. Գ. էջ

Տիմբ: Կորիւնից, ինչպէս նաեւ Ղազարից մեզ յայտնի է Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի տասնեւութ¹ աշակերտների անունները, որոնցից միայն վնցի, այսինքն Յովսէփ Պաղնացու, Եղնիկի, Ղեւոնդի, Կորիւնի, Յովհան Եկեղեցացու եւ Խոսրովիկի մասին կարելի է հաստատապէս պնդել, թէ նոքա թարգմանիչներ, էին, այսինքն Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի ձեռքի տակ նոքա աշխատում էին հայերէն թարգմանելու Ս. Գիրքը եւ այլ եկեղեցական գրութիւններ²:

Ամփոփելով խորենացու պատմութեան այս մասը հարկաւոր է քննել նրա պատմութեան ԿԲ հռչակաւոր գլուխը: — Ուսուցիչների, իրեն եւ իւր ճանապարհորդութեան մասին:

Այս գլխի ամբողջ առաջին կէտը խճողուած է Փիլոնի երկերից առնուած առանձին բառերի եւ ասացուածների այնպիսի քանակութեամբ, որպէս խորենացու Պատմութեան եւ ոչ մի մասը: Մեր պատմիչն, ինչպէս մեզ յայտնի է

¹ Գարագաշեանի (Գ, 69) ուշագրութիւնից, որ յիշում է Ս. Սահակի եւ Մաշտոցի աշակերտների, ըստ նորա, աւելի հաւանական ցուցակը, խոստովել է ըստ երեւոյթին Ղազարի տեղեկութիւնը Արձանի (էջ 205) եւ Խոսրովիկի թարգմանչի մասին: Տես թուղթ Ղազ. առ Վահ. Մամիկ. էջ 609:

² Գեր. Միսրթեան իւր «Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի Մաների եւ հնագոյն (sic) աշակերտների մասին» յոգուածում («Հանդէս», 1902, Փետ. եւ Մարտ) իրապէս նոյն հայեացքն ունի այս խնդրի վերաբերմամբ, ինչ որ Հ. Չարբանալեան (Պատմ. հին հայ Պատմագրութեան) եւ ուրիշներ:

նրա աշխատութեան ուրիշ մասերից, քաջ ծանօթ է երբայցի Փիլիսոփայի երկերին (հայերէն թարգմանութեամբ) եւ ուր հարկն է կարողանում է գտնել Փիլոնեան պաշարից տպաւորիչ դարձուածք կամ որեւէ բանով աչքի ընկնող ասացուած եւ ներմուծել այն, իւր շարադրութեան մէջ կամենալով փայլել գիտնականութեամբ եւ եզականութեամբ: Ընդհանրապէս Մովսիսի գիտնական պաշարը փոխ է առնուած գլխաւորապէս Փիլոնից: Այդ պատճառով զարմանալի չէ հարկաւ, եթէ նա յափշտակուած է երբայցի փիլիսոփայով եւ համարում է նրան, ըստ երեւութին այն վսեմ կատարելատիպը, որի «պանծալի լեզուն եւ վերաբանութիւնը», պէտք է ընդունել իբրեւ բարձր օրինակ եւ այն ուսումնասիրելով յատկապէս Աղեքսանդրի աշուճում, Փիլիսոփայի հայրենիքում: Այսպէս ուրեմն Փիլոնեան բացատրութեան ձեւը չէ արդեօք այն «արուեստը», որի բացակայութիւնը Հայաստանում վերեւը շեշտում էր խորենացին եւ որին ինքը իւր թէ ձգտում էր հասնել, սակայն ոչ թէ բնաւ Եգիպտոս ուղեւորուելով, ինչպէս ինքն է պնդում, այլ ըստամենայն հաւանականութեան Փիլոնի երկերի յաճախակի ընթերցանութեամբ եւ այն հայ թարգմանութեամբ, հետեւապէս — առանց հեռաւոր ուղեւորութեան ձեռնարկելու կարիքի: Եւ ի զուր Գարագաշեանը խորենացու անհետեւութիւններն եւ ինքնագովութիւնը արդարացնելու նպատակով առաջարկում է ԿԱ, ԿԲ եւ ԿԸ գլուխները ներ-

մուծութիւն համարել, որ յետ ժամանակի մտորած է որեւէ մէկի ձեռքով խորենացու Պատմութեան մէջ. այս գլուխների սերտ կապակցութիւնը Հայոց Պատմութեան մնացած մասի հետ թէ լեզուի ու ոճի, եւ թէ գաղափարի եւ տրամադրութեան կողմից բոլորովին ակներեւ է:

Սկսեմք այն տեղից, որ մեր ուշագրութիւնը գրաւած ասացուածները. — «մերով արուեստի», եւ «ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբ», (գլ. ԿԱ եւ ԿԸ) եւ նոյնպէս համարեա ամբողջ նախագասութիւնը. — «զմեզ առաքեցին յԱղեքսանդրիա՝ ի լեզու պանծալի ի ստոյգ յօղանալ (այսինքն է հմտանալ, իւրացուցանել) ճեմարանին վերաբանութեան»,¹ (գլ. ԿԱ), — փոխ են առնուած փիլոսոփից: Ընդ սմին հետաքրքրական է գիտել, որ «մերով արուեստիւքն», ասելով երբայցի փիլիսոփան հասկանում է մարդկային արուեստը հակադրութեամբ աստուածայինի². — Իսկ աստուածութեանը,

1 Հազիւ թէ հարկ կայ ուղղելու այստեղ, խորենացու ընդգրկել ԿԱ գլխի վերջին բառը «վերաբանութեան», յատկացնելով յաջորդ ԿԲ գլխի խորագրին «վերջաբանի» իմաստով: (Նորայր, Հայկ. Բառքն. 1880, էջ 35. «Երկթեր հայերէն բառարանի» Զ. Պատկանեան Բ. 1884, էջ 42) — Վերաբանութիւն կարող է ընդունուիլ այն իմաստով, որը յատկացուած է նրան Հայկազեան բառգրքում, այն է «վերագոյն բան», «Հանձար», «խորհուրդ», «գիտութիւն» եւ ինչպէս գործ է ածուած «Պիտոյից» գրքում (տես բառ. Հայկազ. հ. բ. վերաբանութիւն):

2 Վասն այլբան. էջ 107. «... քանզի որք ինչ միանգամ մերով արուեստիւքն գործին, կատարեալք կայանան...»

երկնքի եւ երկրի Արարչին, Փիլոն վերագրում է ամենիմաստ արուեստ եւ կատարելագոյն յարմարութիւն¹, որը խորենացին վերագրում է իւր սեփական անձնաւորութեան: Իսկ ի լեզու պանծալի ի ստոյգ յօղանալ ասացուածը երբայցի փիլիսոփան գործ է ածում վերաբերմամբ թուչունների — ագուանների եւ թութակների²: Ճեմարան բառը պատահում է փիլոսոփի մօտ Վասն լինելութեան³ բան Գ, 16:

Այնուհետեւ ԿԲ գլխի սկզբում առաջ բերած համառօտ աստղաբաշխական համակարգութիւնը կարելի էր համարել փիլոսոփի երկերից մի որեւէ հատուած, եթէ նրա մէջ չլինէր այնպիսի անհեթեթութիւն, իբր թէ աստղերն իրենց լոյսը ստանում են լուսնից: Երեւում է, որ խորենացին յարմարեցրել է այդ, օգտուելով երբայցի փիլիսոփայի ասացուածներից: Այսպէս սակաւ գործածուող ընծուիլ բայը պատահում է օր. Վասն Բահանայից ճառում (էջ 181), Ելից (Բ, 104) — ուռնանալ բայը — Ելից ճառում Ա. 9 (չորեքտասաներորդին ուռնացեալ (լուսինն) ի ժողովոգոցն զգայութեանն լինի լուսալիր...): — Արփի, Արփային եւ Գօտի մեք գտնում ենք Վասն Տասնաբա-

1 Ելից Բ 90. «... ըստ կապողին զնօսա (զերկինս աստուածային բանին) ամենիմաստ արուեստիւ եւ կատարելագոյն յարմարութեամբ»:

2 Վասն Կենդան. էջ 128. «... Եւ բազմաց եւ այլոք դեպ է լեզու ճշգրիտ եւ ստոյգ յօղանալ եւ այնօցիկ որք ոչ յոյժ ընդէլքն»:

3 «... Արիստոտելէս եւ սրբ ի ճեմարանէն»...

նեայ ճառում (էջ 220) եւ Ելից (Բ, 89, 90, 113): — «Յաւիտախաղաց շնորհ» Վասն ըրագնաց ճառում (էջ 201, նոյնպէս 206 յաւիտախաղաց աղբիւր): — ըստ հարաւ հային մասանցն պարսպածեալք, պատահում ենք վասն Ելից ճառում Բ 79. (մորթակների վերաբերմամբ): — Առ լցեալ ամենազան պտղովք — վասն ըրագնաց ճառում (էջ 201), նոյնպէս Հայկազ. ըստ. հ. բ. ամենազան եւ վասն կենդան. (էջ 129): — Նեղոս ոչ պահպանութիւն միայն, այլ եւ կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց եւ յինքնէ առողմամբ տէր գոլ՝ պատահել չորութեան եւ խոնաւոյ՝ առ երկրին գործաւորութիւն — վասն ըրագնաց ճառում, ուր էջ 217, կարգում ենք զնշելեացս փող... բնաւորեալ եմք արտաբուստ ոռոգանել, այսինքն՝ «մեր շնչառութեան գործարանը ի ընէ ոռոգւում է արտաբուստ», սորա հետ միասին աւելորդ չէ գիտել, որ փիլոնի բնագրի մէջ ըստ մի ձեռագրի «որոգանել» է, իսկ ըստ միւսի «առողանել», այսինքն Խորենացու գործածած ձեւը: Վերջապէս Աղեքսանդրիայի եւ լճի նկարագրութեան ամբողջ առաջին մասի վեց տող հատուածը, այն է, «որ ի լճէն բերանք արձակին ի ծովն եւ որք ի ծովէքն մօտելոյ (ձեռ., վար. մօտի ելոյ) որ ելանեն ստէպ ստէպ սղոխք օդոյ՝ անօսրունք այն որ ի ծովէն, եւ թանձունքն որ ի լճէն, որոց խառնուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ», ամբողջապէս առած է

Վասն տեսական կենաց կամ որ նոյն է Վասն Եսսեանց ճառից (էջ 11—12): Այստեղ փիլոն յիշելով Եգիպտոսը մատնացոյց է անում Աղեքսանդրիայի շրջակայքում գտնուած մի վայր, ուր, որպէս ամենից յարմարագոյն տեղում, ամեն կողմերից ժողովում են բնակուելու առաքինի մարդիկ, այսինքն տեսական փիլիսոփայութեան հետեւողները: Այս բնակավայրը գտնուում է Մէօրիդեան լճից վեր, բարձրավանդակ դաշտում, որ միանգամայն յարմար է թէ ապահովութեան եւ թէ օդի քաղցրախառնութեան կողմից, որովհետեւ ապահովութիւն են ներկայացնում շրջակայ անասունների փարախներն եւ գիւղերն, «զառ ի յաւըն քաղցրախառնութիւն որ ի լճէն բերանքն արձակին ի ծովն, եւ որք ի ծովէքն մատի ելոյ որ ելանեն ստէպ ստէպ սղոխք սաղոյ, անասրունք այն որ ի ծովէն, եւ թանձունքն որ ի լճէն, որոց խառնուածն առողջագոյն հաստատութիւն կենաց գործէ»:

Փիլոնից են փոխ առած ԿԲ գլխի վերջին խօսքերը «յանգեալ արուեստից ինքնացայ», տես Վասն այլաբան. (էջ 107, որք... մերով արուեստիւքն գործին, կատարեալք՝ կայանան... իսկ որք... մահացութեամբ հանձարոյ Աստուծոյ յանգեալք լինին, դարձեալ շարժին) եւ վասն ըրագնաց ճառում (էջ 205), ինքնանալ — փիլոնի թարգմանչին յատուկ բառերից մէկն է:

Փիլոնից յետոյ, Աղեքսանդրիայի նկարագրութեան կատարելութեան համար, Խորենա-

ցին դառնում է իւր ոչ պակաս սիրած աղբիւ-
րին — կեղծ Արխիթենէսի Պատմութիւն
Աղերսանդրի: Փոքր ինչ վերն, այնտեղ, ուր
ասուած է Աղեքսանդրիայի «անձնուագործ
պարսպի», այսինքն Նեղոսի մասին, Մովսէս
փոխ է առել այս ասացուածն Աղեքսանդրի
պատմից, պարսպ ստելով հասկանում է
— գետեր (պարսպ անձեռագործս ունելով...
քանդի գետք են շուրջանակի, էջ 47): Այնու-
հետեւ խորենացու ամբողջ նկարագրութիւնը
14 տող, այն է «Սորա առաջին այժմ ոչ ան-
ցեալ նստի Պղոտնիոս հնգակատար գագա-
թամբն զանսպառ աշխարհ պատելով, այլ
Մարկոս աւետարանական քարոզութեամբն, եւ
ոչ վիշապազին դիւցաղնականաց գերեզմանք,
այլ սրբոցն վայելչանան վկայարանք: Եւ ոչ ի
քսան եւ հինգն Տուրի տոնի աղճատանք զբեռ-
նաբարձս պսակելով գրաստս, եւ պաշտօն տա-
նել լորտուաց եւ աթերաց առնել բաշխումն,
այլ ի մետասաներորդի նորին Տուրի՝ յայտնու-
թեան Տեառն կատարի տօն, զյաղթող նահա-
տական գովել եւ օտարաց առնել ընդունելու-
թիւն եւ յաղքատս դուրս: Եւ ոչ զոհել կար
դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի զարիւնն
մատուցանել պատարագ. եւ ոչ ինդրել հրա-
ման պատասխանելոյ ի սանդարամետապետէն
Պրոտեիագայ» — կազմուած է տեղ-տեղ բա-
ռացի կեղծ-Արխիթենէսի հատուածներէից (էջ
36 — 46) ինչպէս որ այդ քանիցս դիտած են
խորենացու թարգմանիչները: Յառաջ բերենք

այս հատուածները: (Ամոն Աստուածը, երեւա-
լով Աղեքսանդրին երազում ասում է նրան)
— «Հինեա քաղաք նշանաւոր գեր ի վերոյ
Պրոգիագայ կղզւոյ, որոյ առաջոյ անցեալ նստի
յաւիտեան Պղոտնիոս ինքն թագաւորելով
հնգակատար գագաթամբք զանսպառ աշ-
խարհաւ պատեալ»: — «...Եւ հաւանեալ
Աղեքսանդրոս հրաման ետ ճարտարապետացն
որովք կամին չափով զքաղաքն շինել: Եւ նոքա
տեղագրեցին զերկայնութիւն քաղաքին ի Դրա-
կոնտիայրստ տապոսիբական գերեզմանին...»
(էջ 38)... — «Ի վերայ լերին միոյ բարձու
եկեալ բերին զնա, այդ որ այժմ կոչի ղիւց-
ազգի գերեզման...» (էջ 39) — «Եւ
հաստատեալ դրան դիւցաղնս այսորիկ, կան-
գնեալ եգ զնա ի վերայ խոյակին. եւ ելին ի
նմանէ բազում օձք եւ սողելով մտին ի մուտս
յահա եղելոց տանցն. քանդի զքաղաքն դեռ
եւս անդր լինելով Աղեքսանդրոս շինէր ի
տուրի քսան եւ հինգէն, եւ զնոյն ինքն զմե-
հեան օձին. ուստի զօձս զայսոսիկ պաշտեն բա-
րապանք իբրեւ զբարի դեւս մտեալ ի տունս
զի ոչ են թիւնաւորք իբր գազանք, այլ զթիւ-
նաւոր գազանս ի բաց հալածեն: Եւ զօհք մատ-
չին նմա իբրեւ վիշապազին. եւ պսակեն եւ
զգրաստս ամենայն բեռնաբարձս, ի հան-
գիստ նոցա մատուցանելով յաւուրն յայնմիկ.
վասն զի գործակիցք եղեն բեռնաբարձք լինե-
լով ի շինութիւն մեծատեսիլ քաղաքին: Եւ
արքայն հրամայեաց պահապանացն ցորեանս

տայլ. որ եւ նոցա աղացեալ զցորեանն եւ աթե-
րայ արարեալ ետուն բնակչացն իբրեւ ի զուար-
ճարար յուրախութիւն. ուստի մինչեւ ցայժմ
այս օրէնք պահին առ Աղէքսանդրացիս ի
տուրքի քսան եւ հինգ, զբեռնաքարձ գրաստու
ամենայն պսակել, եւ զոնս մատուցանել
աստուածազինն, եւ պաշտօն կրել լոր-
տուացն՝ որ խնամ տանին տանն, եւ բաշխումն
տունել աթերացն»։ (էջ 41) «...Եւ երեւե-
ցաւ նմա ի քուն յայտնագոյն Սարապիս եւ
ասաց. Աղէքսանդրէ, մոռացմունք եղեն քեզ
մինչ առնելով զոնս կացեր յաղօթս. ոչ գու-
ասացեր ո՞ր արդեւք ես հոգածու նախանամող
երկրիս այսորիկ եւ զանդորտ աշխարհ յակա-
նելով, առ ընկալ զպատարագս զայս եւ օգնա-
կան ինձ լեր ի պատերազմունս. եւ յանկար-
ծօրէն արծուի խոյացաւ ի վայր, եւ զփորոտիսն
եդ ի վերայ բագնին. ոչ էր քեզ գիտելի զի
ես եմ ամենեցուն հոգածու եւ նախանամող
աստուած»։ (էջ 43) «...Եւ ի խնդրել մեր
զնա եւ յաղաչել զաստուածսն թէ ո՞ր արդեւք
փախաւ թագաւորն. նա ետ պատասխանի որ
ի սանդարամետս ի սարապեան մեհենին ա-
տուածն այսպէս. փախուցեալ թագաւորն ձեր
եկեսցէ դարձեալ յեգիպտոս ոչ ծեր որպէս եւ
էրն, այլ մանուկ մատաղ» (էջ 46)։

Առանց օգտուելու չմնաց նաեւ Գրիգոր
Նազիանզացին, որից փոխ են առած հետեւեալ
բնորոշ ասացուածները. — «Թեթեւակի ընդ
խորս դիւանին Եգեսիոյ նաւեալ» (Խորենա-

ցին իւր մասին է ասում), տես Գրիգ. Նազիան-
զացու «Ի Բասիլիոս» (գրչ. Վիեն. Մխ. Թ. 217,
էջ 146) «Թեթեւագոյնս նաւէր (Բասիլիոս)
ընդ կենցաղոյս ծով» եւ «Աղէքսանդրիա է
շինեալ քաղաք քարեժամանակ...» (տես
Գրիգ. Մազ. «Առ որս» Ը.) «զհարդ ոչ ասես
եւ զքարեժամ գիր քաղաքիդ»։

Ինչ վերաբերում է ԿԲ գլխի վերջին տո-
ղերին, որոնք բովանդակում են հեղինակի այ-
ցելած երկրների համառօտ յիշատակութիւնը,
հարկաւոր է դիտել, որ թէ՛ այս վերջինն եւ
թէ՛ ընդհանրապէս մեր պատմագրի ճանապար-
հորդութեան ամբողջ ծրագիրը խիստ յիշեցը-
նում է ինձ Անանիա Շիրակացու «Ինքնակենսա-
գրութիւնը», որի երկերին խորենացին ինչպէս
մեզ յայտնի է բաւականաչափ ծանօթ էր։
Անանիան մանրամասնօրէն պատմելով իւր ու-
սուցչի իւր ժամանակին ծանօթ Տիւփիկոս Տրա-
պիզոնցի գիտնական յոյնի մասին, ի միջի այլոց
պատմում է հետեւեալը. երիտասարդութեան
ժամանակ Պարսից դէմ եղած պատերազմում
ծանր վիրաւորուելով եւ զրկուելով իւր հարս-
տութիւնից, Տիւփիկոսն ուխտեց, որ եթէ առող-
ջանայ, զբաղուի ոչ աշխարհային, անցողական
հարստութիւն ժողովելով, այլ միայն հոգեւոր,
այսինքն՝ նուիրուի գիտութեան։ Աստուծոյ կամ-
քով նա առողջացաւ եւ այս պատճառով ձեռ-
նարկեց մի երկար ճանապարհորդութեան, միտքը
գիտութեամբ ճոխացնելու մտքով։ «...Եւ պար-
գեւեաց Աստուած զննդրուածս իմ (Վիեն.

ՄԽ. Թ. 30 = Գ. ձեռ. վար. — զհայցուածսն) գնացի (վար. ձեռ. գնաց) (յ Ա ն տ ի ո ք ա) ողջացեալ ի (վար. ձեռ. սուրբ) քաղաքն Երուսաղէմ եւ (վար. ձեռ. արարեալ անդ ամիս մի) անտի յԱղեքսանդրիայ եւ (վար. ամս երիս կոյր ի հրահանգի եւ ապա չոգաւ) անտի ի Հոռոմ՝ եւ կացեալ (վար. ձեռ. եւ արարեալ անդ կարեւոր) ժամանակս, դարձայ (վար. ձեռ. գայ) ի Կոստանդնուպոլիս եւ գտի վարդապետ Աթենա Իմաստասիրաց քաղաքին այր երեւելի եւ կացի առ նա յուսման ամս ոչ սակաւ (վար. ձեռ. եւ գտանէ անդ այր երեւելի, որ վարդապետ էր Իմաստասիրաց քաղաքին եւ եկաց առ նմա... ոչ սակաւս)», եւ ապա կատարեալ իմաստութեամբ դառնում է իւր հայրենիքը (Տրպաղոն): Այնտեղ նա սկսում է սովորեցնել եւ դասախօսել: Կարճ ժամանակից յետոյ, մեռնում է նրա ուսուցիչը, չգտնելով նրա աշակերտների մէջ արժանաւոր յաջորդ, կայսրը դեսպաններ է ուղարկում Տիւքիկոսի մօտ՝ հրահրելով նրան Կ. Պոլիս, սակայն նա հրաժարուում է այդպիսի մեծ պատուից, պատճառաբանելով իւր տուած ուխտը...:

Եղջը չէ՞ ներկայացընում Խորենացու ճանապարհորդութիւնը: — Եգեսիայից (Ասորիք) նա գնում է սուրբ տեղերը (Երուսաղէմ) ուխտ եւ մնում է սակաւ ժամանակ Պաղեստինում ի հրահանգս. այստեղիցնա ուղեւորւում է Եգիպտոս — Աղեքսանդրիա, յուսանել

զզօրութիւնս պէսպէս իմաստից ի նոր Պղատունէն, յիմն ասեմ վարդապետէ (բացատրում է Խորենացին), որում ոչ արժան¹ (վար. անարժան) գտայ աշակերտ. եւ ոչ անկատար վարժամբ յանգեալ արուեստից ինքնացայ», Յանկանալով Ելլադա նաւել, անյաջող հողմերի պատճառով մեր պատժին Խտալիա է ընկնում. մնալով մի փոքր ժամանակ Հոռովմայեցոց քաղաքում, նա Ելլադայի եւ Ատտիկէի վրայով Աթէնք է գնում կարճ ժամանակով, այնտեղից Բիւզանդիա, տոջօրուելով իւր հայրենիքը տեսնելու ցանկութեամբ:

Գժուար է երեւակայել, որ Խորենացու պէս հետաքննին եւ ուսումնասէր մարդը, սահմանափակուէր այսքան համառօտ ակնարկներով այնպիսի հետաքրքիր վայրերի մասին, ինչպիսիք են Երուսաղէմը, Հոռովմը, Աթէնքը, եթէ յիրաւի նա այցելել է նոցա: Ինչ որ նա գտել է գրականութեան մէջ ուշագրութեան արժանի Եգիպտոսի եւ Աղեքսանդրիայի մասին, նոցանից օգտուել է, թող որ դոքա լինին փլուղնի փիլիսոփայական ճառերը կամ Աղեքսանդրի առասպելական պատմութիւնը: Չունե-

1 Ի գեպ վատ չէր լինի ուղղել Աենեսիկեան հրատարակութիւններում ընդունուած Խորենացու բնագրի, իրեն հեղինակին վերաբերեալ, «ոչ արժան գտայ աշակերտ» — ընթերցուածքը: Հայոց Պատմութեան մի քանի ձեռագիր օրինակներ, դոցա թուումնաեւ Լամբրոնացունը, ունին — ոչ անարժան գտայ — ընթերցուածքն, որ ըստ իս աւելի համապատասխանում է մեր պատմահօր ինքնագով ընաւորութեանը:

նալով համապատասխան նիւթ կամ նկարագրութիւն իւր ճանապարհորդութեան մնացած վայրերի մասին, մեր պատմագիրը բաւական է համարել նոցա լոկ յիշատակելը՝ հետեւելով, թերեւս Անանիա Շիրակացուն:

**ԱՐՏԱՅԻՐ ԵՒ ԱՐԹԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ
ԱՆԿՈՒԹՂ ՀԱՅՍՏԱՆՈՒԻՄ**

Նախապէս մի թուուցիկ հայեացք ձգենք Ղազար փարպեցու նկարագրած դարեջրջանի վրայ, որպէս զի կարողանանք ստուգել խորենացուն:

Պարսից Շապուհ թագաժառանգի անյաջող մարզպանութիւնից յետոյ, որը սպանուեց Տիգրանու մարտիկների ձեռքով, Հայերը խնդրում են հէնց նոր գահակալած Պարսից Վուամ արքային (հինգերորդին, 420—438) թագաւորեցնել իրենց վրայ Վուամշապուհի որդի Արտաշէսին՝ Արշակունեաց ցեղից, որ եւ նա կատարում է: Արտաշէս շատ երիտասարդ էր եւ կնասէր, ուստի իւր անառակ կեանքով յարոյց իւր դէմ հայ նախարարներին: Սոքա անկաբող լինելով այլ եւս տանել՝ դիմեցին, վերջապէս, Ս. Սահակ կաթուղեկոսին բողբոյժով, խնդրելով ազատել իրենց անառակ թագաւորից. հակառակ դէպքում, սպանուում էին նոքա դիմել Պարսից թագաւորի օգնութեան: Սահակ համաձայնուելով նոցա հետ Արտաշէսի անբարոյական կեանքի վերաբերմամբ, այնու ամենայ-

նիւ երկիցս ընդարձակ խօսակցութեան ընթացքում¹ մատնացոյց արաւ այն ահագին վտանգը, որ կարող էր սպառնալ նոցա բռնելիք անխոհեմ ընթացքին (այն է՝ խնդրել Պարսից թագաւորին գահընկէց անել Արտաշէսին եւ իրենց համար ուրիշ թագաւոր նշանակել): Նա ասում է նոցա. «Պարտ է ի վերայ մեղուցեալ անգամոյն խնդրել զողորմութիւն, եւ ոչ անօրինաց մատնելով ի ծաղր եւ յայպանումս տալ զսուրբ խորհուրդ հաւատոյս մերոյ... զի թէպէտ եւ մեղաւոր է, այլ դրոշմնալ է սուրբ աւազանին ծննդեամբ... Արդ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվերաւոր եկեղեցւոյս իմոյ ոչխար, փութայի եւ ոչ յապաղէի... Զի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի տանել զհաւատացեալս յաղագս մեղաց առաջի անհաւատից՝ ոչ հաւանիմ... Զի թէպէտ եւ իցէ պոռնիկ, այլ զկնիք հօտին քրիստոսի կրէ յանձին իւրում, զիմացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ եւ հեթանոս զեղի՝ այլ ոչ կրակապաշտ, տկարացեալ է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց...»:

Բայց հայ նախարարները չհամոզուեցին Ս. Սահակի ապացոյցներով եւ բացարձակապէս յայտնեցին նորան. «զի ոչ լուար բանից մերոց եւ ի միաբանութենէ մերմէ զանձն քո ի բաց մերժեցեր, գիտասջեր, զի որպէս եդեալ է ի մօտ չթագաւորել ամն, եւ այլ եւս ի վերայ

¹ Ղազար ֓արպեցի, էջ 63-63.

խոստանամք չքահանայանալ եւ ոչ քեզ առ յերկարս ի վերայ աշխարհիս մերում...»: — Եւ զայրացած դուրս ելան նոքա կաթուղիկոսի մօտից ու միաբանուելով ուղեւորուեցին Պարսկաստան Պարսից արքայի դուռը: Կոցա հետ էր նաեւ ոմն Սուրմակ երէց Բզնունեաց գաւառից, Արծկէ գիւղեց, որին մի քանի հայ նախարարներ խոստացել էին քահանայապետական աթոռը Սահակին աթոռնկեց անելուց յետոյ, այդ պատճառով նա Սուրմակ ամենից շատ ամբաստանեց աղտեղի խօսքերով Արտաշէս թագաւորին: Սակայն Ղուամ արքան, որին այս լուրերն արդէն հասել էին, չէր կամենում նոցա հաւատալ, մինչեւ որ, ինչպէս նա էր ասում, չներկայանար ինքը դատապարտուածը, այսինքն Արտաշէսը. ուստի մարդիկ ուղարկելով՝ իւր մօտ հրաւիրեց նրան եւ Սահակ կաթուղիկոսին: Երբ Արտաշէսը հասաւ դուռը՝ Ղուամը կանչեց նրան իւր մօտ եւ հարցրեց հայ նախարարների դժգոհութեան պատճառը: «Ամենեւին ոչ գիտեմ, պատասխանեց նա, զինչ խօսին եւ չարախօսեն դոքա զինէն, այլ որպէս սովոր են ի բնէ թշնամանել զտեարս իւրեանց...»: — Ապա Պարսից թագաւորը կանչեց իւր մօտ Սահակին, որին յարգում էր ամենից առաջ նրա բարձր ծագման համար¹ (Սուրէնի Պահլաւ ցեղից), իսկ յետոյ չէ՛ որ անհաւատների առաջ Աստուած ցոյց է տալիս իւր Ս. ծառաներին յարգանքի

¹ Համեմ. Մ. Խոր., Գ. ԾԱ.

ու պատուի արժանի, — եւ հարցրեց նրան երես առ երես, թէ ինչ բանի մէջ են իսկապէս մեղադրում հայ նախարարները Արտաշէսին: Սակայն կաթուղիկոսը բացարձակապէս մերժեց տալ որեւէ բացատրութիւն այս մասին: Այն ժամանակ Ղուամ, որն արդէն վճռել էր վերջ դնել Արշակունեաց թագաւորութեանը Հայաստանում, յանձնեց իւր հրամանատար Սուրէն Պահլաւին, որը ազգակցութիւն ունէր Սահակի հետ, բարեկամական խորհուրդներով համոզել կաթուղիկոսին համաձայնուելու հայ նախարարների հետ եւ միացած նոցա հետ չարախօսել Արտաշէսի դէմ: Սրա փոխարէն Սահակին խոստանում էին մեծ պարգեւներ եւ հարուստ ընծաներ կաթուղիկոսական աթոռի հետ միասին. եթէ նա այս մերժէր յայտնած էր նրան, որ նա կը զրկուի ոչ միայն աթոռից, այլ եւ յարբունիս կը գրաւուին կաթուղիկոսական տանը պատկանող բոլոր հողային կալուածները: Բայց Սահակ անդրդուելի մնաց այս բոլոր հրապոյրների առաջեւ եւ միայն յայտնեց Սուրէն Պահլաւին, թէ «Ես զԱրտաշէսի զայդպիսի ինչ զվատթարութիւն ոչ գիտեմ... զի թէպէտ եւ ըստ սրբասէր մերոց օրինաց արժանի է եւ անգոսնելոյ, այլ ըստ հրամանի ձեր աղտեղասէր օրինացդ՝ գովութեան արժանի է եւ մեծարանաց...»:

Երբ այս մասին տեղեկացրին Պարսից թագաւորին, նա չսփազանց զայրացաւ եւ հրամայեց հարցնել հայ նախարարներին ու

Արտաշէսին բազմամբոխ ատենի առաջեւ: Կախարարները թշնամաբար տրամադրուած լինելով իրենց թագաւորի դէմ, բնականաբար ամէն կերպ աշխատում էին իրենց աղտեղաբանութիւններով սեւացնել նրան. նա թէեւ մերժում էր այդ ամէնը, սակայն դատախազները նրան հաւատ չէին ընծայում, որովհետեւ նորա արդէն վճռել էին յանձին Արտաշէսի Արշակունեաց հարստութեանը վերջ դնել: Միեւնոյն ժամանակ ամբաստանողներից (Հայերից) մի քանիսն ասում էին «Թէ բնաւ զի՞ իսկ եւս պիտոյ է թագաւոր... այլ իշխան Պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ...» — լսելով այս եւ ուրախանալով Վրամը հրամայեց անյապազ զրկել Արտաշէսին թագաւորական իշխանութիւնից եւ Ս. Սահակին կաթողեկոսական աթոռից, յարքունիս գրաւելով կաթողիկոսական աթոռի բոլոր կալուածները, եւ Հայաստան ուղարկեց մի պարսիկ մարզպան:

Եւ այսպէս Հայոց նախարարները հասան իւրեանց նպատակին եւ ճոխ պարգեւատրուելով Պարսից թագաւորից վերադարձան իրենց երկիրը եւ իւրեանց խոստման համաձայն յաջողեցրին Սուրմակին կաթողիկոսական աթոռը: Բայց շուտով շորհիւ քանի մի զօրքերի հրամանատար իշխանների ընդդիմադրութեան նախարարները հրաժարուեցին Սուրմակից եւ ձգեցին նրան աթոռից Մախարարների ինդրանօք պարսից թագաւորը տուաւ նոցա

մի այլ կաթողիկոս, ոմն Ասորի Բրքիշոյ, որը Հայաստան եկաւ իւր անառակ գաւառակիցների ընկերակցութեամբ, հետը բերելով տանտիկիւններ: Չկարողանալով հանդուրժել Բրքիշոյի ու շրջապատողների անարժան եւ զեղև կեանքին՝ հայ հոգեւորականութիւնը ու ժողովուրդը դիմեցին Պարսից արքային, խնդրելով՝ տալ իրենց կաթողիկոս մի անձն, որի բարքն ու կենցաղը համաձայն լինէին Հայոց աշխարհի եկեղեցական բնիկ կանոններին եւ կարգերին: Թագաւորը յարգելով նոցա խնդիրը կարգեց կաթողիկոս ոմն Շամուէլ, նոյնպէս Ասորի, որը Հայաստան գալով սկսեց նոյնպիսի կեանք վարել, որպիսին նրա նախորդը: Այն ժամանակ ժողովուրդին աւագ նախարարները, հոգեւորականութիւնը եւ ժողովուրդը Սահակի մօտ եւ դիմելով նրան՝ աղերսալից աղաչում էին, որ նա ներքէր իրենց յանցանքները, մոռացութեան տար իրեն հասցրած չարիքը եւ որպէս օրինակ համբերատարութեան, նման իւր նախահայր Ս. Գրիգորի, համաձայնէր վերստին ընդունել վաղուց ի վեր ժառանգաբար իրեն պատկանող հայրապետական աթոռը, իսկ Պարսից դրան համաձայնութիւնը եւ հաստատութիւնը իրենք էին խոստանում յաջողեցնել:

Սահակ խաղաղութեամբ պատասխանեց. «Թէ ես ոչ ուսայ յերկնաւոր արարչէն եւ ի վարդապետէն ֆրիտոսէ բարկանալ ումեք... Այլ քահանայանալ ի վերայ տիրանենք եւ

տիրասպան եւ մատնիչ ժողովրդոց ոչ կարեմ... Արդ դուք ձեզն գիտէք, եղէք վրէժխնդիր թագաւորին ձերոյ գործոց, եւ զայրացեալք նմա՝ զսուրբ հաւատ ուխտին մերոյ մատնեալ, ծաղը ետուք առնել անօրինացն: Ի՛նչ զիս արդեօք ջանայցէք մխիթարել, եւ կամ ո՛ւմ թախանձեցուցանէք զիս քահանայանալ... Երթայք յինէն ի բաց, եւ թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց, զոր տեսանեմ աչք մտացս ի զօրութենէ վերին ցուցակութեանն... »

Ժողովը լսելով Ս. Հայրապետի այս խօսքերը զարհուրած սկսաւ արտասուել: Եւ այնուհետեւ նոցանից ոչ ոք չէր համարձակուում խօսել նրա հետ այս խնդրի մասին: Սահակ դրանից յետոյ միանգամայն հրաժարուում է աշխարհային ամէն հոգսերից եւ անձնատուր է լինում մշտական աղօթքների, չգաղարելով սակայն ուսուցանել այն բազմաթիւ եպիսկոպոսներին եւ քահանաներին, որոնք դիմում էին նրա անսպառ գիտութեան, ուր եւ նա գտնուէր — մայրաքաղաքում, թէ իւր ամարանոց գիւղում: Ապրելով շատ տարիներ եւ հասնելով խորին ծերութեան խաղաղութեամբ վախճանուեց Բագրեւանդ գաւառի Բլուր գիւղում, Յազկերտ Բ-ի թագաւորութեան առաջին՝ տարւայ սկզբում (438—457)՝ Նաւասարդ

¹ Եւ ընդունում եմ նորայրի առաջարկութիւնը (Քնն. Կորիւնի մասին էջ 388) համաձայն Կորիւնի (էջ 29), Ն. ամր Բ. Յազկերտի...

ամսի երեսունին ցերեկուայ երեք ժամին...: Սրբի նշխարները նորա ազգական Մամիկոնեանները տարան իւր սեփական Աշտիշատ գիւղը Տարօն գաւառում եւ հանգստարան շինելով ամփոփեցին մէջը «պարկեշտ մարմինը», իսկ վերջերը կանգնեցրին վրան մի հոյակապ եկեղեցի... եւ վանք, ուր ամէն կողմերից ուխտաւորներ էին դիմում, նրա մահուան տարեգարձի օրը՝:

Թէեւ Ղազար ուղղակի չէ ասում թէ Հայաստանում Շամուէլի մահից յետոյ ո՞վ էր կաթուղիկոս, բայց նրա պատմութեան մի տեղից (էջ 106.) կարելի է մակաբերել, որ այս բոլոր ժամանակը եկեղեցին կառավարում էր Մաշտոց, իսկ նրա մահից յետոյ, որ եղաւ Վաղարշապատում Մեհեկան ամսի 13-ին, Սահակի մահից վեց ամիս անց, հայրապետական աթոռը բռնեց նրա աշակերտ Յովսէփ Վայոց ձորից, իւր ուսուցչի կամքի համաձայն: Իսկ Ս. Մաշտոցի մարմինը իշխան վահան Ամատունին տեղափոխեց իւր սեփական գիւղը Օշական եւ հողին յանձնեց մեծ հանդէսով: Նոյն իշխանի ձեռքով շինուեց նրա գերեզմանի վրայ մատուռ²:

Ահաւասիկ թէ ինչպէս է նկարագրում Հայաստանի քաղաքական վիճակը, Ե դարու քսանական եւ երեսնական թուերի վերջերը,

¹ Ղազար Փարպեցի էջ 102-105:

² Ղ. Փարպեցի էջ 105-106. Սահակի եւ Մաշտոցի մահուան մանրամասնութիւնները Ղազար, իւր ասելով քաղում է Կորիւնից (էջ 25-29):

այդ դարու միակ պատմիչը, Ղազար, որին պէտք է կցել նաեւ Կորիւնի արժանահասակ պատմութիւլը Սահակի եւ Մաշտոցի մահուան մասին:

Այդ տեսնենք՝ ինչպէս է օգտուել նոցանից Խորենացին:

Իւր Պատմութեան Գ գրքի վեց գլուխներ (ԾԳ եւ ԿԳ-ից մինչեւ ԿԷ) Տիմք գնելով Ղազարի վերոյիշեալ պատմութեանը, Մովսէս մշակել է այն ըստ իւր ճաշակի, ամէն կերպ աշխատելով զանազանուել իւր աղբիւրից, մինչեւ իսկ եթէ դրա համար հարկ լինէր ասել եւ անհետեւ թուականներ եւ գիմել մի շարք մտացածին դէպքերի:

Ա. Սահակի թողան Վարդանի (Մաշտոցի հետ) պատգամաւորութիւնը — Բիւզանդիոն, թոյլտուութիւն ստանալու յունական բաժնում հայ դպրութիւն մտցնելու (Ծ. ԳԼ.) եւ Պարսկաստան (Սմբատ Բագրատունու հետ) միջնորդելու Արտաշէսին Հայոց վրայ թագաւորեցնել (ԾԸ), Վարդանին թագաւորաւայել աստիճան եւ պատիւներ տալու առաջարկութիւնը, եթէ նրա պապ Սահակը համաձայնի ամբաստանել Արտաշէս թագաւորին հայ նախարարների հետ միասին (ԳԼ. ԿԳ), Վարդանին Մամիկոնեան տան պայազատ հաստատելը Սահակի բարեխօսութեամբ Պարսից թագաւորի առաջ (ԳԼ. ԿԵ) — այս բոլորը չէ արդարանում Ղազարի պատմուլ, թեամբ, որն իբրեւ Մամիկոնեան տան պատմիչ չէր կարող, հարկաւ, մոռանալ իւր գլխաւոր հերոսներից մէկի կեանքի այդքան նշանաւոր

մանրամասնութիւնները, եթէ իրապէս, այդպիսի մի ինչ արդարեւ եղած էր:

Բ. Ըստ իս միանգամայն անհետեւ թուական է այն, որ Խորենացին ստիպում է Պարսից Աճառամ թագաւորին, Պարսկական Հայաստանի լիակատար տիրոջը, ինչ որ խաղաղ բանակցութիւններ վարել իւր խաղաղ հպատակների հետ, եւ այս նրա համար, որպէսզի միջնորդ հանդիսացնէ Սմբատ Բագրատունուն¹, Պարսից թագաւորի եւ Հայերի միջեւ:

Գ. Սակաւ հաւանական է թուում ինձ — կաթողիկոսի հայ նախարարների հետ խօսակցելիս Յունաց Թէոդոս Կայսեր վրայ մատնացող լինել եւ սորա վերայ հիմնուած նախարարների մեղադրանքը իրենց կաթողիկոսին Յոյներին համակրելու համար (ԳԼ. ԿԳ, ԿԵ). Խորենացին այս կէտը աւելցրել է գոյներն աւելի խտացնելու նպատակով:

Դ. Հայոց թագաւորի Արտաշէս անուան Արտաշէր փոխելը (ԾԸ. ԿԵ) — կամայական է, որովհետեւ այն չէ հաստատուում հին պատմիչներից — Կորիւն եւ Ղազար, նաեւ Եղիշէ, կոչում են հայոց վերջին Արշակունուն ոչ այլապէս, եթէ միայն Արտաշէս²:

¹ Աւելորդ չէ նկատել այստեղ, որ Ե. դարուց առաջ «Սմբատ», անունը Հայոց պատմական յիշատակարաններում չէ պատահում:

² Այսու ամենայնիւ «Արտաշէր» անունը, թէեւ սակաւ, բայց դորձածական է հայ նախարարական տների մէջ, ինչպէս այս երեւում է օրինակ Բարգէն կաթողիկոսի (Ե. դարու վերջը) յայտնի թղթից, տես «Գիրք Թղթոց» էջ 41. եւ հետ.:

Ե. Անհաւատի են թւում ինձ եւ խորե-
նացու հետեւեալ տեղեկութիւնները Պարսից
առաջին մարզպանի Վեհմիհրջապուհն անունը,
— Սուրմակի Պարսից Թագաւորից Բընունեաց
եպիսկոպոսական իշխանութեան Ժառանգու-
թիւն ստանալը, նորա աթոռազուրկ լինելուց
յետոյ (գլ. 47) — Սուրմակի Թեմի ընդար-
ձակուիլը Շամուէլ կաթողիկոսի բարեհաճու-
թեամբ (գլ. 48), — Իրքիշոյի անսահման
ազահութիւնը (գլ. 47) — Երկու կուսակցու-
թեան բաժանումը Հայոց կաթողիկոս ընտրե-
լիս — Պարսից Կուռը գնացած չորս նախա-
րարների եւ հոգեւորականութեան մէկ
ներկայացուցչի նոյն իսկ անուններն, ինչպէս
նաեւ Հաւուէկ¹ Կուկայառնոյ դեսպանութիւնը
ուղարկուած նոյն նպատակով Կարնից Յունաց
Անատոլ զօրավարի կողմից (գլ. 46):

Զ. Անհաւանական է թւում ինձ նաեւ
կաթողիկոսական հարցի լուծումը ինչոր երկ-
իշխանութիւն հաստատելով, որով ուղար-
կում են Շամուէլ ասորուն օրինապէս մրցել Սա-
հակի հետ, թէ աստիճանով եւ թէ աթոռով,
իսկ վերջինիս լոկ ձեռնադրել նոցա, որոնց կը
նշանակէ Շամուէլ (գլ. 46): — Եթէ Պարսից

¹ Այստեղը խորենացու մէջ այնքան էլ պարզ չէ.
ուստի մի քանի թարգմանիչներ (Whiston, Cappelletti)
հասկացել են այնպէս, իբր թէ Հաւուէկ Անատոլի թեկն-
ածուն էր կաթողիկոսական թափուր աթոռի համար:
Այդպէս է հասկացել մեր հեղինակին նաեւ Թովմա
Արծրունին (էջ 74, հրատեմբ.), որը մինչեւ իսկ Հաւու-
էկին կաթողիկոսացրել է Յունական Հայաստանում:

արքան այդչափ անվստահութիւն էր տածում
դէպի Սահակ, ինչ կարիք կար յանձնել նրան
այդպիսի մի պաշտօն: Բացի այդ միթէ Սահակ
կը համաձայնուէր այդքան ստորանալ, քանի որ
ինքը արդէն զրկուած էր աթոռից: Խորենացին,
որ սոցորուած էր Ղազարից անգամ որեւէ
կերպով տարբերութիւն անզուսպ ցանկութեամբ,
արատաւորում է, թերեւս ինքն այդ չնկատելով,
անխիղճ կերպով հայ մարդկանցից ամենամեծին,
որի նպատակների յստակութիւնը ամէն կասկա-
ծանքից վեր պիտի լինի. նա ներկայացնում է
Գրիգոր Լուսաւորչի վեհ զաւակին այս անգամ
մանր, սնափառ, նոյնիսկ ի վնաս նրա արժանա-
ւորութեան, փառամոլ մի անձնաւորութիւն,
կաթողիկոսական իշխանութեան ստուերից իսկ
կախուող:

Է. Սահակի հաւատարմական երգումը
Ղուամին, այս դէպքում նրա արտասանած ճառը,
ունկնդիրների վրայ արած զօրեղ տպաւորու-
թիւնը, Պարսից Թագաւորի հիացմունքն ու հա-
մակրանքը, եւ վերջապէս Սահակի խնդիրը
Ղուամին հաստատել Հայոց նախարարների
Գահնամակը (համաձայն Արտաշիր Պարսից
Թագաւորի կարգադրութեան գլ. 23) եւ
մասնաւորապէս Կամարական եւ Ամատունի
տոհմերի (գլ. 46) — այս բոլորը հնարել է մեր
պատմագիրը: Վերը մենք տեսնուք, որ խորենա-
ցուն անհրաժեշտ էր, ինչ էլ որ լինի, չորրորդ
անգամ ուղարկել Սահակին Պարսից արքայի
գուռը դէպ ի Ղուամ, այն նպատակով, որ հաս-

տատէ, իւր կողմից, Սահակի, Արտաշէսի եւ Ղուամի անուանց հետ կապուած Գահնամակի վկայութիւնը, իսկ մասամբ, գուցէ եւ ինքը հաստատուած լինի այդ յիշատակարանով: Արտաշէսի եւ Սահակի անկման ժամանակ մեր պատմագիրը յարմար չէր համարում այս անել (այսինքն Գահնամակի հաստատութիւնը), ի նկատի առնելով Պարսից թագաւորի հասկանալի թշնամական յարաբերութիւնը նորընկէց կաթողիկոսի հետ: Արպէս զի նորից առիթ ունենար Սահակին Պարկաստան ուղեւորել, հարկաւոր էր հնարել կաթողիկոսների երկիւղանուլթեան այնքան ոչ սրամիտ կարկատանքը, իսկ որպէս զի Ղուամին տրամադրէ յօգուտ Սահակի, ստիպուած եղան ի վկայութիւն կոչել արքայի առաջեւ արտասանած հրաշալի ճառը, որի վախճանը պիտի լինէր հռետորի Ղուամին ուղղած խնդրի կատարումը, Գահնամակի հաստատման եւ յատկապէս խորենացուց հովանաւորուած կամսարական ու Ամատունի նախարարական տոհմերի բարձերի որոշման համար: Բացի դրանից ակներեւ է, որ մեր հեղինակին անհրաժեշտ էր շեշտել եւ այն Սահակի բերանով՝ կամսարական տան ազգակցութիւնը Ղուամուրջի ցեղի հետ, իրբերեւ հակակշիռ Մամիկոնեաններին, որոնք ազգակից էին Սահակին:

Ը. Թէ խորենացին, յիրաւի, առաջ նորդուում է այդտեղ սեփական դիտաւորութիւններով ու հաշիւներով եւ շատ բան մտցնում էր իր կողմից, երեւում է նաեւ

նրանից, որ նրա պատմուածքի բոլոր նշանաւոր կէտերը, առանձին ասացուածքները, որոնք բնորոշում են այս կամ այն անձը կամ անցքը, անգամ եւ ամբողջ նախադասութիւններ — գրականական ձեւեր են փոխառած այլեւայլ, իրար հետ ոչ մի կապ չունեցող աղբիւրներից եւ արհեստական կերպով յարմարեցրած ներկայ պարագաներին: Այսպէս, հետաքրքիր ասացուածքը, որ բնորոշում է կաթողիկոսների երկիւղանուլթիւնը — «ընդիմափառ եւ հակառակաթոռ¹», Պարսից թագաւորին տուած ածականը «չարարար» — եւ անհետթեթ ասացուածը «զգաղացան մագուցն լեզուը» (Սահակի կայծակնաճաճանչ ճառից) — փոխ են առած Գրիգոր Նազիանզացուց²: «Հրաշալի նստուածաբանութիւն» խօսքը առած

¹ Աբրոյիշեալ ածականներով Նազիանզացին ի նկատի ունէ Ս. Աթանասի յաջորդել Աղէքսանդրիոյ եկեղեցու առաջին եպիսկոպոսին, Մարկոս առաքեալին. «... ոչ սպանութեան եւ բռնադատութեան օգնութեամբ, ասում է նա Աթանասին շատագովող ծառի մէջ, այլ առաքելաբար եւ հոգեպէս է բարձրանում Մարկոսի աթոռը, որպէս յաջորդ նորա նախաթոռութեան եւ ոչ պակաս սրբակրօնութեամբ, որովհետեւ թէեւ հեռու է նրանից առաջնում, բայց մօտ է վերջնում: Այս իսկ բանի մէջ իսկապէս եւ պետք է համարել յաջորդութիւնն, որովհետեւ միախոհութիւնը դարձնում է նաեւ միաթոռ, իսկ ընդդիմափառութիւնը հակառակաթոռ» (τό δέ ἀντιδοξον και ἀντιδορον, ed. Migne; Patrol t. 35, p. 1089)

² Աթանասի ծառում հայ թարգմ. ձեռ. Ղիենն. Մխ. Թ. 217, էջ 110a, Քարսնդի ծառում ibid էջ 147a, «Առ որս», ձեռ. Ղիենն. Մխ. Թ. 320, էջ 1026:

է փոքր Սոկրատից¹: Այն ինքնուրոյն ոճերն եւ դարձուածքներն, որով նա նկարագրում է մանրամասնութիւնները, թէ ինչպէս Սահակ «պարկեշտ եւ նազելի զինքն կազմեալ ի բեմբասացութեան ձեւի, համեստ հայեցուածովք, համեստագոյն եւս ձայնիւ սկսաւ ճառել զերախտիս ծառայութեանն...» եւ ինչպէս Պարսից մեծամեծները «յակճիւս կալով պանջել», կամնարական եւ Ամատունի իշխանների բարձերն, որոշելուն վերաբերեալ խօսքը «Թափեալ ի հարցն պատուոյ եւ յառաջամասինն գահէ ի ստորնակային եւ կամ գրեթէ որպէս զարքունի գործակալութիւն նմա հաւատասցե եւ նորուն զաւակաց համանմանակի ընդանութեամբ», եւ վերջապէս Սուրէն Պահլաւին ուղղած խօսքերը «ջանացիս դու թովելով զօրէն համոզակեր թովէի» — այս բոլորը առած է Փիլոնից²: Փիլոնից են նաեւ Արտաշէս

¹ Աղաբաշտ. հրատ. էջ 373 («հրաշափառագոյն ստուածաբանութիւն» տես նաեւ Նորայրի համեմատութիւնները «Հանդէս» 1893, սեպտ.):

² Վասն կենդանեաց էջ 115, Վասն լին. հ. Գ. էջ 56, Գ. էջ 51. վասն Եսսեանց էջ 12—14, 17, 28, 30, վասն Ելից Բ. 43, վասն Բազն. էջ 210, Ժ Բան, էջ 234: — Խորենացու հրատարակութեան ունեն «պանջել», 1865 թ. հրատարակութեան ծանօթութեան մէջ ստուած է «երկու օրինակ ունին Սականջել եւ մէկը Զականջել — որ մօտ է փիլոնեան ընթերցուածին Շականջել: Պէտք է դիտել եւ «Թովիշ» ընթերցուածի մասին. համարեա բոլոր հրատարակութիւններն ունեն «Թովէի» — Գիւթող, կախարհող, բայց մի ձեռագիր օրինակում «Թափել» = միջնորդ, գատաւոր է գրուած, որ նոյնպէս համա-

Թագաւորի եւ Սահակի հետ թշնամացած նախարարներին տուած ոչ այնքան գովասանական ածականները (նախարարացն թշնամասիրաց¹ եւ ոսոխասիրաց գլ. ԿԳ.) եւ նոյնպէս նոյն գլխի վերջը բերած մեր պատմչի քաղաքավարի յանդիմանութիւնը իւր մեկենասին, որ խստիւ պահանջում էր շուտ վերջացնել աշխատանքը. — «մարդ զքեզ վարկանելով կարեկցութեամբ մեզ հաւասարեալ. եւ ոչ որպէս քերթողն ասեն, մերձազուակք եւ մօտասէրք գոլ եւ նոյնասերմանք աստուածոց իշխանք»²:

Թ. Իսկ որչափ կեղծութիւն կայ ԿԵ գլխի վերջին եղծափակող տողերի մէջ: Յիշելով Ս. Սահակի հրաշալի ճառի մասին, որից զմայլուել էին ինքը Թագաւորը եւ նրա արքունիքը, Խորենացին այնու ամենայնիւ նրա բովանդակութիւնը չէ բերում: Ի հարկէ նա ինքը զգում է այդ պակասը, ուստի եւ շտապում է արդարանալ այսպիսի խօսքերով, թէ «ոչ յումեք է լսելիսս մեր հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, եւ ոչ մեք ի պատմութեանս հիւսել հաւանիմք»: — Բայց ենթագրենք, թէ մեր պատմիչը հակառակ իւր բոլոր ցանկութեան, չկարողացաւ

ձայն է փիլոնեան ընթերցուածքին (վասն Եսսեանց էջ 17) տես նաեւ Նորայր, քննասէր Բ. էջ 54:

¹ 1865 թ. հրատարակութեան բնագրում «Թշնամասիրացն» է, յայտնելով երկու ձեռագիր վարիանտը — թրշնակամացն, որը նոյնպէս համապատասխանում է փիլոնեան ընթերցուածքին (Սախաւին. էջ 90), տես նաեւ Նորայր ibid էջ 52:

² Վասն Ելից Բ. 6, նաեւ Վասն կենդանեաց էջ 168:

ձեռք ձգել, իւր, ինչպէս ինքն է ասում, ուսուցիչ Սահակի ճառի գոնէ համառօտ բովանդակութիւնը, սակայն ինչո՞ւ առարկել «զե եւ ես այր եմ ծերացեալ եւ հիւանդոտ (ինչպէս այս ամէնը յիշեցնում է Նազիանզացուն) եւ անպարապ ի թարգմանութեանց»: Մի՞թէ մի տասն-քսան տողը այդչափ տեղ եւ ժամանակ էր պահանջելու: Անկեղծ չէ խորհնացին եւ այն ժամանակ, երբ խօսում է նոյն Սահակի մասին որ «պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի հօրն դրուատից, այլ զի մի յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց, այլում տեղւոյ եւ ժամանակի զայսօսիկ թողցուք՝ արտաքոյ այսց գրոց, ուր սկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն» (գլ. ԿԷ): Մերթ Սահակի «ճառ»ը չէ հասել մեր պատմագրին, մերթ «ծերութիւնն եւ հիւանդութիւնն» են խանգարել նրան մանրամասնորէն կանգ առնել այդ «ճառի» վրայ, մերթ վերջապէս նա երկիւղ է կրում ձանձրացնել ընթերցողին Սահակի ընդարձակ ճառով:

Թ. Ղազարի երեք տողից Շամուէլի մասին, խորհնացին մշակել է բաւականաչափ ձիգ պատմութիւն (գլ. ԿԶ), մանրամասնորէն խօսելով գլխաւորապէս նրա ծայրայեղ ազահութեան եւ բոլոր եպիսկոպոսների դէպի նա տածած ատելութեան վրայ: Յայտնի չէ թէ որտեղից է հանում մեր պատմիչն այս տեղեկութիւնները եւ նաեւ այն թէ նա վարում էր

եկեղեցին հինգ տարի: Շամուէլի նոյն իսկ տիտղոսը — «հոմիշեան» (Սահակի) — հոգեւոր չէ եւ փոխ առած է, ըստ երեւութին, Կեղծ-Կալիսթենէսից¹: ԿԶ գլխի մնացած մասը ներկայացնում է Ղազարի մանրամասն պատմութեան համառօտութիւնը, պահպանելով նրա ոճերից շատերը: Միայն շատ տարօրինակ է այն, որ Սահակ, ըստ Մովսիսի, այս բոլոր ժամանակը, այսինքն հինգ տարւայ ընթացքում լինելով «հակառակաթոռ» Շամուէլի եւ միեւնոյն ժամանակ բոլորովին ստորագրուած սրան, — չէ համաձայնուում, նրա մահից յետոյ, լինել ինքն-իշխան եւ լիազօր կաթողիկոս, ինչպէս հայ նախարարները խնդրում էին նրան: Ուստի եւ Սահակի առարկելը (նոյն ԿԶ գլխում) իւրեանքնի մէջ երեւցած «տեսիլքը», որով նախագուշակում էր, նրա կարծիքով, իւր կաթողիկոսութեան դադարումը ըստ Աստուածային հրամանի, նախ՝ չունէ այն նշնակութիւնը, ինչ որ Ղազարի պատմութեան մէջ տրուում է Սահակի մերժմանը, եւ երկրորդ՝ սա ցոյց է տալիս, որ մեր հեղինակը ծանօթ է Ղազարի գրուածքին, երբ որ նրա մէջ այդ իսկ կէտում ներմուծումն էր տեղի ունեցել: Ես ի նկատի ունիմ Սահակի անվաւեր Տեսիլը, որի կազմուէլուն առիթ են տուել, ըստ երեւութին Ղազարի մի տասնեակ խօսքերը «թոյլ տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս շայց,

¹ Տես Բան նորին ի Ժողովողն ձեռ. Ղեկն. Մխ. Թ. 217, 249 b. Շառ Բարսի, ibid էջ 150 a:

զոր անսանեմ աչօք մտացս ի զօրութենէ վերին ցուցակութեանն:»¹

ԹԱ. Սահակի եւ Մաշտոցի մահուան պատմութիւնը (գլ. Կէ) խորենացին առաջ է բերում ընդհանրապէս Կորիւնին եւ Ղազարին համաձայն, բայց մշակուած է գրականօրէն, աւելացնելով վերոյիշեալ անցքերի բնորոշ գծերը, որոնք, ինչպէս երեւում է ստուգելուց, սակայն փոխ են առած այնպիսի աղբիւրներից, որոնք յարաբերութիւն չունին յիշեալ գործիչների հետ:

Այսպէս Սահակին բնորոշող խօսքերը. «Որ մահականացու ծնեալ, անմահ զերն յիշատակ եթող» — «Ծագում են փլուռից»² — պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոշակէն, փոխանորդեաց զկեանսն» — առած են Նազիանզացուց:³

Մանաւանդ նշանաւոր է խորենացու փոխառութեան դէպքը Մաշտոցի բնաւորութիւնը նկարագրելիս: Նրա մէջ պատմական մասից

¹ Այս անվաներ հատուածի մասին տես իմ հետազօտ. Ղ. Փարպեցու մասին Մոսկվ. 1883, էջ 120—127, Տեսիլը սկսում է Ղազարի մէջ «Վասն զի զանցս աղետիս այտորիկ... (էջ 78) եւ վերջանում է «հրամայեաց ինձ զաւանդս զայս թողուլ աշխարհի» (էջ 102): — Թեպէտ եւ խորենացու «Տեսիլը» կարող էր Ղ. Փարպեցուց անկախ ծանօթ լինել, այսինքն էր անվաներ գրուածը դեռ եւս ներմուծուած էր Փարպեցու Պատմութեան մէջ:

² Վասն լիննէ., Գ. 46 (զմահականացու կենաց կեանս անմահութեան փոխանակեալ):

³ Տես «ի բանս եւ ի հաւասարեցուցիչն», ձեռ. վիճեն. Մխ. Թ. 217, էջ 171b:

յետոյ, համաձայն Կորիւնի, հետեւում է մի հատուած 15 տող, որը մենք գտնում ենք քառացի հէնց նոյն ձեւով ծանօթ ընդարձակ Վարք Ս. Սեղբեստրոսի մէջ, թարգմանած հայերէն 678 թ. Աբաս Գրիգոր Չորսփորեցու ձեռքով¹: Վարքի 698—699 էջերում գետնադած է սեղմ, բայց գեղեցիկ մի նկարագիր Հոովմի եպիսկոպոսի հոգեւոր եւ բարոյական յատկութիւնների մասին. — «Երեսնամեայ ահայ ամաց էր, յորժամ ի սրբոյն Մեղիտիագէ սարկաւազութեանն նախաձեռնարկեցաւ պատիւ ամենայնն ապա պատուով ուրախացեալ եւ բարէ վայելչացեալ քան զօրոր վիճակաւորսն: Վասն զի ամբարտաւանութիւն եւ մարդահաճոյութիւն առ ի նորա վարս տեղի զտանել ոչ ուրեք կարացին, այլ հեզ եւ բարիակամ եւ բարեխորհուրդ գորով եւ երկնայնոցն զարդարեալ սովորութեամբ զինքն բոլորից ցուցանէր. վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, քանի տրամապայծառացեալ, զործով սուրբ, մարմնով արտափայլեալ, սարսիք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր: Այլ վասն զի զբոլորսն նորա զուղութիւնսն ոչ եմ քաւական ասել, առ ի մասնաւորականն նորա գործեցեալ զարձուցից զքանս: Ս. Միղիտագոսի եպիսկոպոսի առ

¹ Սոկրատայ Սխուրաստիկոսի Եկեղ. Գամ. Վարք Ս. Սեղբեստրոսի յաւելուածով. Վրչպտ. 1897:

Աստուած զգնացս առնելով, ամենքին ի միասին մեծաւ ձայնիւ վերահռչէին «Սեղբեսորոս պարտի առ պատիւ եպիսկոպոսութեան ձեռնարկել...»:

Առաւել պարզութեան համար առաջարկում եմ վերոյիշեալ հասուածի իսկական յուշարէն բնագիրը. «... Η γάρ ὑπερεφανερία καὶ ἡ ἀλαζονεία ἐν τοῖς αὐτοῦ τρόποις χώραν ἔχειν οὐδαμῶς ἠδυνήθησαν. ἀλλὰ προσηγήσ καὶ ἀγαθοθελής, καὶ ταπεινόφρων ὑπάρχων, οὐρανίους ἤθεσιν κεκοσμημένον ἑαυτὸν πᾶσιν ἐπεδοείκνυσεν. ἦν γάρ τῇ θεᾷ ἀγγελιοειδής, τῷ λόγῳ διαλάμπων, τῷ ἔργῳ ἄγιος, τῷ σώματι ἐβρώμενος, καὶ τοῖς ἤθεσιν ἄριστος, τῇ συμβουλίᾳ μέριστος, τῇ πίστει ὀρθόδοξος, τῇ ἐλπιδὶ ὑπομονητικός, τῇ ἀγάπῃ ἀνυπόκριτος. Ἀλλ' ἐπειδὴ πάντα αὐτοῦ τὰ κατορθώματα, οὐχ οἶός τε εἶμι καταλέγειν, ἐπὶ τὰ μερικῶςπραχθέντα ὑπ' αὐτοῦ τρέψω τὸν δεσπότην θεόν τὴν πορείαν ποιησάμενος...»¹

Մեզ հետաքրքրող հասուածի վերջին բառերը — «ուսուցանելով անձանձորյութ» — պակասում են «Վարք» ում. այդ բառերը փոխ է առել մեր պատմագիրը Փոքր Սոկրատից (էջ 498), ուր գործ են ածուած Ոսկեբերանի վերաբերմամբ: Այնտեղ ուր «Վարք» ի հեղինակը անկարող լինելով թուել Սեղբեսորոսի բոլոր ձիրքերը, ստիպուած է նրա գոր-

¹ Տես քննութիւն Վարք Ս. Սեղբեսորոսի եւ խորեանացու աղբիւրները Հ. Բ. Սարգիսեանի, Վենետ. 1893. այստեղ է գտնուում նաեւ Վարքի յուշարէն բնագիրը:

ծուէն է ու թեան նկարագրին դիմել, մեր պատմիչը դիմում է Մաշտոցի թաղման նկարագրութեանը:

Պէտք է դիտել, որ Սեղբեսորոսի Վարքից փոխ առնելու փաստը շատ մեծ կարեւորութիւն ունի «Հայոց Պատմութեան» ժամանակի որոշման համար, որը է գարու վերջից վաղ չէ կարող լինել¹: Այս եզրակացութիւն մենք պնդում ենք հաստատապէս, չնայելով, որ Անգլիացի հայագէտ Ֆ. Կոնիքերի² նոր, մեր կարծիքով, անյաջող փորձերին տատանել խորեանացու Հայոց Պատմութեան քննադատական եզրակացութիւնների վճռական նշանակութիւնը:

¹ Այս հարցի մասին աւելի մանրամասնորէն. տես իմ քննական յօդուածները «Հանդէս» ի մէջ 1897 թ. 10, 11 եւ 12 եւ առանձին արտատիպ օր. էջ 16 եւ հետեւ. — Սոկրատի Եկեղ. Պատմ. եւ Վարք Ս. Սեղբեսորոսի ի լոյս ընծայելու առթիւ: Սոկրատի հրատարակիչը Հ. Մեսրոպ, իւր ընդարձակ յառաջարանի մէջ ջերմ պաշտպանելով աւանդական հայեացքը խորեանացու մասին նոր քննադատների յարձակումների դէմ, ստիպուած էր «Հանդէս» ի մէջ լոյս տեսած յօդուածներից յետոյ հրատարակել իւր կարծիքներից («Արարատ», 1898 էջ 165-173): խորեանացու «Վարք Սեղբեսորոսի», հասուածից օգտուելը համարեա միաժամանակ եւ անկախ իմ յօդուածներից նկատել էր նաեւ Միլանսը «Արարատ», 1897 թ. էջ 422:

² Տես նրա յօդուածը „Byz. Zeitschr.“, 1901, 3-4 տետր եւ նրա հայ թարգմանութիւնն «Հանդէս», 1902 յունուար եւ մարտ, գիտնական Հ. Տաշեանի յառաջարանով եւ մի քանի աչքի ընկնող նկատողութիւններով յօդուածի հեղինակին: Նոյնպէս նոյն հայագէտի օգտուելը հրատարակուած «Հանդէս» ի նոյն ամբողջ մայիս եւ յունիս համարներում, նոյնպէս ոչ առանց առարկութիւնների նրա հայերէն թարգմանի կողմից:

Վերջապէս եզրափակելով Մաշտոցի նկարագիրը, պէտք է մատնացոյց անել Մովսէսի մի հատուածի վրայ, այն է — «գպարկեշտ զայն մարմինն եւ նախ քան զմահն կրթեալ ի մոռելութիւն», — որը մասամբ կազմուած է Ղազարի բառերից (էջ 104) գործագրելով «գպարկեշտ մարմինն» Ս. Սահակի վերաբերմամբ, մասամբ Նազեանդացու խօսքերից¹:

Նոյն իսկ այն վէճը, որ իբր թէ ծագեց Մաշտոցի թաղման տեղի մասին, երեք կուսակցութեան բաժանումը եւ իշխ. Վահան Ամատունու յաղթութիւնը, նաեւ Վահան աշակերտի յիշատակութիւնը — պէտք է վերագրել մեր պատմագրի կամայական պաճուճանքներին. գոնէ ոչ կորիւն եւ ոչ Ղազար ոչ մի նման բան չեն հաղորդում:

«Սոփերքի Բ հատորի մէջ զետեղած «Պատմութիւն Ս. Սահակայ եւ Մեսրոպայ», որտեղ նոյնպէս յիշուում է այդ վէճի մասին (էջ 36) — յետ ժամանակի ծագումն ունի եւ կրում է խորնացու ազդեցութեան յայտնի հետքեր:

Գ. Գրքի վերջին կը գլուխը ամբողջ Հայոց Պատմութեան եզրափակումն է, նաեւ ամէնէն ընդարձակն ամբողջ գրքում: Հեղինակը նրա մէջ դառնագին ողբում է հայ ժողովուրդի եւ Հայաստանեայց Եկեղեցու անյոյս եւ անմխիթար վիճակը, իւր ուսուցիչների Սահակի

եւ Մաշտոցի մահից յետոյ: Սրան հեղինակը կցում է հայ ժողովուրդի, առանց բացառութեան, բոլոր դասակարգերի ծայրայեղ բարոյական անկման սեղմ, բայց զօրեղ եւ տպաւորիչ պատկերը, — բնութեան սովորական երեւոյթների ծայրայեղ փոփոխութիւնները ի վնաս ժողովուրդի, — այլազգիների խիստ եւ չարաչար տիրապետութեան տակ ճնշուած հայ ժողովուրդի տաժանելի կեանքը, միով բանիւ ժողովուրդի անլուր չարիքների եւ դժբախտութիւնների պատկերը իբր պատիժ ի վերուստ:

Հազիւ կարիք կայ ծանրանալու թէ որքան անհաւատարի է այս բոլոր չարիքների միանուազ տեղի ունենալը Հայաստանում¹: Մանաւնդ չափազանց է թւում հայ հասարակութեան բոլոր դասակարգերի բարոյական անկումը, առաւելապէս կուսակրօն հոգեւորականութեանը այն ահաւելի չափերով, որը տեղի է ունենում յանկարծակի Սահակի եւ Մաշտոցի անմիջապէս մահից յետոյ:

Որպէս զի լաւ հասկանանք հեղինակին, պէտք է նախապէս պարզել, թէ ինչով էր նա առաջնորդուում իւր Պատմութեան վերջին գլուխը կազմելիս: Ըստ իս Մովսէս կամենում էր, նախ՝ միանգամ եւս, եւ բոլորովին որոշակի, շեշտել, ինչոր նա առաջ ասել էր հարեւանցի, այսինքն, որ նա աշակերտ է մեծ Լուսաւորիչների՝ Սահակի եւ Մաշտոցի, միեւնոյն ժամանակ

¹ Տես Նորայր Քենասեր բ. էջ 61:

¹ Համ. նաեւ Գարագաշեան. Քնն. Պամ. Գ. էջ 67:

ամենից առաջաւորը. եւ երկրորդ, եւ այս մանաւանդ կարեւոր էր Մովսէսին, նա կամենում էր նոյնացնել իւր անձնաւորութիւնը համանուն «երանելի փիլիսոփոսին», որին յիշում է Ղազար: Ղերջինս նկարագրում է «Փիլիսոփոս Մովսէսին» թէ «արդարեւ մինչդեռ էր ի մարմնի ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից», եւ իբրեւ հեղինակ «լուսաւորիչ եւ սգիտահալած գրուածքների», որոնց պատճառով նա ենթարկուեց հայ հոգեւորականութեան կողմից անպատուութեան եւ հալածանքների, թողնելով իր մահից առաջ «անաւոր նզովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ»¹:

¹ Տես նրա «Թուղթ առ Ղահան Մովսէսին», էջ 607—608: — Հայոց նորագոյն գրականութեան մէջ տարածուած կարծիքը, իբր թէ այն անձը, որի ոսկրները թաղելուց յետոյ, հանեցին (աբեղաները) զերնգմանից եւ ջուրը նետեցին, հենց փիլիսոփոս Մովսէսն է — դեռ հաստատութեան կարօտ է: Պէտք է յիշել, որ Մովսէսի եւ նրա գրաւոր անէծքի մասին, մեր մէջ բերած խօսքերից անմիջապէս յետոյ ձեռագրում երկու թերթ պակաս է կամ շորս երես իմ ծ⁰ իսկ յետոյ հետեւում է ընդհատած պատմութեան շարունակութիւնը մի անձի մասին, որ «ցոյգ եւ ցերեկ» ինչպէս ասած է, «անհանգիստ աշխատութեանց եւ վատտակոցն ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց», հենց սա էր, որի հետ այնպէս անըւր բարբարոսութեամբ վարուեցին արեղաները: Ի նկատի առնելով Ղազարի շարադասութեան բնաւորութիւնը եւ ոչդեղ մէջ բերած համառօտ դէպքերը, որպէս օրինակներ՝ աւելի հաւանական է թուում, որ արեղաների պախարակելի վարմունքը վերաբերում է ոչ թէ փիլիսոփոս Մովսէսին, այլ մի ուրիշ անձի, որի մասին յիշած էր պակասած տողերում: Թէեւ այս խնդրի վերջնական լուծումը կախուած է Ղազարի աւելի անաղարտ ձեռագրի երեսն գալուց:

Եւ այսպէս կը գլխում առաջ բերած հեղինակին ժամանակակից հայ հասարակութեան հէնց այնքան խիստ մեղադրութիւնը պէտք է կազմեր այն նզովքը, որը գրաւոր թողել էր «Փիլիսոփոս Մովսէս»: Բայ ի դրանից ինձ թուում է, որ այդպիսի գրգռուած տրամադրութիւնը հայ հասարակութեան դէմ եւ մինչեւ իսկ «Ողբի» գաղափարը խորենացին պատրաստել է Փարպեցու պատմածից (էջ 78) Ս. Սահակի մասին, որը խնդրում էր թոյլ տալ իրեն «ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց», երբ որ նոյն իսկ հայ նախարարների զբոմամբ եւ ջանքերով պէտք է վերջ տային իրենց գոյութեան Հայոց թագաւորութիւնն Արշակունեաց ցեղից եւ կաթողիկոսութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչի տանից:

Ահա թէ ինչո՞ւ Գարագաշեանի ենթադրութիւնը թէ կը գլուխը (որպէս եւ կ՛ը գլխի վերջը) ներմուծումն է խորենացու պատմութեան մէջ յետոյ ուրեմն, ուրիշի ձեռքով — ես չեմ կարող հիմնաւոր ընդունել: Մեզ հետաքրքրող գլուխը սերտ կապ ունի Հայոց Պատմութեան մնացեալ մասի, մանաւանդ Բ գրքի ՂԲ գլխի հետ, որտեղ հեղինակը նոյնպէս «ողբերգական մեղադրութիւն» է ուղղում իր հայրենակիցներին: Այստեղ եւս նոյն մտքեր են, նոյն ձգտումները, նոյն փայլուն ոճը եւ շարադասութեան նոյն ձեւը: Այս բաւական չէ, այնտեղ մենք գտնում ենք նոյն աղբիւրները, որ ընդհանուր են Մովսէսի ամբողջ գրուածքին եւ

սոցա թուում, հեղինակից այնքան սիրուած — Գրիգոր Նազիանզացուն (որից այնքան շատ է քաղել, ի միջի այլոց նաեւ նոյն երրորդ գրքի նախընթաց կէ եւ կէ գրութիւնների համար), Փիլոնին¹, որպէս եւ Անանիա Շիրակացուն եւ այլն:

Անցնելով ԿԸ գլխի աղբիւրների քննութեանը, հարկ եմ համարում նկատել, որ խորենացին իւր «Ողբի» համար կաղապար է ընտրել «Նազիանզացու»² գովասանական ճառը Անտիոքի եպիսկոպոս Մելիտոսի մահուան առթիւ: Այն ինչոր այնտեղ ասուում է Մելի-

¹ Աւելորդ չէ նկատել այստեղ Փիլոնի աղբեցութեանը նաեւ Հայոց Պատմութեան առաջին գրքի, առաջին գլխի վրայ, ծօնած Սահակ Բագրատունուն, այսինքն Կոթեպատոց գործածած (մեր ընդծած) ինքնուրոյն դարձուածքները — Զանապառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն... յառաջ քան զմարմնոյդ զհոգւոյդ ընկալեալ ծանօթութիւն... Զի եթէ վասն Բանի մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, եւ դարձեալ առարկնութիւն քանականին է խոնականութիւն եւ քո յայտոսիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմս... բոբբոք պահելով զկայծակն... Կի ձեռն որոյ եւ զայտոսիկ զակզնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ եւ շտիւտոր մտութեամբ յայտոսիկ միւլելա են զակատեալ. — փոխ են առած երբայցի փիլիսոփայի գրուածքների հայերէն թարգմանութիւնից — Նախահինամիութիւն էջ 64. եւ Լիննել. Ա. 4-13, 16, 29: Այս քաղածքների վրայ դեռ քննադատներից ոչ ոք չէ ուշադրութիւն դարձրել:

² Տես Ալեք. Մխ. Թ. 217 էջ 156 եւ հետ. «Առ Մելիտոս», — Այս ծառը, իսկապէս ասած, պատկանում է Գրիգոր Նիկացուն, բայց հայ ձեռագրերում այն վաղուց վերագրուում է, հաւանօրէն սխալմամբ, Նազիանզացուն: (Տես շ. Տաշեանի Յուց. ձեռ. Ալեք. Մխ. Krabinger, Oratio in Meletium Monachii 1838 եւ Migne S. 46, էջ 788-864):

տոսի եւ Անտիոքի Եկեղեցու մասին, մեր պատմագիրը յարմարեցնում է Սահակին եւ Մաշտոցին եւ Հայոց Եկեղեցուն, իւր կողմից նոր յաւելումներով: Առաջ եմ բերում այս ճանից այն հատուածները, որոնցից օգտուել է խորենացին: — «... հմա լաւագոյն էր ընդ Բրիստոսի լինել լուծանելով ի մարմնոյն. բայց մեզ չար որոշել ի հայրենի վերակացութենէն. վասն զի ահա խորհրդեան՝ ժամանակ եւ խորհրդակիցն լռեալ է. պատերազմ՝ զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերձուածողական, եւ որ զօրավարն լինի ոչ ոք է. վտանգի հիւանդութեամբ հասարակաց մարմին եկեղեցւոյ եւ զբժիշկն ոչ գտանեմք: Տեսանէք յորպիսի մեր իրքս կան. կամիմ եթէ որպէս կարողութիւն է պնդելով զիմ զտկարութիւնս ելանել ի վերոյ քան զծանրութիւն թշուառութեանս (եւ) արձակել ձայն արժանաւոր ախտիս, որպէս առաքինիքն այնոքիկ արարին մեծաձայն ի վերայ հօրն թշուառութեան ողբալով: Այլ զի՞նչ կրեցից, զիմարդ բռնադատեցից զլեզուս ի սպասաւորութիւն բանիս, որ օրինակ իմն իբրեւ ծանր կապանօք թշուառութեամբքս է կապեալ... Յայնժամ իբրեւ ի հարսանիս պարէաք, եւ այժմ ողորմելի ի վերայ ախտիս հատաչեմք. յայնժամ առազաստի

¹ Ակնարկութիւն 381 թուին Կ. Պոլսում, Մակեդոնի հերձուածողական վարդապետութեան առթիւ կազմած տիեզերական ժողովի մասին, որտեղ նախագահում էր Մելիտոս եւ որի ժամանակ նա վախճանուեց:

երգը եւ այժմ ի վերայ գերեզմանի ողբը: Քանզի յիշէք, յորժամ զհոգեւոր հարսանիսն մեզ հաստատեցաք ընդ բարի փեսային... վասն զի բարձաւ ի մէջ քաջ փեսայն... Ուր է պայծառ առագաստն այն հոգւովն սրբով յամենայն ժամ ուղղեալ... ուր քաջ նաւուղին, որ զվերինն դիտելով ուղղէր զնան... Ուր է քաղցր աչացն հանդարտութիւն, ուր զուարթ շրթանն ժպտումն... Ողորմիմ քեզ, ով եկեղեցիդ, առ քեզ է Աստիքու քաղաքդ: Ողորմիմ քեզ յանկարծակի փոփոխամբդ (վար. փոփոխամանդ) այդուիկ, զհարգ անզարգացաւ (վար. անզարգեցաւ) գեղեցկութիւնդ, զհարգ կողպտեցաւ զարդն, որպէս յանկարծակի վայր անկաւ ծաղիկն, ճշմարտագէս ցամաքեցաւ խոտն... Ո՛վ թշուառական պատմութեանն այնորիկ, ո՛վ պատմէ եկեղեցւոյն զախտն, ո՛վ ասիցէ մանկանց (վար. եկեղեցւոյն մանկանց), թէ որք եղին, ո՞ պատմեցէ հարսինն, թէ այրի մնաց, ո՛վ չարեացս... Նահատակն ի հանդէս կոչեցաւ, եւ նահատակէր յաղագ ճշմարտութեանն քրտամբք. իսկ հարսն համբերէր ողջախոհութեամբ զամուսնութիւնն պահելով: Փամանակ էր ի մէջ յորով եւ ոմն սեղեղաբար յանդգնէր¹ յանարատ յառագաստն, այլ հարսն ոչ աղտեղանայր: Դարձեալ վերստին ճանապարհ եւ դարձեալ

¹ Ակնարկութիւն, ըստ երեւութիւն, Կոստանդ կայսեր ձեռքով արտրուած Մեկտոսի տեղ՝ արիոսական եպիսկոպոս Եւզսի Աստիքի պատրիարք նշանակուելու մասին:

փախուստ, երրորդ¹ անգամ նոյնպէս, մինչեւ քայքայէր զհերձուածողական մառախուղն Տէր եւ ճառագայթս խաղաղութեան ի վերայ ծագելով...:

Այլ իբրեւ զի գեղեցիկ, եթէ մինչեւ յայտոսիկ պատմութիւնս: Իբրեւ զի երանելի, եթէ յայտոսիկ դարարէր բանս: Եւ ապա զինչ յետ այնորիկ, կոչեցէք զողբացող կանայն. յերեմիաս ասէր. զի եւ ոչ իսկ այլազգ այտման (եւ կարգում եմ այրման) սրտին զիջանել յախտէն, բայց եթէ հառաչանօք եւ արտասուօք թեթեւացուցանել: Յայնժամ միտեարէր զբաժանումն անդրէն դառնալոյն յոյս, բայց այժմ զվերջին մեզ որոշումն բաժանեցաւ. վիճ մեծ ընդ մէջ նորա եւ եկեղեցւոյն ի հասարակածին հաստեցաւ (վար. հաստատեցաւ): Նա ի գոգսն Աբրահամու հանգչի, եւ որ բերէ զկաթ ջրոյն, զի զովացուցէ զվտանգելոցն զեղու, ոչ որ է (վար. ոչ է): Կորնաւ գեղեցկութիւնն այն, լոնաց ձայնն, կարկեցան շրթունքն, թոեաւ շնորհն... լուայ եւ ձայնս ոմանս յերեմիայէ տխրականս եւ սգաւորս, որովք յամայանալ քաղաքին երուսաղէմացոց ողբայր...:

Բաց ի «Առ Մեկտոս», նաոխից² Խորենացին ճարտարութեամբ օգտուել է նոյն Նազիան-

¹ Ակնարկութիւն Մեկտոսի եռակի արտրման մասին Կոստանդի, Յուլիանոսի եւ Վաղենտինոսի ժամանակ:
² Տես Ձեռ. Վիեն. Մեկթ. Թ. 217, էջ 126a:

զացու միւս գրութիւնների հատուածներից եւ առանձին դարձուածքներից:

Այսպէս «ի հայրն ասացեալ ճառից» Մովսէս քաղել է հետեւեալը. «զհօտս տարակուսեալ ի վայր անկեալ տեսանեմ», որքան լի տրտմութեամբ եւ տխրանօք. ոչ եւս ի տեղը ոչ դալարոյ հանգուցեալ եւ ոչ ի ջուրս հանգրստեան¹ անեալ խնդրէ զգահավիժութիւնս եւ ամայութիւնս...»:

Նազիանզացու «Յաղագս ի ձեռնադրութենէ հրաժարելոյ» ճառից² — Խորենացին քաղել է հետեւեալ հատուածները. — «...բայց զինչ ասիցէ որ վասն սնափառութեան եւ կամ վասն իշխանասիրութեան զանիրաւութիւնն ի բարձունս խօսողացն... ոչ ընդդէմ՝ Մուսիսի, այլ ճշմարտութեան զինեցելոց եւ առողջութեան վարդապետութեան հակառակ յարուցելոց, որք երբորդ մասինն անխրատութեան եւ որ զհետ նորին երթան խրատութեան յախունն ամենայն բանիւ դիմեն վարազական ակտիւն եւ կոխեն զգեղեցիկ մարգարիտն ճշմարտութեանն... Այլ երբեմն յայլմէ դանդաղեալք եւ շօջեալք եւ ամենայն բանիւ քակտեալք եւ կոխեալք յոլովս փոփոխեն վարդապետս եւ քազում գիրս, որպէս փոշի հողմովք դիւրագոյն ի բաց անկեալք եւ վաղջան տաժանին լսելօք եւ մտօք: Ո՞վ անբանութեանս, առ ամենայն քան նմանապէս

¹ Համմ. նաեւ «Սաղմոսք» Իբ, 2:

² Տես 2եւ. Վիեն. Միխիթ. Թ. 217, էջ 110 եւ հետ:

դժուարին եւ չար օրինակ ինքեանց գրեն զայն. զ(ի) ծիծաղելն զմտօք եւ զարհամարհելն իբրեւ զանհաստատնով եւ որ ինչ առողջա գոյնս ունիցի, եւ զհաւատովն զանցանեն անհանձարաբար յասողացն ի բանս...»:
«...որով սպառազինութեամբ առ ի չարին խարդախութիւնս զինեցայց, որ Մովսէս այսմ յաղթեցէ... որ Յետուս յետ նորա զօրավարութեամբ աստուածային պատերազմացն հանդերձ մեւք պատերազմեցէ... ոչ եւ Յորոբովամ...»:

«Առ Աթանաս»¹ ճառից Խորենացին առել է այս նախադասութիւնը «...Ո՞ր դժբերմիսս ողբասցէ զմեր խառնակութիւնս եւ զխաւարս, որ միայնն գիտէր հաւասարեցուցանել զողբս ակտիցն»:

Կայ նաեւ մի այլ դարձուածք մեր պատմագրի մօտ — «Աշակերտք հեղզ առ ուսումս եւ փոյթ առ ի վարդապետել, որ նախ քան զտեսութիւնն աստուածաբանք» — որի մասին Հայկազեան Բառարանը² նկատում է, որ դա փոխ է առած Նազիանզացուց:

Խորենացու այս գլխաւոր աղբիւրի Նազիանզացու մէջ, իբրեւ հիմնական նկարի մէջ հիւսուած են իբրեւ զարգարանքներ առանձին դարձուածքներ եւ հատուածներ ուրիշ հեղինակներից:

¹ Տես ձեւ. Վիեն. Միխիթ. Թ. 217, էջ 110 եւ:

² Տես Նոյն տեղը. Աստուածաբան:

Այսպէս Փիլոնից քաղած են, վերեւում բերած (էջ 329) խորենացու գարձուածքն՝ «ամենիմաստ արուեստիս եւ կատարելագոյն յարմարութեամբս», նոյնպէս «զերասանակս ի բունն առեալ», եւ «երկրի անբերութիւնը պտղոց»¹:

Ս. Կրքից առած են «... փայփայեցից զնոսս. որպէս փայփայէ հայր զբոգի զբարւոր ծառայեալ նմա» (Մարգ. Մաղար. Գ, 17): — «Զայս գիտաաշխէ՛ թէ յաւուրս յետինս եկեցցին ժամանակք չարք: Զե եղիցին մարգիկք անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք: Անուէրք, անգութք, բանսարիւրք, անժոյժք, վէսք, անբարեկէրք: Մատնիչք, յանդգունք, ամբարհաւածք, ցանկասէրք մանաւանդ քան աստուածասէրք... (Առ Տիմոթ. Երկր. Գլ. Գ/1—4): — «Ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց» (Նսայի գլ. ԾԵ/21):

Գարձեալ, բնութեան անբնական փոփոխութիւններն նկարագրութեան մէջ, ես տեսնում եմ Շիրակացու ազգեցութիւնը: Մի աստղաբաշխական գրուածքի մէջ «Յաղագս կենդանատեսակաց» (էջ 62—63), որ թարգմանուած է, ըստ երեւութիւն, Պօղոս Աղէքսանդրացուց³, Անանիան ասում է. «... Երկոտա-

¹ Վանն Ելից. բ. 115:

² «Վարք Իմաստնոց», էջ 57:

³ Յես Հ. Յ. Թորոստանի գեղեցիկ յօդուածը «Բարգմաղէպի», մէջ 1896, մայիս:

սաներեան սոքա (կենդանատեսակք) շարժին չորիւք տարբերութեամբք՝ առ ի լինել միոյ տարեւոր ժամանակի... եւ առնեն շերմութիւն եւ ցրտութիւն, խոնավութիւն եւ երաշտութիւն եւ իշխեն փոփոխմանց օդոց եւ ժամանակաց, բայց եթէ աստուածային ինչ հասանէ հրաման, վասն որոյ փոփոխին տարերց բնութիւնք, թէ արգեօք յօղորմութիւն կամ ի խրատ, որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի շերմութիւն, կամ յամարայինն ցրտութիւն, կամ ձիւնաբերութիւն եւ շնչումն աստուածանեաց, որ է արտաքոյ բնութեան ժամանակի եւ գիտելի նմա միայնոյ...» մի այլ տեղ «Յաղագս որ ի մէջ երկնի եւ երկրի շարժմունք» (էջ 46—47) նոյն աստղաբաշխը նկատում է. «... Ապա թէ լինիցի ինչ հետեւանք վնասուց ի սաստիկ որոտալոյ, իբր թէ կարկուտք եւ հրաձգութիւնք, այս ի վրէժխընդրութիւն անզգամաց եւ ի խրատ այնոցիկ, որ զահ հեւ զերկիւղ Արարչին չունին յանձինս իւրեանց: Քանզի... անչափութիւն անձրեւաց ողողանեն, եւ երաշտութիւնք գերկեր գալարաբեր ցամաքեցուցանեն, եւ ժանտախտք, սուր, հիւանդութիւնս, մինչեւ հարկանել մարդ եւ անասուն առ հասարակ...»:

Վերջապէս, իբրեւ ՎԸ գլխի աղբիւրներից մէկը պէտք էր մասնացոյց անել եւ Ը. դարու պատմագիր Ղեւոնդի վոյ, որի գրուածքի հետ խորենացին, ամենայն հաւանութեամբ, ծանօթ

էր¹: Պատմելով մորեռանդ մահմեդականների խարդաւանքների մասին (Է. դ. վերջը եւ Ը սկիզբը), որոնք նախանձով էին նայում, ի միջի պլքց, Ս. Գրիգորի մենաստանի բարեզարդութեան եւ հարստութեան եւ մտածում էին գարշելի միջոցներով ոչնչացնել ամբողջ միաբանութիւնը, — Ղեւոնդը յուսահատ գոչում է. «Ո՛վ դք առանց արտասոււաց բերիցէ զանհնարին աղէտսն, որ ժամանեաց նոցա. զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեզարդութենէ ընկնիս եւ լռեալ ձայն աստուածային փառատութեանն»²: Ս'ի այլ տեղ³ նոյն հեղինակը մնայլ գոյներով է նկարագրում մեզ իր հայրենակիցների անել վիճակը անգուժար բների ծանր լծի տակ (մօտ Է. դ. կէսերն) — որը կարելի է, թէ նոյնպէս առանց ազդեցութեան չէ մնացել «Հայոց Պատմութեան» մեզ հետաքրքրող գլխի վերջին տողերի վրայ:

¹ Տես իմ «Հայոց Աէս» էջ 131, 190, 216:

² Տես Ղեւոնդի Պետերբ. հրատ. էջ 20—21:

³ Նոյն էջ 136—137:

Մ Ե Ծ Ն Տ Ր Ի Ա Տ

Ա.

Արշակունեաց հարստութիւնը Հայաստանում վերականգնող եւ առաջին անգամ բրիտանեութիւնը պետական կրօն ճանաչող թագաւորի անձնաւորութիւնը հարկաւ զարդարուած է առասպելական զրոյցներով: Ժողովրդի երեւակայութեան մէջ Տրդատ երեւան է գալիս նախ եւ առաջ իբրեւ մի հսկայ, օժտուած անսովոր Ֆիզիքական ոյժով: Ագութանգեղոսի մէջ՝ չնայելով նրա գրուածքի վարքագրական բնաւորութեանը՝ պահպանուել են այդպիսի զրոյցների հետքեր Տրդատի մասին: Պատմում է՝ օրինակ, թէ ինչպէս մի անգամ նա, երբ ծառայում էր Լիկինիոսի մօտ, նրա զօրքի համար պաշար ձեռք բերեց, խոտի ահագին խուրձերը քաղաքի պարիսպներից վար ձգելով, հանդերձ նոցա վրայ գտնուած պահպաններով ու շներով: Այս քաջութեան լուրը ամէն տեղ տարածուեց, եւ երբ հռովմայեցիք պատերազմ ունէին Գոթաց հետ, Տրդատ հռովմեական կայսեր զգեստներ հագնելով դուրս է ելնում Գոթաց ամեհի թա-

գաւորի դէմ մենամարտելու եւ յաղթում է նրան: Այս անսովոր քաջութեան համար նուէր է ստանում Տրդատը կայսրից Հայոց թագաւորական թագը¹:

Նրա քաջութեան եւ անվեհերութեան մասին քանիցս պատմում է վառ գոյներով, մանաւանդ թշնամիների դէմ միշտ ճակատամարտերում²:

Մի անգամ երբ նա պատերազմ էր մղում Տաճիկների (Արաբացիք) երկրում, Տրդատ ծանր վիրաւորուած լինելով իջնում է երիւկարից, ձգում է իր մէջքին նրա ասպազէնը, իւր առնագէնքը եւ լողալով անցնում է Նիքրատ գետը, հետը քարշելով նաեւ իւր երիվարը³:

Հայոց թագաւորի վեթիսարի ոյժը ամենից պարզ երեւան է գալիս այն նկարագրութեան մէջ, թէ ինչպէս նա ութ վեթիսարի քարքը բարձած ուսին Արարատից բերեց Վաղարշապատ մայրաքաղաքը վկայարանի շինութեան համար⁴: Թողովորդական երգը նկարագրում է նրան այսպէս՝ «Իբրեւ զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց⁵»:

Բաց ի վերոգրեալից, Ագաթանգեղոս յիշում է, որ Տրդատ Հռովմում եղած միջոցին,

¹ Ագաթանգեղոս, Վենետ. էջ 46-49:

² Նոյն էջ 104, 144, 157:

³ Նոյն էջ 158:

⁴ Նոյն էջ 576:

⁵ Նոյն էջ 103:

իւր պատանեկութեան ժամանակ նշանաւոր գանուեց եւ ողիմպիական խաղերում, ցոյց տալով անսովոր արիութիւն եւ զարմանալի քաջութիւն¹: Գժբախտաբար նա չէ հաղորդում եւ ոչ մի դէպք Հայոց թագաւորի այդ քաջութիւններից²:

Գառնանք այժմ Խորենացուն: Մեր հեղինակն, որ Տրդատի պատմութեան համար չունէր այլ աղբիւր, բաց ի Ագաթանգեղոսից, թագաւորի նահատակութիւնների մասին դիտէ նոյն այս աղբիւրից, բայց նկարագրում է նոցա բաւական փոփոխած ձեւով:

Նախ եւ առաջ, նա Տրդատի նահատակութիւնները բաժանում է շրջանների. նահատակութիւններ մինչև նրա թագաւորանալը (Գլ. 2Թ.). նահատակութիւններ նրա թագաւորանալուց յետոյ, բայց մինչեւ հաւատալը (Գլ. 2Բ.) եւ վերջապէս նահատակութիւններ նրա հաւատալուց յետոյ (Գլ. 2Լ.):

Ապա օգտուելով Ագաթանգեղոսի անցողակի յիշած ցուցմունքից Տրդատի Ողիմպիական խաղերում ունեցած յաջողութիւնների մասին, Խորենացին բերում է նրա նահատակու-

¹ Նոյն էջ 157:

² Տրդատի եւ Առասանդիանոս Մեծի մի բանի քաջագործութիւնների նմանութեան պատճառով Միսիթաբեան Հ. Բ. Սարգիսեան ենթադրութիւն է անում, թէ կարելի է զարծի հեղինակը փոխ է առել այդ դիպուածները Թողովորդականութիւն ստացած հռովմայեցի կայսեր պատմութիւնից (տես նրա հետագ. Ագաթանգեղոսի մասին Վեն. 1890, էջ 35):

Թիւններէից երեք դէպք, որոնք ինչպէս երեւում է ստուգելուց ամբողջովին փոխ են առած Եւսեբիոսի Ժամանակագրութիւնից (այն է ողիմպիական խաղերում մասնակցող ըմբշամարտներէ ցուցակից) եւ Վալիսթենէսից:

Այսպէս, ողիմպիական խաղերի հիմնադրութեան առթիւ Եւսեբիոս նկատում է, «վասն Ագոնին դնելոյ, որ են մրցութեան հրահանգք... բայց ոմանք զբովանդակն երիս ասեն մինչեւ ցիփիտոս¹, որ նորոգեաց զագոնն...: Ի դիցն հրամանք ինչ այսպիսիք Պեղոպոնեսուացւոց, մտէք ի մեհեան եւ զոհս մատուցէք²...»: Սրանից յետոյ կեսարիայի եպիսկոպոսը բերում է հռչակուած ըմբշամարտներէ անունները — ձերդ ողիմպիականում — «Կերասոս Արգիացի, որ զկճղակ եզինն թափեաց³» եւ ձեռնդրում «Եւ ի մարտին Կղիտոստրատոս Ռոդացի, որ զվզէ եւ եթ կալեալ յաղթէր⁴»:

Իսկ Աղեքսանդրի պատմիչը բերում է մի հետաքրքիր դէպք երիտասարդ արքայազնի

¹ Խորենացու Թարգմանիչները սովորաբար անճիշդ են թարգմանում այս անունը իբրեւ «Պիւթիա», մինչդեռ այստեղ խօսքը Իփիտոսի մասին է (Խորենացու մօտ այդ անունը մէջ է բերած նախընթաց հազագով Հիփիտոսուայ եւ վար. Հեփեսոսոս) որ Հեփիտի բնակիչ էր եւ Յուստանի կառավարիչ (Procurator), որուն են վերագրում ողիմպիական խաղերի սահմանելը: Խորենացու իտալական Cappelletti թարգմանիչը Հեպեսոսը թարգմանում է «Vulcano»:

² Քրոն. Ա. էջ 132:

³ Նոյն էջ 140:

⁴ Նոյն էջ 142:

կեանքից, որը խիստ ցանկանում էր կառք վարել մրցութեան ասպարէզի վրայ եւ անպատուած էր Ականանիոյ Թագաւոր Նիկողայոսից իւր այս անձնապաստան յանդրնութեան համար: Նրան վրէժխնդիր լինելու նպատակով, Աղեքսանդր մտաւ կառքով ասպարէզ մրցելու, եւ ինքը Նիկողայոսից առաջ ընթանալով, (դիտմամբ) վայր ընկաւ զետին, որպէս զն միջոց տայ իւր հակառակորդին առաջ անցնել. այստեղ Նիկողայոսի ձին աջ կողմից սայթաքեց եւ կառքը շրջուեց կառավարի հետ միասին. իսկ Աղեքսանդր ամենայն արագութեամբ ընթացաւ Նիկողայոսի վրայ, որը եւ (տեղնուտեղը) վախճանուեց¹: Վալիսթենէսի նոյն պատմութիւնից են վերցրած Տրդատին վերաբերեալ «յերիվար կամակար աշտանակեալ²» դարձուածքը:

Այնուհետեւ, Խորենացու Տրդատի նահատակութիւնների նկարագրելուց յետոյ, առաջ բերած պատմութիւնը Պուրթոս կայսեր զօրքերի ապստամբութեան մասին, սովի պատճառով եւ նրա սպանումը — Խորենացին բառացի փոխ է առել Մաղաղասի ժամանակագրութիւնից, նոր մանրամասնութիւններով հանդերձ, օրինակ ինչպէս Տրդատ միայնակ դիմադրեց զինուորների կատաղած ամբոխին, որոնք լիկինոսի ապարանքի վրայ էին յարձակուում նրան սպանելու: «Ο δέ αὐτός βασιλεύς Πρῶβος ἐπολέμησε τοῖς Γόθοις ἐν τῷ Σιρμίω. καὶ ἐν

¹ Աղեքսանդրի պատմ. հայ. թարգմ. էջ 26-27:

² Նոյն էջ 16:

τῷ πολεμῆν αὐτόν ἐγένετο λίμος κοσμικός
μέγας, καὶ μὴ εὐρεθόντων ἀναλωμάτων ἐστα-
σίασεν ὁ στρατός. Καὶ ἐπελθόντες ἔσφαξαν
αὐτόν ἐν τῷ Σίρμω...» (p. 302).

Եւսեբիոսի ժամանակագրութիւնից
գլխաւորապէս փոխ են առած Պոռթոս թա-
գաւորի յաջորդ Կարոսի եւ նրա որդոց
Նոմերիանոսի եւ Կարինոսի մասին եղած
տեղեկութիւնները, անսոյգ մանրամասնու-
թիւններով հանդերձ ինչոր կողմակի մասին, որ
առաջ է եկել ըստ երեւութիւն ժամանակա-
գրութեան յունարէն բնագրի հայ թարգ-
մանչի սխալ ընթերցումից, որը եւ սխալմամբ
կրկնել են Խորենացին եւ ուրիշներ: Խնդիրն
այն է, որ Եւսեբիոսի մօտ 2303 թուականի
տակ յիշում է «ի Կարայ վախճանելն ի Մի-
ջագետոս, Նոմերիանոսի առ նովա լինէր
սպանանել ի Թրակ եւ Կարինոսի նոյնպէս
ի Կոռնակայ պատերազմին»: Ամենայն հաւա-
նականութեամբ Եւսեբիոսի բնագրին այստեղ
աղաւաղուած է մեզ հասած. Յերոնիմոսի մէջ
լատիներէն թարգմանութիւնն այստեղ աւելի
մանրամասն եւ ճիշդ ընթերցուածք ունի. Carus
Narbonensis cum omni Parthorum regione
vastata Chochem et Ctesiphontem nobilissimas
hostium urbes cepisset, super Tigrim castra
ponens, fulmine (sic!) ictus interiit... Carinus
proelio victus apud Margum occiditur»¹,

¹ Chron. Բ. էջ 165:

² Migne, Patrol. Ser. gr. T. XXVII, p. 657.

նոյն է հաստատում նաեւ Սիւնկեղոս. «Κάρου...
κεραυνῶ κατασκήψαντος... διαφθείρεται...
Այսպէս Կարոսը մեռաւ Կայծակնայար լինելով:
Այս հիմամբ նաեւ Լանգլուան¹ ենթադրեց, որ
հայ ժամանակագրութեան թարգմանիչը
բնագիրը շփոթել է, ընդունելով քերսոսոս
(«կայծակ») բառը, հաւանորէն, աղաւաղուած
χορᾶχος բառի պատճառով, յատուկ անուն
տեղ²:

Սակայն այս ենթադրութիւնը կարօտ է
ստուգութեան: Յերոնիմոսի եւ Սիւնկեղոսի յի-
շատակութիւնը կայծակի մասին վերաբերում է
Կարոսին եւ ոչ թէ Կարինոսին, որի հետ իսկա-
պէս կապում է Եւսեբիոսի հայ թարգմանու-
թեան «Կոռնակը»: Այդ պատճառով, ինձ
թւում է, որ աւելի հիմնաւոր կը լինէր են-
թադրել, որ «կոռնակ» բառը («ի կոռնակայ
պատերազմին») առաջացել է «Μάργος»
բառի աղաւաղութիւնից (proelio apud
Margum) — որ Միւսիայի քաղաքներից մէկի
անունն է եւ որտեղ ինչպէս Յերոնիմոսից
երեւում է Կարինոսը ճակատ մղեց եւ ընկաւ:
Բաց ի սրանից պէտք է դիտել, որ Եւսե-
բիոսի Հայոց թարգմանութեան մեզ հե-

¹ Coll., II, p. 120.

² Տես նոյնպէս Ալեշան, «Այրարատ», էջ 376. եւ
Տաշեան Ագաթանգեղոսի մասին, էջ 124. — Սամուէլ
Անեցին, ժԲ դարու հայ ժամանակագիրը կրկնելով բա-
ռացի Եւսեբիոսին, աւելացնում է նոյնպէս, որ կոռնակ
Կարոսի սպանողը, Հայոց Խոսրով թագաւորի, Տրդատի
հօր՝ զօրավարն էր. նա սպրեց ճկ տարի... (հրտ. Վա-
ղարչու, էջ 62):

տաքրբրող հատուածում «Կոռնակ», դեռ անձնաւորութիւն չէ, իսկ մեր քննութեան նիւթ եղած Խորենացու այս հատուածում — արքայազն Տրդատ մինչև իւր թագաւորանայը գտնուում է Կարինոս կայսեր զօրքի մէջ եւ նրա հետ միասին արշաւում է «Կոռնակի», վրայ. հետեւապէս եթէ «Կոռնակ» ընդունենք իբրեւ անձնաւորութիւն, չէր կարող ոչ մի կապ ունենալ Հայերի հետ, որ ինչպէս ընդհակառակն է երեւում, հաւանօրէն թիւրիմացութեամբ Սամուէլ Անեցու մօտ:

Խորենացու «Յոննոյն», բառի ընթերցման վերաբերմամբ, Եւսեբիոսի Ժամանակագրութեան «ի Միջագետս», բառի փոխարէն (վերջիջեալ «Կարայ վախճանեալ ի Միջագետս», հատուածում), տես իմ «Հայոց վէպ», էջ 34:

Այստեղ իսկ օգտուում է մեր պատմագիրը Ագաթանգեղոսի բերած Տրդատի նահատակութեան նկարագրութիւնից, այսինքն այն միջնավէպով, թէ ինչպէս նա լողալով անցաւ Եփրատը, — միեւնոյն ժամանակ նա այս դէպքը վերագրում է Կարինոս կայսեր դժբախտ արշաւանքի ժամանակին, որի զօրքում գտնուում էր Հայոց արքայազնը:

Ահներեւ է ուրեմն, որ ամբողջ Հիւ գլուխը կազմուած է Եւսեբիոսի հիմամբ, Կեղծ-Կալիսթենէսի եւ Մաղաղասի հատուկոր տեղեկութիւններով հանդերձ: Կարելի է արդեօք այստեղ գտնել հետքեր Փիրմիլիանոսի պատմութեան:

Ոչ աւելի լաւագոյն է նաեւ Տրդատի երկրորդ շրջանի նահատակութիւնների վիճակը, այն է նրա նահատակութիւնները «ի թագաւորութեանն յառաջ քան զհաւատալն» (Գլ. 2Բ):

Խորենացին այստեղ եւս օգտուում է Ագաթանգեղոսի ակնարկութիւններից Տրդատի քաջագործութիւնների մասին, որ ցոյց է տուել նա իւր թշնամիների դէմ մղած կռիւններում¹ եւ իր կողմից բերում է նոցա նկարագիրն: Այսու հանդերձ մի դէպքում նա վկայութեան է կոչում Ս. Գրքի Եղեանանի եւ Իզեասամի նման նահատակութիւնը (նա ըարձրացրեց իւր նիզակը երեքհարիւր (մարդկային) վերաւորների վրայ), իսկ մնացեալ երկու դէպքերը (սոցա թւում եւ այն պատմուածքը, թէ ինչպէս Տրդատ նիզակով քշեց փղերի երամակը) մի տեղից փոխ է առել, բայց թէ ո՞ր տեղից՝ անյայտ է:

Բաց ի դրանից Տրդատի հրաւերը բոլոր հիւսիսականներին (այսինքն չոնբերին եւ այլոց) եւ Պարսից վրայ յարձակումը կապ ունի Ագաթանգեղոսի հետ (էջ 104) — Տէրութեան իւրաքանչիւր կողմի գլխաւոր զօրավարների (չորս) անունները, փոխ են առած Փաւստոսից — այն է՝ Բազարատ Բազարատունի, Վահան Ամատունի եւ Մանաճիհր Ռշտունի. իսկ Վրաստանի «առաջնորդ» Միհրան, ըստ երեւութիւն, Վրաց յետին աւանդութիւններից

¹ Ագաթ. էջ 104, 144, 157:

Վրաց դարձի մասին: Այս մասին մանրամասնորէն կը խօսուի 22 գլխի քննութեան մէջ:

Պարսկց գրքերից եւ Փերսիականոսից յետոյ, խորենացու երրորդ աղբիւրն է — Արտիթէս: Կրան է վերագրուում նամակի ձեւով գրուած համառօտ պատմութեանքը Ս. Գրիգորի եւ նրա որդւոց ծննդեան եւ կեանքի մասին, գրուած Մարկոս Յագոռճանցի միայնաւորի խնդրանօք. — «Յայտարարութիւն սակաւութեան եւ վարուց Գրիգորի եւ որդւոցն, ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնաւորի ի Յագոռճանի» (Գլ. 2):

Մեր պատմիչը հասկացնել է տալիս, թէ նա նոյն այս աղբիւրից է քաղել իր պատմութիւնը Անակի Հայաստան գալու եւ Ս. Գրիգորի յղութեան մասին Արտաղ դաշտում թագէտս առաքեալի գերեզմանի մօտ (Գլ. 4Գ):

Այս երկու գլուխը միշտ ներկայացնում էին քննադատութեան համար մեծ դժուարութիւններ, ո՞վ է այդ Արտիթէս եպիսկոպոսն, ի՞նչ է նշանակում միայնաւոր Մարկոս եւ Յագոռճանը ի՞նչ տեղ է, սոքա միջեւ այսօր իսկ մնում են անբացատրելի:

Արտիթէս, գուցէ նոյն անձն է, որի մասին յիշատակում է Ագաթանգեղոս 12 երիտասարդ եպիսկոպոսների թւում, որոնց ձեռնագրեց Ս. Գրիգոր քուրմերի դասակարգից: սակայն նրա պատմական աշխատութեան մասին ոչ մի տեղ չէ յիշուում: Փաւստոսի յիշած Արտիթ

(Գ դարու վերջը) հազիւ թէ նոյն անձը լինի, Փաւստոս սրան կոչում է Գանիէլի աշակերտ (որը ըստ կարգին եղել է աշակերտ Ս. Գրիգորի), որ ապրում էր Տրդատ Մեծի թոռ Տիրան թագաւորի ժամանակ. հետեւագէտ այս Արտիթը չէր կարող եպիսկոպոս լինել Ս. Գրիգորի ժամանակ:

Մարկոսին դեռ եղբ. Վեստոնները նոյնացրին Սողոմէնոսի յիշած Մարկոս անապատականի հետ (VI, 29), բայց թէ որքան այդ հաւաստի է, ես չեմ յանձն առնուլ դատել: Կոյն եւս պիտի նկատեմ նաեւ «Յագոռճանի» մասին:

Թէ խորենացին այս գլուխները կազմելու ունէր ինչոր աւանդախառն մի աղբիւր, որ կազմած էր ըստ ամենայն հաւանականութեան, Ագաթանգեղոսի¹ հիմամբ եւ հաղորդում էր յիշեալ մանրամասնութիւնները Ս. Գրիգորի կեանքից (Գլ. 2), — երեւում է, նախ «կողմն Գամրաց» (Կապադովկիայի նշանակութեամբ) ասացուածքից, որ գործ է ածուած միայն այս գլխում, մինչդեռ միւս բոլոր դէպքերում Մովսէս գործ է ածում «Կապադովկիա» անունը, եւ երկրորդ Զենոբի պատմութիւնից, որի հեղինակն ունէր ձեռքին միեւնոյն աղբիւրն եւ օգտուում էր նրանից աւելի լայն չափերով, քան խորենացին²:

¹ Էջ 639-641:

² Իմ հետազոտութեան մէջ Զենոբի մասին (Վիեն. 1893 թ.) Զենոբի եւ խորենացու մէջ եղած նման հատուածները եւ վերագրում էի վերջինիս անմիջական աղ-

Այսպէս, բացի մեր պատմչի յիշած յատուկ անուններից — Ս. Գրիգորի ստնտուհի, նրա ամուսնոյ եւ հօր, նաեւ նոյն Գրիգորի աներոջ, նրա կնոջ եւ նրա որդու Արիստակէսի ուսուցչի, — Զենոր առաջ է բերում հետաքրքիր տեղեկութիւններ. 1. Ճենաց թագաւորի անյաջող միջամտութեան մասին Հայոց Խոսրով թագաւորի առաջեւ, սրան Արտաշէր Սասանի հետ հաշտեցնելու նպատակով¹. 2. Այն մասին, թէ ինչպէս Բուրդար Պարսիկը դուրս եկաւ Պարսկաստանից Անակի այս տեղից դուրս գալուց անմիջապէս յետոյ եւ հասաւ Արտաշ (ուր տեղի էր ունենում Ս. Գրիգորի յղութիւնը), իսկ յետոյ արդէն ուղեւորուեց Կապադովկիա (Զենոր նոյնպէս գործ է ածում այստեղ «Գամբը») ². այն մասին, թէ Բուրդար ապրեց Կեսարիայում մէկ տարի. 3. որ Բուրդար կամենալով վերադառնալ իր կնոջ հետ պարսկաստան, իւր աներոջից արգելուեց Այրարատեան գաւառում եւ կանգ առաւ Վաղարշապատում. 4. որ Ս. Գրիգորի մայրը կոչուում էր Ոգոհի. 5. որ նորա Սուրէն եղբայրը դայեակներէ ձեռքով ազատուեց եւ տարուեց պարսից

դեցութեան. բայց ներկայումս Խորենացու պատմութեան նոր լուսարանութեան պատճառով, ես թոյլ եմ տալիս եսթագրելու, որ գոյութիւն ունէր մի ընդհանուր աղբիւր, որից օգտուել են երկու պատմիչները, իւրաքանչիւրն ըստ իր հայեցողութեան:

¹ Վենեա. հրտ. էջ 21:

² Նոյն էջ 21:

դուռը (այս հաստատում է եւ Սերէոս էջ 36), ուր եւ սնուեց իւր հօրաքրոջ Խոսրովուհու մօտ, որ Հեփթաղաց Զիվանշիր թագաւորի կինն էր. 6. որ Սուրէն իւր հօրաքրոջ մօտ տասը տարի մնալով գնաց Զինաստան եւ այն տեղ թագաւորեց¹. 7. որ Ս. Գրիգոր Կեսարիայում մտաւ դպրոց եւ սովորեց Ասորի եւ յոյն լեզուները. 8. որ հիւսիսականների Գեղրեհն թագաւորը ձգեց իր պարանը Տրդատի վրայ նրան սպանելու նպատակով, բայց Հայոց թագաւորը Գեղրեհնին իւր ձիու հետ միասին միջից կէս արաւ²:

Խորենացին իբրեւ աւելի լուրջ պատմիչ՝ զգուշացել է օգտուիլ իւր աղբիւրներէ շատ առասպելական մանրամասնութիւններից, բաւականանալով իր կարծիքով ինչ որ առաւել անհրաժեշտ եւ կարեւոր էր, սոցա թւում Ս. Գրիգորի Արտաշ դաշտում յղանալու պատմութեամբ:

Այս յետին աւանդութեան մասին պէտք է դիտել, որ ոչ միայն Ագաթանգեղոս ոչինչ նման չէ հաղորդում, այլ մինչեւ իսկ նրա պատմածները հակասում են այդ (աւանդութեան) վկայութեան: Հայոց դարձի պատմութիւնից (էջ 37) երեւում է, որ Ս. Գրիգորի հայրը, Անակ Պարթեւն, եկաւ Հայաստան իւր չար դեւտաւորութիւնը ի կատար ածելու նպատակով

¹ Նոյն էջ 22:

² Նոյն էջ 46—47:

իր եղբոր, կնոջ եւ որդւոց (sic) հետ. հետեւապէս Անակի այն «երկու մանուկները», որ պատուեցին Թագաւորի սպանողի ցեղը ջնջելու ժամանակ (էջ 41) ծնուել էին դեռ Պարսկաստանում, եւ ոչ թէ Հայաստանում, ինչպէս խորենացին է հաստատում, ուր Անակ Ագաթանգեղոսի վկայութեամբ մի քանի ամիս միայն մնաց — ձմրան վերջը եւ գարնան սկիզբը: Աւրագրելով Լուսաւորչի յղութիւնը նրա հօր Հայոց Թագաւորութեան սահմանները մտնելու ժամանակին, Մովսէս սրա հետ միասին ստիպուած է այս կարճ ժամանակը ձգել մինչեւ երեք տարի, որպէս զի միջոց տայ երկու մանուկների ծննդեան:

Ի վերջոյ աւելորդ չէ նկատել, որ քննադատութեանս նիւթ եղած գլուխը (2) կազմելիս մեր հեղինակն երկու անգամ օգտուում է Գր. Նազիանզացուց, փոխ առնելով նրանից հետեւեալ ինքնուրոյն դարձուածքները. «որպէս կամք են ասել իմոյ բանի»¹, «ոչ զհետ ընթանայր (Բարսեղ) զպատուոյն, այլ պատիւն զինի գայր»²:

Նոյն աւանդախառն աղբիւրից է քաղած, ըստ երեւութիւն եւ Տրդատի վերջին նահատակութիւնն, որ նա կատարել է հաւատալուց

¹ Տես իմ քննադատութիւն. «Մ. խորենացի եւ իւր աղբիւրներ», — Գր. Նազիանզացի (խորենացու եւ Նազիանզացու 46 համեմատական զուգընթաց տեղերը) Արարատ 1898 Նոյեմ. Դեկտ. եւ առանձ. արտատպ. էջ II):

² Ճառ առ «Բարսեղ», Վիեն. Միս. ձեռ. Թ. 217 էջ 140ա:

յետոյ (Գլ. 26), այն է — «Նահատակութիւն Տրդատայ ի պատերազմին յԱղուանս, յորում միջակտուր արար զԹագաւորն Բասլաց»¹: Այս պատմութիւնը ինչպէս յայտնի է, բաւական մօտ յիշեցնում է Յովսէպոս Փլաւիոսին¹, որը հաղորդում է նման մի դէպք Ներոնին ժամանակակից Հայոց համանուն Թագաւորին պատահած Ալաններ Մարաստան եւ Հայաստան արշաւելու ժամանակ: Ինչպէս մենք տեսանք, Մովսէսի եւ Զենոբի ընդհանուր աղբիւրը յիշում է հիւսիսականների Թագաւոր Գեղրեհնին, սակայն այս վերջինս խորենացու մօտ փոխած է Բասլաց Թագաւորի, որ ժամանակի կանխումն (anachronism) է ներկայացնում, որովհետեւ այդ ազգը պատմութեան մէջ յիշուում է միայն Զ դարում յետ քրիստոսի:

Բաց ի դրանից պէտք է դիտել, որ Վրաց Միհրան Թագաւորին յատկացրած է աւելի մի համեստ վիճակ, քան ունէր իսկպպէս. նա այստեղ ներկայանում է Հայոց չորս զօրապետներից մէկը, որոնց նշանակել էր Տրդատ եւ կոչուած է «Առաջնորդ Վրաց»²:

Վերջին աղբիւրն, որից խորենացին քաղում է իւր պատմութիւնը Բ գրքի մնացեալ տասն գլուխների համար (2Ա, 2Գ, 2Դ, 2Զ—ՂԲ) է — «բանք արանց իմաստնոց եւ հնախօս սիրա-

¹ Եբրայեցի պատմիչ բուն պատմութիւնը (Bel Jud. VII, 7, 4) շահագործել է մեր հեղինակը Արտաշէս Բ-ի պատմութեան համար: Տես իմ «Հայոց Վէպ», էջ 244—245:

² Տես նոյնպէս մեր պատմագրի Գ գրքի Զ գլուխը:

բանից» ինչպէս ասում է մեր պատմագիրը (Գլ. 4Ե): Գժուար չէ մակաբերել, որ այդ «իմաստուն հնախօսները», պէտք է յոյներ լինէին, բայց թէ ոչ. յայտնի չէ. Խորենացին չէ յիշում յականէ անուանէ եւ ոչ մէկին նոցանից. ես ասում եմ « յոյներ», են, որովհետեւ Խորենացին Հայոց մէջ չէ ընդունում հնախօսութեան գոյութիւն (Գ. Ա.):

Կանգ առնենք նախ 2Ա եւ 2Գ գլուխների վրայ, որտեղ պատմում է Մամիկոնեան իշխանութեան ծագումը եւ Ալկունեաց ցեղն սատակումը Մամիկոնէից նահապետի ձեռքով:

Անցողակի նկատենք, որ հազիւ թէ որեւէ յոյն հնախօս-սիրաբաններ կարողանային իմանալ հայ նախարարութիւնների ծագման եւ աւելի պակաս նոցա մէջ եղած երկպառակութիւնների մասին, Խորենացին, ըստ սովորութեան, թագցնում է իւր իսկական աղբիւրը, որը սակայն մենք կ'աշխատենք գտնել:

Թէ գոյութիւն ունէր ինչոր աւանդութիւն Մամիկոնեանների չինական ծագման մասին, այդ մասին յիշում են մի քանի անգամ իրենք՝ այդ ցեղն իշխանները զեռ Գ դարում: Փաւստոսի մէջ այդ աւանդութիւնը դրւում է Պապ Թագաւորի բերանը (Ե, 4), իսկ Մանուէլ Մամիկոնեան մինչեւ իսկ համառօտ հաղորդում է իրենց ցեղն Չինաստանից գաղթելու ստիպողական պատճառի եւ Հայաստանում հաստատուելու մասին. «մէք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ ի վերոյ քան զձեզ. զի մեր

նախնիքն լեալ էին Թագաւորք աշխարհին ճեւաց, եւ վասն եղբարց իւրեանց գրգռութեան. զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, վասն այնր եմք գնացեալք, եւ վասն բարւոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք» (Ե. 1Է):

Խորենացու պատմածն ոչ բոլորովին համապատասխանում է Փաւստոսի այս համառօտ հաղորդածին, որի մօտ առանձնապէս շեշտւած են. նախ՝ Մամիկոնեանների թագաւորական ծագումը եւ Բ-րդ մեծ արիւն հեղուկութիւն, որն ամենեւին չէ յիշում մեր պատմիչը: Ղերջինս, ամենայն հաւանականութեամբ, օգտուել է տոհմային աւանդութիւններից, որոնց թւում հաւանական է եւ այն խմբագրութիւնից, որ բերած է Սեբէոսի¹ յառաջաբանի մէջ եւ որն աւելի համաձայն է Փաւստոսի պատմութեան. Խորենացին միայն կրճատել է նրան եւ մի քիչ փոփոխել, հարկաւ ոչ յօգուտ Մամիկոնեանների: Այս խմբագրութիւնը վերաբերում է ոչ ուշ քան Զ եւ է դարերին:

«Մամիկոնեանք ոչ են որդիք ազգածինն Արամանեկայ, ասում է այդ աւանդութեան մէջ, այլ են եկեալ ի ճինաստանէ յամս Ար-

1 Բ. Պատկանեանի հրտ. մէջ էջ 12. սող 1-ին «պայագառք նորին», բառերից յետոյ վերջակեա է գրուած, որ առաջին հրտ. մէջ (Ս. Պոլիս էջ 28) — չկայ, մինչդեռ վերջակետը պէտք է գրուած լինէր «տարինադրէն» (փոխ. աւրիակե) բառից յետոյ, որտեղ վերջանում է Ասողկից փոխ առած հատուածը (էջ 32, հրտ. Պաաս.) եւ սկսում է սրան հետեւող պատմուածքի, Մամիկոնեանների մասին, վերնագիրը, ըստ երեւութիւն գրիչներից աղաւաղուած:

տաւանայ արքայի Պարթեւաց եւ մեծին խորու-
 վու արքայի Հայոց. որպէս լուայ¹ յառնէն մեծէ,
 որ եկեալ էր հրեշտակութեամբն ի ճենաց թա-
 գաւորէն առ արքայն խորով². յոր իմ հար-
 ցեալ ի դրանն արքունի, եթէ ազգ մի մեծ ի
 Հայաստան երկրի կայ՝ զորմէ ասեն, եթէ ի
 ձերմէ աշխարհէն գնացեալ են: Եւ նա ասաց
 ինձ. ասեն, ասէ, գուսանք եւ ի մերում աշ-
 խարհին յերգս իւրեանց զՄամիկն եւ զԱր-
 նակն³, արս երկուս լեալ քաջս եւ գլխաւոր
 եղբարս հարազատս, որդիք Կառնամայ Նա-
 խարարին, որ էր երկրորդ ի թագաւորու-
 թեանն ճենաստանի: Որոյ յետ մահուանն առնս
 այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի
 կնութիւն: Եւ եղև ի նմանէ որդի, որ զկնի մա-
 հուան հաւր իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ
 հայրենի թագաւորութեանն: Եւ նոքա երկու
 եղբարք նորա ի մաւրէ եւ ոչ ի հաւրէ ապստամ-
 բեալ ի բաց կացին ի նմանէ եւ միաբանեալ
 ընդ ինքեանս զմասն մի ի նախարարացն եւ ի
 զարացն, առնեն ուխտ միաբանութեան: Որոց
 խորհեալ խորհուրդ չարութեան սպանանել
 զեղբայրն իւրեանց զթագաւոր աշխարհին Ճեն-
 քակուր⁴ եւ առնուլ զթագաւորութիւն նորա:

¹ Սերէոս կամ մի այլ ժամանակակից:

² Ամենայն հաւանականութեամբ խորով Փարվիզ
 (590—628):

³ Փաւստոսի մէջ յիշուած է Կոմս Մամիկոնեան
 (Ե, 37-), Կոն եւ Կոնակ վարիանտներով Ս. Ներսէսի
 պատմութեան մէջ («Սոփերք», Զ, էջ 68):

⁴ Այս անունով կոչուած է Շիրակացին (Զինաց
 կայսեր Աշխարհազորութիւն, էջ 616) եւ Ղեկունէ, էջ 38,

Եւ զաւրաժողով լինէին Մամիկն եւ Կոնակն ի
 վերայ նորա ի միում տեղուջ աշխարհին իւ-
 րեանց, եւ բաժանի զաւր աշխարհին յերկուս:
 Ազգ լինի Ճենքակուրի, գումարէ եւ նա
 զզաւրս իւրոյ կողմանն եւ գնայ ի վերայ նոցա
 ի պատերազմ: Եւ յարձակին ի վերայ միմեանց,
 հարկանեն սրով սուսերի եւ սպառնն զզաւրն
 ապստամբական: Փախստական լեալ Մամիկն
 եւ Կոնակն գնան առ արքայն Արշակունի, որ
 նստէր ի Բահլ Շահաստանի յերկիրն քուշա-
 նաց: Եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցունց
 թագաւորութեանցն այնոցիկ: Յայնժամ մեծաւ
 աղերսիւ խնդրեալ զնոսա ճենքակուրի յար-
 քայէն Պարթեւաց. «Չի բարձցէ ի միջոյ, ապա
 թէ ոչ լուծցի ուխտ խաղաղութեան, որ ի միջն
 մերում»: Իսկ նորա խնայեալ յարն, ոչ ետ
 զնոսա ի ձեռս նորա, այլ գրէ առ նա սիրով.
 «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ,
 հաստատուն կացցէ ի միջն մերում, զի երդուեալ
 եմ առ նոսա, զի նոքա մի մեռցին, այլ ետու
 տանել զնոսա ի մոլտս արեւու եւ յեզր եր-
 կրի ի տեղին յայն որ (ես կարգում եմ՝ ուր)
 արեգակն ի մայր մտանէ»: Յայնժամ հրամայէ
 արքայն Պարթեւաց զաւրաց իւրոց տանել զնոսա
 զգուշութեամբ մեծաւ՝ կնաւ եւ որդովքն իւ-
 րեանց եւ ամենայն աղխիւն իւրեանց յեր-

նաւ արաբացի պատմիչները: Այս բառի ստուգաբանու-
 թեան մասին — ճեն (Զինաց) եւ Փակ-Փուր կամ Բակ-
 Բուր (աստուծոյ որդի) տես Բ. Պատկանեան, Արաց Ժա-
 մանակագրութեան մասին, լուսաւ. նախար. ամառք, հատ.
 230, էջ 262:

կիրն Հայոց առ ազգական իւր՝ արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր եւ սերեալ բազմացան յոյժ եւ եղն յազգ մեծ ի Մամիկրոնայ եւ ի Վոնակայ. յայսմանէ այն է սպարապետ»:

Խորենացու մտցրած փոփոխութիւնների թուում պէտք է յիշել պատմուածքին որ գելու, որ յարմարեցրած է ոչ Արտաւանի եւ Խոսրովի, այլ, ինչպէս երեւում է Սերէոսից, Սասանեան Շապուհի եւ Խոսրովի որդի Տրդատի ժամանակին:

Բաց ի յիշեալ աղբիւրից Խորենացին նոյն ՁԱ գլխի համար օգտուել է Շիրակացու¹ աշխարհագրութիւնից, այն է Չինաստանի եւ Հնդկաստանի նկարագրից: Ահա այդ հատուածը. «Լինի ի ծննաց աշխարհին դարիճենիկ եւ հոշիբոակ եւ բուիճենիկ եւ կասիմոն եւ սրիկոն: Ունի եւ հրէշ եւ մուշկ եւ սիրամարգ շատ, քրքում անբաւ, ապրիշում շատ եւ ազնիւ...»

Ընցնելով յաջորդ — ՉԳ գլխին Սլկունեաց նախարարութեան սատակման եւ նոցա կալուածների Մամիկոնեանների ձեռքն անցնելու մասին, հարկ եմ համարում դիտել, որ այդ պատմութիւնն, եթէ չէ փոխ առած յետին տոհմային աւանդութիւններից, ուրեմն կազմուած է Խորենացու ձեռքով: Խնդիրն այն է, որ Սլկունի նախարարական տունը հին պատմիչները

չեն յիշում — ոչ Ագաթանգեղոս, ոչ Փաւստոս եւ ոչ Ղ. Փարպեցի: Եթէ Ագաթանգեղոսի լուութիւնը Սլկունեաց մասին մի կերպ կարելի է բացատրել, սակայն Մամիկոնեան տան այդչափ նշանաւոր սխրագործութեան չյիշելը նոցա տոհմային պատմիչների կողմից, հազիւ թէ հասկանալի լինի:

Ահա թէ ինչու կասկած է առաջ գալիս, ոչ միայն ՉԳ գլխի հաւաստիութեան վերաբերմամբ, այլ եւ այն ամէնի, ինչոր Խորենացին հաղորդում է Սլկունեաց նախարարութեան մասին. այն է՝ նոցա նահապետ «Գժնեայ Սլաքի» մասին (Բ՝ գիրք ԳԼ. Ը.), որ դեռ Վաղարշակի ժամանակ նշանակուեց արքայական որսորդութեան գլուխ, Սղուկի մասին, որ ապստամբուեց Տրդատի դէմ, նաեւ Տարոն գաւառի այս նախարարութեան պատկանելու մասին, իբրեւ տոհմային կալուածք: Մի բան միայն անկասկած է, որ Հայաստանում գոյութիւն ունէր մի նախարարութիւն Սլկունի կոչմամբ — որն ինչպէս երկրորդական նախարարութիւն հազիւ թէ մի բանով հուշակուեց: Սլկունի յիշում է մի անգամ միայն Եղիշէի մէջ (էջ 77) երկրորդական նախարարների շարքում. Գահ-նամակում նոքա 48-րդ տեղն են բռնում:

¹ Վեն. հրատ. էջ 615—616:

Գ Ա Յ - Ն Ա Մ Ա Կ Ի Մ Ա Ս Ի Ն *

Մեր ձեռքն է հասել մի հետաքրքիր յիշատակարան, ըստ երեւութին, հայ նախարարների գահերի կամ բարձերի հին ցուցակից մի հատուած, որ կազմուած է, ինչպէս նրա մէջ ասուում է քրիստոսի Գ. դարու վերջի եւ Ե. դարու սկզբի դիւանական տեղեկութիւնների հիմամբ: Սոյն յիշատակարանն, որ գտաւ հանգ. Գ. Հախվերդեանը եւ առաջին անգամ ի լոյս ընծայեց գիտնական հայագէտ Էմինը Մ. Խորենացու Հայոց Պատմութեան ուսերէն թարգմանութեան առաջին հրատարակութեան մէջ (1858 թ.), — յետոյ արտատպուել է մի քանի անգամ, — ի միջի այլոց հանգ. Ալիշանի ձեռամբ («Այրարատում») իսկական լուսատիպով, բայց մինչեւ այսօր քննադատօրէն հետազօտուած չէ, թէեւ արժանի է պատմագէտների առանձին ուշադրութեան¹: — Ո՞վ է այս

* Զանի որ խօսք եղաւ նախորդ յօդուածում Գահ-նամակի մասին, աւելորդ է համարեցինք նախ քան շարունակել հետազօտութիւնը Տրդատի մասին, առաջ բերել նոյն հեղինակի քննական հայեացքը գահ-նամակի վերաբերմամբ:

¹ Առաջ ենք բերում այստեղ Գահ-նամակի յառաջարանը. [Սահակայ խնդիր արարեալ ի դրան արքունի

«Արտաշէս [Թագաւորը], որի արքունի դռնում փնտռում է Սահակ նախարարների մասին տեղեկութիւններ: Ո՞վ է այս «Արտաշիր [Թագաւորը]: Ո՞ր Վրամ [Թագաւորի մասին է այստեղ խօսքը: Ի՞նչ բան է ուամական նամա խօսքը, որ Էմինը թարգմանել է ուսերէն «Ղոամայ թուղթ» (грамота Врѣма), հաւանօրէն առաջին բառը կարգաւորվ վաւանական, իսկ նրանից յետոյ Ալիշան նոյն իսկ աւելացրել է վտառը ու-ից առաջ, թէեւ փակագծերի մէջ: Ի վերջոյ, ինչպէս բացատրել համաձայնութեան տեսակէտից Ալիշանի եւ Էմինի ընթերցման եւ մեկնաբանութեան անձիշդ ձեւը — «հրաման տացէ... շահ համա(ր)ին առնել»:

Արտաշէսի թագաւորի որ ի Տիսպոնն խաւեցեալ, եթէ ես զՂոամական զնամա զոր Արտաշի ի դիւանին տեսի ի քաղոց ամսոյ ի յիլ եւ Ղոամայ արքայից արքայի եւ բարբարի եւ զիր արարի եւ Սահակ կաթողիկոս թէ որպէս ձեր բարբարութիւնդ հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտերանց որպէս յառաջ առ Հայոց ազգին եւս նոյնպէս եւ ի ձերում դիւանի շահ համաին առնել որ յայսմ հետէ Հայոց ազատաց եւ տանուտերանց զահ ի յայտ լիներ: Նոյնպէս Ներսէս հրամանաւ արքայից արքայի եւ ես [Սահակ կաթողիկոս զգահ-նամակին եւ եդաք մատանի զարքայից արքայի եւ զմերս: Եւ է այսպէս արդար եւ ճշմարիտ:

- Առաջին իշխան Հայոց եւ Մախրազն:
- Ա. Սիւնեաց տէր.
 - Բ. Ասպետն.
 - Գ. Արծրունեաց տէր.
 - Դ. Մամիկոնէից տէր.
 -
 - Ժ. Կամսարականն.
 -
 - Ժ. Ե. Ամատունի տէր.

Այս հարցերն ես մտածում եմ լուծել հետեւեալ ձեւով: Այստեղ յիշուած Արտաշէսը է հայոց թագաւորը, Վռամշապուհի որդին, Հայոց Արշակունեաց վերջին շառաւիղը, որ թագաւորում էր մտաւորապէս 420—426 թ. — Արտաշիրը է Պարսից թագաւորը, երկրորդը համանուն թագաւորների շարքում, որ վարում էր 379—383 թ.: Վռամը — Պարսից Վահրամ թագաւորն է (420—438 թ.), մականունեալ Գուռ (ցիռ), ժամանակակից Արտաշէսին: — Ռամական նամա, ըստ իս, ոչ մի կապ չունի Վռամի հետ. այստեղ մենք գործ ունենք Պարսից ըամ եւ ըամա¹ (համեմ. հայեր. ըամ՝ եւ երամ) բառերի հետ, «ամբոս», «խուժան», նշանակութեամբ, որից եւ Հայոց ռամիկ բառը եւ պահլաւ ըամակ — նոյն նշանակութեամբ. այստեղից ըամական — «հասարակ դաս», «ժողովրդական», «չինական», որ վերաբերում է հարկատու դասակարգին. իսկ նամա, եթէ բառի վերջը տառ չէ բաց թողած, է պահլաւ եւ հայկական նամակի նոր-պարսկերէն ձեւը, որ նշանակում է «թուղթ», «գիրք», «ցուցակ»: Այսպէս ուրեմն ռամական նամա(կ) կարող էր նշանակել «գեղջկական-չինական ցուցակ», «գիրք կամ ցուցակ հարկատու դասակարգի»: — Շահ նամաին ընթերցմունքը, վերջնթեր «ին»ից առաջ ը աւելարդութեամբ (համա(ր)ին), որով կը ստա-

¹ Թեա Hübsehmann, Armen. Gramm. էջ 147 եւ 233:

ցուի դիմաւոր բայ յոգնակի Գ դէմքով («շահ համարին առնել»), — կամայական է եւ համաձայնութեան դէմ դժուարութիւններ է առաջ բերում. դիմաւոր բայը հետեւում է միւս դիմաւոր «հրաման տացէ» բային: Ես կարծում եմ, այստեղ, ինչպէս եւ վերը «ռամական նամա(կ)» ձեւում, մենք մեր առաջեւ ունինք Պարսից պետական կազմակերպութեան արուեստական որոշումներից մէկը. «շահհամարն» (եւ այսպէս եմ կարգում, փոխ. զահ-նամակի բնագրի շահ համարն, այսինքն ը, փոխանակ ի, եւ այն՝ երկու բառը միացրած) ասացուածքի մէջ — «շահ», ըստ իս, չէ նշանակում այստեղ «օգուտ», այլ ունի ածականի նշանակութիւն — «պետական»¹ (Սասանական-Պարսկական ձեւը² կը լինէր շահր), իսկ «համար» — «հաշիւ», «թուահամար», «աշխարհագիր», հետեւապէս «շահհամար»³ կարող էր նշանակել պետական աշխարհագիր, իսկ ամբողջ ասացուածքը — բոլոր հայ իշխող նախարարների եւ մեծամեծների պետական աշխարհագիր առնել, հիմնուելով վերոյիշեալ «ռամական

¹ Հմտ. ibid., էջ 209:

² Հմտ. Շահր-Վարազ եւ նման կազմութիւնները Հիւլըմնանի մտ, ibid., էջ 59: Նոյնպէս Հիւլը. «Հանգ. Ամ», 1904, 300, Bränsäbr, Marquart, 122.

³ Վերջին ն «շահհամարն» բառի մէջ կարող է բերականորէն դրուել, որովհետեւ հայցական ցոյց տալու համար: Այսպէս ուրեմն «շահհամար» նոյն է, ինչոր Ագաթանգեղոսի եւ Ս. Գրքի թարգմանութեան մէջ պատահող աւելի հին ձեւը «աշխարհամար (եւ աշխարհահամար) առնել»:

նամակ¹ի, այսինքն հարկատու դասակարգերի ցուցակի վրայ:

Այս դէպքը ես պատկերացնում եմ ինձ այսպէս. Հայոց կաթողիկոս Սահակը ուղեւորուել է Պարսկաստան Արտաշէս Հայոց թագաւորի օրերում, Պարսից Ղաւամի ժամանակ, թերեւս մինչեւ իսկ Արտաշէսին գահի վրայ հաստատելու նպատակով, հետեւապէս մօտ 420 թ.: Հայկական քաղոց ամսի 17ին (Գեկտ.-ին, չէ նշանակուած սակայն թիւը) Սահակ կաթողիկոսը այցելելով Պարսից մայրաքաղաք Տիզբոնում Պարսից պետական ղիւանատունը՝ Արտաշէր թագաւորի (379—383 թ.) ղիւանում տեսնում է հայերին վերաբերեալ «նամական նամակ»²ը, հայ գիւղացիների հարկացուցակը, կազմած գուցէ այս թագաւորի հրամանով, Հայաստանը Պարսից եւ Յունաց մէջ բաժանելուց յետոյ¹: Այստեղ նա գրաւոր ղիւմում է «արքայից արքայ եւ բարերար» Ղաւամին, խնդրելով նրանից հետեւեալը. «որպէս Ձեր բարերարութիւնդ (տիտղոս՝ նման մեր ժամանակի Չերդ մեծութեան եւայլ ձեւերին) հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց, որպէս յառաջ առ Հայոց ազգին եւս նոյնպէս եւ ի ձերում ղիւանի շահհամարն առնել՝ որ յայսմ հետէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց գահ ի յայտ լինէր»: Այսպիսի գահ-

¹ Եթէ խորհնացու եւ «գահնամակի» համաձայն ընդունենք, որ Հայաստանի բաժանումը կատարուեց մինչեւ Արտաշէրը:

նամակ հայ ազատների եւ տանուտէրների կազմուեց այն ժամանակ Ղաւամի հրամանով եւ հաստատուեց մի կողմից Ներսէհ Պարսկի եւ միւս կողմից Հայոց կաթողիկոս Սահակի մատանիներով (կնիք):

Գահնամակում բոլոր իշխանութիւնները թուով եօթանասուն են. կարելի է նորա աւելել շատ էին, քանի որ մեզ միայն մի թերթ է հասել, գրուած մինչեւ վերջը. նախարարութիւնները դասուորուած են աւագութեան կարգով: Առաջին տեղը բռնում է խորխոռունի նախարարութիւնը, որ իրեն տիտղոսում էր Մախազ կոչմամբ, երկրորդ տեղը՝ Սիւնեաց իշխանութիւնը, երրորդ տեղը — Ասպետը (Բագրատունիք), չորրորդ տեղը — Արծրունի իշխանութիւնը, հինգերորդ տեղը Մամիկոնեան իշխանները (sic)... ԺԳ տեղը — Կամսարական... ԺԶ տեղը — Ամատունի իշխաններն եւայլն:

Այս գահնամակն², անկախ այն խնդրից, իսկական է այն թէ ոչ, յայտնի էր խորհնա-

¹ Ընդօրինակողը սխալմամբ, առաջին նախարարից յետոյ գրուած է Ա, Բ, Գ... մինչեւ ԻԳ, — փոխ. Բ, Գ... ԻԳ-ում, հաւանօրէն, սխալը նկատում է, եւ ԻԳ-ին հետեւում է ԻԵ, թողնելով ԻԳ: Ինչպէս էմին եւս նկատել է, այստեղ ոչինչ բաց չէ թողած:

² Իսկապէս, այս իսկական յիշատակարանը չէ, որովհետեւ իսկականը պիտի գրուած լինէր պարսկերէն եւ պահպանուէր Պարսկաստանում, սա միայն նրա բովանդակութիւնն է, Սահակի բերանով հաղորդած հայերէն, որ եւ փոխանակում է բնագրի պատճէնը՝ վաւերացրած կնիքներով:

ցուն՝, որը թէեւ չէ յիշում նրա մասին ուղղակի, բայց ի նկատի ունի իւր ծ, ծա, ծե գլուխները կազմելու:

Այդ յիշատակարանի մէջ մեր պատմագիրը ոչ մի կերպ չի կարող հաշտուել այն իրականութեան հետ, թէ ինչպէս նրանից հովանաւորուած Կամսարականները, որոնց նա համարում էր մինչեւ իսկ Հայոց թագաւորների,

1 Այս յիշատակարանի հետ կապ ունի հաւանօրէն եւ մեր պատմագոր հաղորդածը ծ գլխի վերջը Պարսից դրան երկու սովորութեանց մասին, որ հաղորդել է նա մի քանի մութ ասացուածքներով, ըստ երեւութին, շնորհիւ այն հանդամանքի, որ Մովսէս ոչ բողբոջին հասկացել է զԱՆՏԱՄԱԿԻ յառաջաբանը: Վերջնում արգեօք շնորհիւ աւելցրած նւ շաղկապի «գիր արարի ես Սահակ», նախադասութիւնից առաջ... թէ շնորհիւ, ինչպէս կարելի է եթաբել ընդօրինակողի սխալմամբ յետ ու առաջ դասաւորութեան ի քաղցր ամսոյ ի ժեւից յետոյ, թուում է՝ պետք է լինէր «եւ գիր արարի ես Սահակ կաթողիկոս», ապա «Վառամայ (նախընթաց շաղկապը նւ պիտի թողնել) արքայից արքայի եւ բարերարի», եւ սրանից յետոյ — «թէ որպէս ձեր բարերարութիւնդ եւն», — յերաւի, այնչափ էլ հեշտ չէ մակարերել, արգեօք որը՞ դիւանում էր տեսել Սահակ «առամական նամա» (նոյնպէս, ըստ երեւութին, անհասկանալի խորենացուն) Արտաշէր, թէ Վառամ: Ուստի զԱՆՏԱՄԱԿԻ յառաջաբանը իմ կարծիքով պիտի կարգաւ այսպէս. «Սահակայ խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի թագաւորի որ ի Տիսպոնն խաւսեցեալ եթէ ես զառամականն գնամա, զոր Արտաշէր ՚ի դիւանին տեսի ի քաղցր ամսոյ ի ժեւ, գիր արարի ես Սահակ կաթողիկոս Վառամայ արքայից արքայի եւ բարերարի, թէ որպէս ձեր բարերարութիւնդ հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտերանց որպէս յառաջ առ Հայոց ազգին եւս նոյնպէս եւ ի ձերում դիւանի շահ համարն առնել որ յայտ լինէր: Նոյնպէս Ներսէ՛՛՛՛ հրամանաւ արքայից արքայի եւ ես (Սահակ կաթողիկոս զգահանմակին եւ

այսինքն՝ Արշակունեաց մօտիկ աղգական, այլ նաեւ Ամասունեաց իշխանական ցեղը (չգիտենք, ինչու նոյնպէս հովանաւորուած Մովսէսից) — Հայոց նախարարութեան զաննեմակում կարող էին բռնել թԳ եւ թԶ տեղերը, իսկ նրան առելի Մամիկոնեանք (Բագրատունեաց քաղաքական հակառակորդները եւ, գուցէ, կամսարականների) որոնց նա ամէն տեղ տքնում է ներկայացնել ոչ այնչափ փայլուն գոյնով, ամէն կերպ նսեմացնելով նոցա նշանակութիւնը եւ փառքը — կը բռնեն Ե տեղը: Մինչդեռ գոյութիւն ունէր պաշտօնական վաւերաթուղթ, որի մէջ այս ամէնը մտցրած եւ հաստատուած էր եւ որը խորենացու համար ունէր առանձին նշանակութիւն նաեւ նրա համար, որ աւելի պատուաւոր տեղը, քան Մամիկոնեաններինը, այսինքն Գ.ը ապահովուած էր Բագրատունի նիւերի համար: Եթէ հնարաւոր չէր անգիտանալ եւ ոչ հերքել այդ վաւերաթուղթը, պետք էր ուրեմն գործին այնպիսի կերպարանք տալ, որ Մամիկոնեանների համեմատութեամբ կամսարականների եւ Ամատունիների բռնած

եղաք մատանի զարքայից արքայի եւ գմբու: Ե: Ե այսպէս արդար եւ ճշմարիտ:

- Վառջին իշխանն Հայոց եւ Մախղազն:
- Բ. Սիւնեաց տէր.
- Գ. Ասպետն.
- Դ. Արծրունեաց տէր.
- Մամիկոնէից տէր.
- ԺԳ. կամսարականն.
-
- ԺԶ. Ամատունի տէր:

ոչ այնչափ բարձր աստիճանները — ԺԳ եւ ԺԶ — իբր թէ առաջացել են, սոցա՝ Պարսից Արտաշէր Թագաւորի շնորհից զըկուելըց, երբ նոքա անձնուրաց քաջութեամբ փորձ փորձեցին փախցնել = ազատել Հայոց գահընկէց Խոսրով Թագաւորին: Իսկ դրանից, այսինքն՝ Արտաշէրից առաջ, յիշեալ նախարարութիւններն ունէին, իբր թէ աւելի բարձր գահեր, առաջին եւ պատուականագոյն նախարարների շարքում, մինչդեռ Մամիկոնեանք, ընդհակառակը, իբր թէ միայն շնորհիւ իրանց ազգեցիկ ազգական Սահակ Կաթողիկոսի անձանձիր բարեխօսութեան եւ միջամտութեան, նոյն Արտաշէր Թագաւորի ժամանակ ձեռք ձգեցին Եւ բարձր, ուրեմն մինչեւ այդ ժամանակ աւելի համեստ տեղ բռնելով կրտսեր նախարարների շարքում: Արտաշէր, ասում է Խորենացին, «հրամայեաց զտուն իւրաքանչիւրոցն (ազգացն Կամսարական եւ Ամատունի) զկալեալսն յարքունիս՝ դարձուցանել ի նոսա. բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարհ քան զբազումս մատուցեալ նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել: Իսկ զազգն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան, ի վեր մատուցանել, զի կարգեցցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց, եւ ի դիւանի իւրում գրել»:

Խորենացին ոչ առանց նպատակի շեշտում է Արտաշէրի «դիւանը», որպէս զի համաձայն լինի Գահնեմակին: Աւելի մեծ կարեւորութիւն տալու դիւանմբ՝ նա ստիպում է Ար-

տաշէրին մի նամակ գրել Հայոց Առամշապուհ Թագաւորին նոյնպիսի բովանդակութեամբ, մի նամակ, որ այնպէս տարօրինակ է հնչում մոլեռանդ կրակապաշտի բերանում, մանաւանդ այնտեղ, ուր նա գովաբանում է քրիստոնեայ մարտիրոսի՝ Գրիգոր Լուսաւորչի հոգեւոր նահատակութիւնները: Այս նամակի իսկութեան մասին հարկաւ խօսք լինել չէ կարող:

Կե գլխում Խորենացին վկայութեան կը կոչէ այն, թէ Արտաշէր հաստատեց բոլոր հայ նախարարութեանց գահնեմակը, մինչդեռ ինչպէս մենք այստեղ տեսանք, միայն երեք ցեղերի հաստատութիւնը — Մամիկոնեանների, Կամսարականների եւ Ամատունիների:

Մ Ե Ժ Ն Տ Ր Կ Ա Տ

Բ.

Այս մասում մենք կը քննենք խորենացու Երկրորդ գրքի վերջին վեց գլուխները, որ քաղուած են «ի համբաւուց արանց իմաստնոց եւ հնախօս սիրաբանից», եւ ամփոփում են Տրդաւտեան շրջանի շարունակութիւնը եւ վախճանը:

Իմ «Հայոց Վէպ»¹ քննադատական երկի մէջ բաւականաչափ խօսուած է «Յաղագս առնելոյ կին Տրդատայ զԱշխէնն եւ Կոստանդինի զՄաքսիմինայ, եւ թէ որպէս հանդիպեցաւ հաւատոց», եւ «Յաղագս Կունէի Երանելոյ, եթէ որպէս եղեւ պատճառք փրկութեան Վրաց», գլուխների մասին: Աւելի մանրամասն քննութեան ենթարկեցի ես նոյն գլուխները (29. եւ 29.) առանձին յօդուածում «Հանդէս Ամսօրեայի», մէջ դեռ 1897 թուին՝ այն ժամանակ լոյս տեսած խորենացու նոր աղբիւրների առիթով, այն է՝ Սոկրատի Եկեղեցական պատմութեան որպէս եւ Ս. Սեղբեստրոսի Վարքի հայ թարգմանութեան՝ իւրաքանչիւրը կրկին խմբագրութեամբ: Կոյն յօդուածը տպագրուեց առանձին «Ազգային Մատենագարանի»

¹ Էջ 19-30, Մոսկուա, 1896:

շարքում, թիւ ԻԷ: Ուստի աւելորդ համարելով կրկնել այստեղ նոյն խնդիրները՝ անցնինք յաջորդ 2Է եւ 2Ը գլուխների քննութեան, որոնք, ինչպէս մենք տեսնում ենք, կրում են, շատ թէ սակաւ չափով, Մաղաղասի ժամանակագրութեան ազդեցութիւնը:

Այսպէս՝ նոցանից առաջնում, 2Է-ում, փոխ են առած Մաղաղասից «Պարտումս Շապհոյ եւ ակամայ հնազանդութիւն ընդ ձեռումը մեծին Կոստանդինոսի»,¹ եւ փրկական փայտի Երեւման պատմութեան մէջ հետեւեալ դարձուածքները. «յետ այնորիկ առաքեաց (Կոստանդինոս) գհեղինէ զմայրն իւր յԵրուսաղէմ ի խնդիր պատուական խաչին, զոր եւ եգիտ իսկ զփրկական փայտն, հանդերձ հինգ բեւեոքն»²:

Սոյն գլխի միւս մանրամասնութիւնները, օրին. Տրդատի Եկբատանին³ տիրելու մասին հա-

¹ Պրոֆ. Կարիեր մատնացոյց լինելով Մաղաղասի վրայ, որպէս խորենացու աղբիւրներից մէկի (Nouvelles sources de Moïse de Khorène, Supplém., Vienne 1894), վերջիչեալ հատուածի մասին, նկատում է, որ ոչ մէկը պատմիչներից չէ հաղորդում, որ խաղաղութեան դաշն կռուեց Շապուհի եւ Կոստանդինոսի միջեւ, նամանականդ թէ այդ խնդրեց Պարսից թագաւորը: Այս մասին Եւսեբիոսի «Կոստանդինոսի Վարքն», է պատմում, որին ծանօթ չէր հայ պատմիչը, բայց որը կարող էր աղբիւր լինել Մաղաղասին (էջ 317, ed. Bonn):

² Մաղաղաս Էջ 369. — Սոկրատի Եկ. Պատմ. ո՛չ բնագրում եւ ո՛չ հայերէն երկու թարգմանութիւններում բեւեռների թիւը չէ որոշած:

³ խորենացու բնագիրը «Եկբատան երկրորդ եւ վերակացուս յինքնէ թողեալ», — Նորայր (Հռովմ), հրտ.

ղորդածները, յետին ժամանակի «Խաբան» տիտղոսի գործածութիւնն այնպիսի վաղ ժամանակ, ինչպիսին Գ դարն է¹ եւ Կամարականների ցեղապետի — Կամարի պատմութիւնը, թուում են ինձ Մովսէս Խորենացու սեփական յաւելուածներ:

Աւելի ընդարձակ է Խորենացու փոխառումը Մաղաղասից իւր ՁԸ գլխում (Լիկիանոսի մասին), որը՝ բաց ի այդ, կիսով չափ կազմուած է, ինչպէս ես ասել իմ մի այլ տեղ², անվաւեր «Վարք Ս. Բարսղե» հատուածներից: Բացի սոյն Վարքի հին խմբագրութիւնից, որ չէ պահպանուել, ըստ երեւութին, Հայոց Յայրմաուրբում, Խորենացին Լիկիանոսի եւ սրա յարաբերութիւնների մասին Կոստանդիանոսի հետ պատմելիս՝ օգտուել է, ամենայն հաւանականութեամբ, նաեւ Եւսեբիոսի «Եկեղեցական Պատմութեան» հայ թարգմանութիւնից, այն է ծ. գրքի ութերորդ գլխից, որը նուիրած է, ինչպէս այդ երեւում է յոյն բնագրից, Լիկիանոսին: Ես ասում եմ, յոյն բնագրից, որովհետեւ «Եկեղեցական պատմութեան» հին թարգմանութեան մեզ հասած ձեռագիր օրինակների մէջ

գրքոյի մէջ կարգում է այլ կերպ, «երկրորդ» բառը յատկացնելով նախագաութեան հետեւեալ մասին, եւ ոչ եկրատանին:

¹ Համեմ. Nöld eke, Artashir i Papakan, էջ 23: — «Մեծ Խաբան», Մերէնոսի մօտ կոչում է թեոսաղոս թագաւորը, իսկ Ղեւոնդի մօտ — Խաղբաց թագաւորը:

² Տես «Հայոց վէպ» էջ 27-30, նաեւ «Կորագոյն աղբեր», Կարիէրի. էջ 23 եւ հետ.:

գծախտաբար պահասում են ծ գրքի մի քանի գլուխներ, դոցա թուում նաեւ ութերորդը: Ահա թէ ինչո՞ւ Խորենացու բնագրի հետ համեմատելիս ես յառաջ եմ բերում, սոյն հետազոտութեան երկրորդ մասում, յոյն բնագիրը, հայերէնի պահասութեան պատճառով: Ահաւասիկ Մաղաղասի հատուածները. «...Καὶ τὸ λεγόμενον Στρατήγιον ἀνεπέωσεν ὁ αὐτὸς Σέβηρος· πρῶτην γὰρ ἦν κτισθὲν ὑπὸ Ἀλεξάνδρου τοῦ Μακεδόνοιο ὅτε κατὰ Δαρσίου ἐπεστράτευσεν, ὅς καὶ ἐχάλεσε τὸν τόπον Στρατήγιον· ἐκεῖ γάρ Στρατηγῆσας τὰ τοῦ πολέμου ὄρωμησεν εἰς τὸ πέραν κατὰ Περσῶν. ...καὶ ἔκτισε δημόσιον λουτρόν τὸ λεγόμενον Ζεύξιππον, διότι ἐκεῖ ἴστατο ἐν μέσῳ τοῦ τετρασφύτου στήλη χαλκῆ τοῦ Ἡλίου. καὶ ὑποκάτω αὐτῆς ἔγραφε τὸ μυστικὸν ὄνομα τοῦ ἡλίου, Ζευξίπῳ Θεῷ· οἱ δὲ θραῖκες οὕτως ἔλεγον τὸν ἡλίον. Οἱ δὲ τῆς πύλεως Βύζης οὕτως ὠνόμασεν τὸ αὐτὸ δημόσιον Ζευξίππον κατὰ τὸ ὄνομα ὅπερ εἶχε τὸ πρότερον ὁ τόπος. ...Καὶ κτίσας ὁ αὐτὸς βασιλεὺς καὶ κατενάντι τοῦ ἱεροῦ τῆς Ἀρτέμιδος κυνήγιον· μέτα πάνυ, καὶ κατενάντι τοῦ ἱεροῦ τῆς Ἀφροδίτης θέατρον· τὸ δὲ Ἰπικιὸν ἐστησεν... ὅπερ οὐκ ἔφθασε πληρῶσαι... Ὁ δὲ αὐτὸς Κωνσταντῖνος ἀφελόμενος ἀπὸ Ῥώμης κρύφα

¹ Բնագրում «κυνήγιον» է, այն է «որսասեղի», ուստի մեր Խորենացու մօտ սպասում էինք «որսարան», փոխանակ տեսարանի, որ նշանակում է թէաորս, տեսարան:

τὸ λεγόμενον Παλλάδιον ξόανον, ἔθθηκεν αὐτὸ εἰς τὸν ὑπ αὐτοῦ κτισθέντα Φόρον ὑποκάτω τοῦ χίονος τῆς στηλῆς αὐτοῦ ὧς τινες λέγουσι Βυζαντίων ὅτι ἐκεῖ κεῖται.¹

Բացի «Ս. Բարսղի Վարք»-ից եւ Մաղա-
ղասի ժամանակագրութիւնից, հայ պատմիչը քա-
ղել է այս գլխում ինչ-ինչ Նազիանզացուց,
Փ. Սոկրատից եւ Հերակացուց: Առաջինից է ա-
ռած Ս. Գրքի յայտնի սոսցուածքը՝ «անհնա-
րին համարեալ չարութեան փոփոխումն» — ...
«ընձու անկարելի է զխայտուցսն փոխել, եւ
Եթովպացւոյ՝ զԹխութիւնն»², երկրորդից —
«յանրջական իմն նախատեսութեան», եւ
«գերապայծառ իմն առնելով շինուած»,³
(նոր շուով) խօսքերը, երրորդից — քննելի
գլխի վերջին նախադասութիւնը՝ «բայց այս մեզ
անհաւատալի է, այլոց՝ որպէս կամք իցեն»,
— որ հայ աշխարհագիրը գործ է ածել իւր
թուած հրէշների առթիւ. «Աշխարհ Ասիոյ Սի-
նէացուց է... Յորում բնակին... կիսանձուկք
երկրիմիք, վեց ձեռնիք, փոկոտուկք... կիսա-

¹ Մաղաղ. էջ 291, 292, 320:

² Երեմիայի մարգարեութեան մէջ (ԺԳ. 23) նոյն
սոսցուածքում գործ է ածուած «Հնդիկ», փոխ. «Եթով-
պացի»:

³ Ա. բան ընդգէմ Յուդիանոսի. Ս. էջմ. ձեռ. Թ. 908,
էջ 169. — Մարիէր (Նորագոյն աղբերք, էջ 27) հակուած
է վերագրել սոյն հատուածը «Ս. Բարսղի վարք»-ին:

⁴ Փ. Սոկրատ էջ 43 եւ 44. «Ըստ անընդմտ
սութեան», եւ «... ամենապատիկ ... զշինուածս յար-
ղարմ»:

գազանք... անգլուխք, շանգլուխք եւ որ ինչ
սոցին նմանք»¹:

2Թ գլխի վերաբերմամբ պէտք է գիտել,
որ Նիկիոյ ժողովի եպիսկոպոսների անունները
խորենացին կարող էր փոխ առնել որեւէ ըն-
թացիկ աղբիւրից, նման նորերս հրատարակած
Գեղցերի ցուցակին²: Սրա մէջ թուած են այն
բոլոր հայրերը, որոնց յիշում է մեր պատմիչը,
սոցա թւում նաեւ Հռովմայ. երէցները Բիտոն
եւ Բիկէնդ, նաեւ ըստ Մովսիսի Կեսարիայում
պատահած հրաշքի ականատեսներն եւ նոյն-
պէս ժողովի մասնակցողներն. Եւթաղ Եղեւսիոյ
եւ Յակոբ Մծընայ եւ Յովհան Պարսից
եպիսկոպոս: Սակայն այս ցուցակը պարունա-
կում է իր մէջ միայն լոկ անուններ, եւ նրա
մէջ չկայ ոչ Արիոսի հերետիկոսութեան բացա-
տրութիւնն եւ ոչ մանրամասնութիւններ ժողովի
մասին, որոնք, ըստ երեւութիւն, քաղուած են
«Պատմութիւն Կայսերաց», նման աղբիւրից:
Վերջինն այսպէս է նկարագրում Արիոսի դէպքը.
— «... Առ սովաւ (կոստանդիանոսիւ) երեւե-

¹ Հրտ. Սուքրի. Վենետ. էջ 46 հայ բնագրի:

² Patrum Nicaenorum nomina latine, graece, cop-
tice, syriace, arabice, armeniace, Lipsiae, 1898. էջ 186,
192, 194, 196: — Աւերբոգ չէ գիտել, որ Սոկրատի երկու-
հայ թարգմանութեանց հրատարակութեան մէջ եպիսկո-
պոսների ցուցակը չկայ, թէեւ բնագրում յիշում է Ոսիոս
Կորդովաց եպիսկոպոս, Բիտոն եւ Բիկէնդ երէցներ Հռով-
մից, Աղեքսանդր Եգիպտացի, Եւստատիոս Աստիղացի,
Մակարիոս Երուսաղէմացի եւ վերջապէս Հարփոկրատիոն
Եպիսկոպոս Կինոպոլսոյ:

ցաւ Արիոս¹ երէց յԱղէքսանդր, որ արարած ասէր զորդին Աստուծոյ, եւ էին համախոհք նորին փիլիսոփայք Այետիոս եւ Աստերիոս եւ Նոմիոս, որք ասէին ոչ զու զորդի ի ընտելութենէ հաւր, այլ իբրեւ զփ յարարածոց: Եւ հրամայեաց Մեծն Կոստանդինոս ի խնդրոյ սրբոյ հայրապետին Աղեքսանդրի լինել ժողով ի Նիկիա, ի մայրաքաղաքն Բիթանացոց: Եւ ժողովցեցան եպիսկոպոսք ՅԹԸ. որոց ժողովէին առաջնորդք: Մակարիոս Երուսաղէմի, Աղեքսանդրոս Աղեքսանդրի, Յուստաթիոս Անտիոքու, Սեղբեստրոս Հռովմայ², Միտոփանիս Կոստանդնուպոլսի առաջին եպիսկոպոս, յետ որոյ յաջորդեալ մեծն Աղեքսանդրոս, որոց եւ նզովեալ զԱրիոս մերժեն յեկեղեցոյ արտաքս. սահմանեցին հաւատս յամենասուրբ Երրորդութիւնն քարոզելով զՈրդի ի բնութենէ Հաւր, զոր խոստովանի ընդհանրական Վաթողիկէ Եկեղեցի³ 7:

Խորենացու հէնց այստեղ գործածած ասացուածքը «Արիոս ի գարշելիսն ընկալաւ զսատակումն» առած է Նազիանզացոց⁴:

¹ Բնագրում Տիտոս է, որ ակներեւ գրչի սխալ է փոխ. Արիոս (տես «Պատմ. Կայս.» ձեռ. իմ մատենագար. էջ 23):

² Խորենացու յիշած հռովմայեցի երէցները «Բիտոն եւ Բիկէնդ» յայտնի չէ, ինչ պատճառով այստեղ եւս չկան:

³ «Պատմ. Կայս.» տես ձեռ. իմ մատենագար. էջ 23-27. — Միտոփանիս ընթերցուածը ունի նաեւ Սոկրատի հայ թարգմանութիւնը (էջ 105), բայց Մովսէս յիշում է միայն նրա յաջորդ Աղեքսանդրին:

⁴ Տես «Բան տու Մթանաս», ձեռ. Վիեն. Մխ. Թ. 217: էջ 110:

Իսկ մանրամասնութիւնները, այն է՝ Տրդատի եւ Ս. Գրիգորի հրաժարումը Նիկիոյ ժողովին մասնակցելու, պատճառաբանելով քաղաքական եւ այլ հանգամանքներով, նաեւ Ռստակէսի հասնելը կեսարիա այն վայրկենին, երբ մկրտում էին Գրիգոր Աստուածաբանի հօրը, — ես վերագրում եմ իրեն հեղինակի յաւելումներին:

Ես երկար կանգ չեմ առնի նաեւ Ղ գլխի վրայ: Սրա մէջ հաղորդած տեղեկութիւնները Ռստակէսի վերագարձի մասին Նիկիոյ ժողովեց կազմուած են ըստ Ագաթանգեղոսի. — «Իսկ երանելին Ռստակէս գայր հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն եւ հաստատուն աստուածահաճոյ Նիկիական կանոնօքն երեւեալ ի Հայաստան երկրի, առաջի դներ թագաւորին եւ կաթողիկոսին սրբոյ զբերեալ աւանդութիւնն: Որով Ս. Գրիգորի ինոյն լուսաւորական կանոնսն յաւելեալ առեալ զիր վիճակն զՀայաստան երկիրն պայծառացուցեալ...» (էջ 657):

«Եղեն ժողովեալ հարք երեք հարիւր եւ ութեւտասն ի քահալումն Արիանոսաց, զորս նզովեալ մերժեցին ի հաղորդութենէ Եկեղեցոյ» Խորենացու հատուածը համապատասխան է վերը յիշուած Կայսերաց Պատմութիւնից առաջ բերած տողերին:

«Ինքնական արտասահմանեաց ի մտաղս» (Խորենացու խօսքերը) առած է Սոկրատի հայ թարգմանութիւնից (էջ 39):

ինչ վերաբերում է մեր մատենագրի պատմութեանը Գառնի բերդի մասին, ըստ իս, այդ պէտք է վերագրել ուշ ժամանակի աւանդութիւնների ազդեցութեան, որոնք վերագրում էին Հայոց նշանաւոր թագաւորին այդ կողմերը գտնուած միջնադարեան հռովմէական արուեստի շինութիւնները, որոնց աւերակները յետոյ ուրեմն ժողովրդից ստացան «Տրդատի գահ՝» կոչումը:

Յետին տոհմային աւանդութիւններին եւ այն՝ ոչ առանց գունաւորման, կարելի է վերագրել եւ կամսարական իշխանական տան նահապետի մկրտութեան պատմութիւնը — այսինքն Ս. Գրիգորի ձեռքով — եւ իբրեւ ցեղապետ՝ Երասխաձոր գաւառը Տրդատից սեփականութիւն ստանալը:

ՂԱ գլխի առթիւ, ուր յիշում է Ս. Գրիգորի եւ Ռստակէսի վախճանը եւ լերան «Մանեայ այր» կոչումը, պէտք է գիտել, որ սա մի տեսակ մօզայիկ է Ագաթանգեղոսի, Փաւստոսի, Գր. Նազիանզացու գրուածքներից եւս եւ մի պատմութիւնից, որ ծանօթ էր Խորենացուն իւր ժամանակի «Յայսմաւուրքից», որ մեզ հասել է յետին՝ Ժ եւ ԺԱ դարերու խմբագրութեամբ², այս — «Մեծին Ներսիսի վարքն է»³: Պարզութեան համար յառաջ բերենք հատուածներով Խորենացու իսկական աղբիւրները այն

¹ Համեմ. նաեւ Աւիշան «Այրարատ» էջ 365:

² Այս յիշատակարանի մասին աւելի մանրամասն կը խօսիմ ստորեւ, էջ 211 եւ հետո:

կարգով, ինչ կարգով նա օգտուում է նուցանից:

Այսպէս՝ մեզ հետաքրքրող գլխի սկիզբը առած է «Ներսիսի վարքից»:

«Յամի ութուտասներորդի¹ մեծին Տրդատայ նստաւ յաթոռ սրբոյն Թադէոսի առաքելոյ՝ Լուսաւորիչն Հայոց Դրիգոր. եւ նա դարձոց զամենայն Հայս ի գիտութիւն ճշմարտութեանն Քրիստոսի²»:

Սրան հետեւող նոյն ՂԱ գլխի շարունակութիւնը փոխ է առած Ագաթանգեղոսից:

«... Ապա եկեալ՝ գտանէր ի Դարանաղեաց զաւատին, ի լերինն որ կոչեի Մանայարք յանապատին: Ապա աղաչեաց... Տրդատ զՍ. Գրիգորիոս, զի փոխանակ այնր զե... սիրեաց զմենաւորութեան կեանս, ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր... զՌստակէս... Ապա եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս ելանէր զտեղօքն կարգելովք, եւ զգաւառովքն աշակերտելովք յաշխարհին Հայոց զուարթացուցանել, զօրացուցանել, նորոգել եւ հաստատել³:

Այստեղ իսկ՝ ի միջի այլոց, փոխ է առած Նազիանզացու մի հատուածը նրա «Բան առ ինքն եւ առ հայր» գրուածքից եւ յարմարեցրած է Գր. Լուսաւորչի ճգնաւորական կեանքի մանրա-

¹ Խորենացին ասում է «Եթէ ամէ», որ կարելի է բացատրել արտագրողների ձեւ եւ ձևութուերը միմեանց հետ շփոթելով:

² «Սոփերք», 2, էջ 9:

³ Ագաթ. էջ 642—643:

մանուկներին. — “Մին պատուէ զփախուստ եւ զլերինս եւ զամայութիւն եւ զհանդարտութիւնն զհոգւոյ եւ զմարմնոյ եւ զմտացն յինքնանս երթալ... որպէս զի խօսեսցի առանց աղտոյ ընդ Աստուծոյ...”¹

Յաջորդ ՂԲ գլխում խորենացին պէտք է եւս օգտուի նոյն հեղինակի հատուածներին:

Յետագայ տեղեկութիւնները նոյն ՂԱ գլխի համար Մովսէս քաղում է Փաւստոսից եւ “Ս. Ներսիսի Վարքից”, որը ի դէպ է ասել մշակուած է նոյն Բիւզանդացու հիմամբ: Կոքա են յիշում Ռստակէսի նահատակութեան եւ Վերթանէսի կաթողիկոսական աթոռին յաջորդելու՝ մանրամասնութիւնները²: “Ս. Ռստակէս”, ասած է “Վարքում”, եկաց եպիսկոպոս Հայոց մեծաց ամսն եւթն: Եւ սպան զնա Արքեղայոս ազգաւ Հայ ի ծովաց զաւառին. եւ ընդին զմարմինն Ռստակիս յեկեղեաց զաւառ ի Թիլն աւան, եւ անդ Թաղեցին զնա: Եւ յաջորդեաց զաթոռ նորա երէց եղբայրն Վրթանէս”:

Բաց ի դրանից խորենացին բացատրում է, որ “Արքեղայոս էր կարգեալ ի վերակացութիւն ի 2 ուր օր դն կոչեցեալ Հայոց”, եւ որ Ռստակէսի սպանութիւնից յետոյ “ինքն գնաց փախըստական ի Տաւրոս կիլիկեցոց”, — մանրամասնութիւններ, որ պակասում են “Վարքի” մէջ:

¹ Զեռ. Վիենն. Մխ. Թ. 217, էջ 105 b:

² Փաւստոս, Գ. 2—3:

“Վարքից” է վերցուած նաեւ Ս. Գրիգորի նշխարների գիւտի տեղեկութիւնները¹, եւ այդ “Վարքին” դեռ անծանօթ է նշխարների ըստ աւանդութեան գտնողի անունը: Բերում եմ այդ անվաներ հատուածը. “...Յետ ամաց փոխի ի կարգս հրեշտակաց եւ գտեալ զնա վախճանեալ յոտն լերինն հովուացն եւ ոչ ծանեան. եւ Թաղեցին զնա իւր հանդերձիւն: ...Եւ յաւուրն յայնոսիկ յայտնեցան նշխարք Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի, եւ ազգ եղեւ կայսերն Յունաց Զնոնայ եւ նա առաքէ բազում լեզգէնս զօրաց ի ձեռն զօրավարին Միջագետաց, որ եկեալ բռնութեամբ յափշտակեաց զնշխարս Ս. Գրիգորի եւ ետ զաջ ձեռն Հայոց...”:

Բաց ի վերոյիշեալ աղբիւրներից, քննելի գլխում մենք գտնում ենք տեղեկութիւններ, որոնց մասին դժուար է ասել՝ որտեղից են նոքա առնուած: Այսպէս “Մանայարք”² լեռոն, ուր Ս. Գրիգորը ծածկուեց, ըստ իս, խորենացին կամայական է ընդունում “Մանեայ այրք”, որ կոչուել է իբր թէ Հռիփսիմէի ընկերուհիներից մէկի անունով, որ բնակուեց այդ լեռան մէջ: Յիրաւի, Ագաթանգեղոսն ասում է “ի

¹ Սոփերք Զ. էջ 9—10:

² Ազաթամզ. Վենետ. էջ 642. “Մանայարք”, գուցէ անելի ուղիղ կը լինէր այդ խօսքը կարգաւ “Մանայարք”, նման դրացի Մանանաղի գաւառին: Կոստանդնուպոլսոյ (1824) տպ.-ը փոխ. “Մանայարք”, ունի “Մանեայ այրք”, որ անշուշտ սրբագրուած է համաձայն խորենացու:

խնդիր ելանէր (Տրդատ) Ս. Գրիգորի՝ ուր եւ գտցէ: Ապա եկեալ՝ գտանէր ի Դարանաղեաց գաւառին, ի լերինն, որ կոչի Մանայարը յանապատին: Սակայն Մանեայ կոյսի մասին ոչ նա եւ ոչ միւս պատմիչները մինչեւ թ. դարը ոչինչ չեն յիշում:

Ես կարծում եմ այս դէպքում մենք գործ ունինք յետին ժամանակում կազմուած՝ ժողովրդական ստուգարանութիւններից մէկի հետ, որոնց օրինակները մեր պատմագրի մօտ բաւականաչափ կան:

Ապա, խորենացու պատմածը թէ ինչպէս Ս. Գրիգոր բնակուում է Մանեայ այրում, ինչպէս հովիւները պատահամբ գտան նրան մեռած եւ թաղեցին, նոյնպէս Լուսաւորչի նշխարների երեւումը ոմն Ճգնաւորի՝ շատ տարիներ անցներուց յետոյ — այս բոլորը կրկնութիւն է, ինչոր յիշում է Ս. Մերսիսի վարքը, այն տարբերութեամբ, որ մեր պատմիչը բաց ի դրանից տալիս է նոյն Ճգնաւորի անունը, թերեւս փոխ առնելով յետին ժամանակի աւանդութիւններից. նա կոչում էր Գառնիկ:

Ս. Գրիգորի նշխարների գիւտի խնդիրը շատ կարեւոր է Հայոց եկեղեցական պատմութեան տեսակէտից: Եկեղեցական աւանդութիւն այս մասին համաձայն է Ս. Մերսիսի վարքի եւ խորենացու պատմութեան հաղորդածներին: Բայց այս աւանդութեան բացարձակ հակառակ է Փաւստոսի վկայութիւնը, որին բոլորին անծանօթ են մանրամասնութիւնները թէ

Լուսաւորչին թաղող հովիւների, թէ նշխարների գիւտը մի ոմն Ճգնաւորի ձեռքով եւ թէ յետոյ ուրեմն այդ նշխարների փոխադրութիւնը թորդան գիւղը: Չմանելով այս խնդրի մանրամասնութեանց մէջ, ես թոյլ եմ տալիս միայն յառաջ բերել Փաւստոսի որոշակի վկայութիւնը: «Արժանի եղեալ շիրիմք հանգրստեան. եւ մեծին Գրիգորի ի Գարանաղեաց գաւառին, ի գիւղն, որ անուանեալ կոչի թորդան» (Գ. դպր. Բ): «ՁՍ. Արթանէս... մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչեւ ի գեւղն թորդան ի Գարանաղեաց գաւառն յուղարկէին: Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զտորատուրը զոսկերսն հանգուցանէին» (Գ. դպ. ԺԱ): «...բերին (զՅուսիկ) ի գաւառն Գարանաղեաց ի գեւղն թորդան... եւ եգաւ մօտ առ Գրիգորի եւ ընդ հարս իւր»¹ (Գ. դպ. ԺԲ): «Ի Գարանաղեաց գաւառին յեկեղեցին թորդանու պատուին վասն գերեզմանացն հայրապ. Գրիգորի» (Գ. դպ. ԺԳ): Այս բոլոր վկայութիւնները վերաբերում են Ս. Գրիգորի մահուանը անմիջապէս հետեւող ժամանակին՝ Գ. դարուն:

Խորենացու Բ. գրքի վերջին ՂԲ գլուխը նուիրած է «վախճանի Տրդատայ թագաւորին, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն:» Ափսոս, որ մեր հեղինակը չէ հաղորդում Հայոց թագաւորի սպանութեան իսկական դէպքը. նա գոհ է մնում ընդհանուր խորհրդածութիւն-

¹ Այս մասին տես նաեւ Դաղըւաշեանի քննադատութիւնը Փաւստոսի մասին, էջ 20, Ա. հիննա 1898ին:

ներով մեր ազգի «բարձրայօնութեան, անօրէնութեան եւ ամբարշտութեան», մասին, որով նա նահատակեց իւր թագաւորներից լաւագոյնին: Սրա հետ միասին իւր նիւթին յարմարեցնում է բառեր եւ դարձուածքներ աւետարանիչներից, առաքեալներից, Գաւթի սաղմոսներից, փոխ առնելով առանձին բառեր եւ ասացուածքներ նաեւ Փիլոնից,¹ Կեղծ-Կալիսթենէսից,² Գր. Նազիանզացոյց³, Ագաթանգեղոսից (էջ 631) եւ ուրիշներից: Ընդհանրապէս, մեր պատմագրի, ըստ երեւութիւն, նպատակն է պատմել Տրդատի մասին մի այնպիսի բան, որ անծանօթ լինի Ագաթանգեղոսին եւ միւս հայ պատմիչներին, այն է — Տրդատի սպանութիւնը թոյնով: Շատ կարելի է, որ այդպիսի աւանդութիւն գոյութիւն ունէր ժողովրդի մէջ խորենացու ժամանակ եւ պատմիչն այսպիսով հանդէս է գալիս իբրեւ նրա արտայայտիչը:

1 «Վասն Եստեանց», էջ 24. հայ թարգմ. (Վեներա. 1892):
 2 «Աղերսանդրի պատմութիւն», էջ 41 հայ թարգմ.:
 3 «Բան առ Կեսար», «Որդէք մարդկան, մինչեւ ցեօրք էք ծանրասիրտք... ընդդէր սիրէք զնանրութիւն եւ ինդրէք զստութիւն», Վիեն. Մխ. ձեռ. Թ. 217, էջ 120a. «Առ որս», «Եւ պատշաճ համարիմ զամենայն նրապարսկն շուրջնակի հնչեցուցանել այնպիսի բանիք զամենայն զինարքոս զկօնեցուցանել շատխօսութեամբ եւ աղճատանօք», Վիեն. Մխ. ձեռ. Թ. 96 էջ 7b եւ 157: «Ի ժողովորդն», «Որ օգուտ է բազում բանիցն, ուր շատխօսութեանն հոսանք իբրեւ յաղբերէ դիմն յանպայութեանէն», Վիեն. Մխթարեանց ձեռ. Թ. 217, էջ 245a:

Ինչ վերաբերում է ծանօթ նկարագրին «Տրդատի մահուան եւ թաղման մասին», որ գտնուում է՝ «Յայտնաւորքների», մէջ եւ որը Հ. Ալիշան եւ ուրիշներ համարում են իբրեւ թէ մեր ձեռքը չհասած Գ. գրքի¹ մի հատուած կամ որ նոյն է՝ խորենացու պատմութեան մի «յաւելուած», — ես վերագրում եմ այն յետին ժամանակի անվաւեր գրուածքների թուին, որոնք կազմուել են նոյն խորենացու ազդեցութեամբ:

Այս անվաւեր գրուածքում Հայոց թագաւորի սպանութեան փաստին քաղաքական բնաւորութիւն է տրուած. եղեռնագործութեան գլխաւոր յանցաւորն է Հայոց Տրդատ թագաւորի ոխերիմ թշնամի Պարսից թագաւոր Շապուհը, որ օգտուում էր այս նպատակի համար այն «չար հայ մարդկանց գործակցութեամբ, որոնք ցանկանում էին հեթանոսութիւնը վերականգնել իրենց հայրենիքում»: Նրանց մէջ աչքի են ընկնում մանաւանդ Սիւնեաց իշխանները, որոնց կալուածները սահմանակից էին Պարսկաստանին: Գաւազիրների թուումն էր նաեւ թագաւորի սենեկապանը: Տրդատ՝ զգալով դաւադրութեան գոյութիւնը, ուղեւորուեց առ ժամանակ իր պետութեան արեւմտեան կողմերը — Եկեղեաց գաւառը: Այնտեղ Սիւնեաց իշխաններից ոմանք, որոնք

1 Տես «Բազմավէպ», 1851թ. էջ 69—75. նաեւ Ալիշան «Այրարատ», 1890: Համեմ. բաց ի սրանից, Langlois, Collection I եւ II. Brosset նոյն տեղ. Զարքանախան մ. ա. հրատ. Բ. Վիեն. 1886, էջ 355—356:

մասնակցում էին դաւադրութեանը, որսի ժամանակ իբր թէ պատահամբ, նետ արձակեցին թագաւորի վրայ նրան սպանելու գիտաւորութեամբ: Թագաւորը վերաւորուած է. նրան տանում են արքունիք եւ անկողին դնում: Սենեկապանը տեսնելով, որ թագաւորի վէրքը վտանգաւոր չէ, նրան թոյն է տալիս, որից նա մեռնում է: Սրանից յետոյ անվաւեր գրութիւնը տալիս է Տրդատ թագաւորի փառաւոր թաղման նկարագիրը Թորդանում, փոխ առած համարեա բառացի խորենացու պատմածից Հայոց Արտաշէս Բ թագաւորի թաղման մասին¹: Անվաւեր գրուածքում երեւում են նաեւ փոխառումներ Փաւստոսից, Յովհանն. Կաթողիկոսից (Թ դ.) եւ ինչ-ինչ կեղծ-կալիսթենէսից. վերջինիս պատմածը Աղեքսանդրի թունաւորման մասին, դաւաճան սենեկապանի ձեռքով, ըստ երեւութիւն, յատկացրած է Տրդատին:

Ստորեւ բերած համեմատութիւնից² պարզ երեւում է, որ մեզ հետաքրքրող անվաւերը

¹ Խորենացի, Բ գր. 60. Այս նկարագրութիւնն եւս ըստ կարգին Մովսէս փոխ է առել Յովսէպ. Փղաւտոսից, ինչպէս ես այդ ցոյց եմ տուել իմ «Հայոց վէպ»ում էջ 310:
² ԱՆՎԱՆԻՅՐ («Բագմամբէպ, ՓՆԻՍՏՈՍ (Գ. Գ. Գ.) 1851, էջ 75.), Յաղագս մահուան Տրդատայ թագաւորի. հզօրի, քաջի եւ անաքինոյ, Իսկ թագաւորն Տրդատ յետ հաւատոցն ի Քրիստոս՝ ամենայն առաքինութեամբ փայլեալ մինչեւ ցվախճան արի ձերբութեան. այլ խստապրողութեանը

չներկայացնելով ոչինչ ինքնուրոյն, զուրկ է միեւնոյն ժամանակ որեւէ նշանակութիւնից:

Թիւն ազգիս մերոյ կամ բացալիայլեալ... Այլ զխրատարտաւ անու թիւնն տասրտութիւն կամիմ ասել, որ ի սկզբանէ պատահեցին՝ թէ եւ զամբարհասաճուամենայն զլորմանց սոցա թիւնն ազգիս մերոյ յիսպատաճառք. քանզի շարք մանք հրամանաւ Շապհոյ կորհեցան սպանանել զՏրդատ... մանաւանդ ազատն Սիւնեաց կողմանցն, որք առուեալ հրամանակատարք Շապհոյ լինէին վասն աշխարհին իւրեանց խաղաղական մտայ: Որք եւ ի յորս երեոց երբեմն ընդ թագաւորին լինելով՝ յորոց եւ խոցեալ լինի թագաւորն, որք ալէս թէ յանգէտս ուսուցեալ եկեալ զիպեալ պատահեաց նետն, եւ եկեալ յարբունիան՝ զնի ի մահիճս սակաւ ինչ վերաւորեալ Յորոց մտեալ սենեկապանն այն պատեւ զվերս նորա, եւ տեսեալ զի ոչ մեռանել նմա ի վերեն՝ արբուցանէ զնն մահու եւ վախճանէ, որ յետոյ յայնի իսկ եղեւ ի նուրին խորհրդակցացն: Եւ բարբան արծաթապատ զիսկիր զազաղօք, յորում լծեալ չորիք ոսկեանձք, եւ գունակ գունակ հասն դերձիւք զգագալսն զարգարելով, եւ անտի վառեալ զիսուք եւ

բացալիայլեալ... Այլ զխրատարտութիւն կամիմ ասել, որ ի սկզբանէ պատահեցին՝ թէ եւ զամբարհասաճուամենայն զլորմանց սոցա թիւնն ազգիս մերոյ յիսպատաճառք. քանզի շարք մանք հրամանաւ Շապհոյ կորհեցան սպանանել զՏրդատ... մանաւանդ ազատն Սիւնեաց կողմանցն, որք առուեալ հրամանակատարք Շապհոյ լինէին վասն աշխարհին իւրեանց խաղաղական մտայ: Որք եւ ի յորս երեոց երբեմն ընդ թագաւորին լինելով՝ յորոց եւ խոցեալ լինի թագաւորն, որք ալէս թէ յանգէտս ուսուցեալ եկեալ զիպեալ պատահեաց նետն, եւ եկեալ յարբունիան՝ զնի ի մահիճս սակաւ ինչ վերաւորեալ Յորոց մտեալ սենեկապանն այն պատեւ զվերս նորա, եւ տեսեալ զի ոչ մեռանել նմա ի վերեն՝ արբուցանէ զնն մահու եւ վախճանէ, որ յետոյ յայնի իսկ եղեւ ի նուրին խորհրդակցացն: Եւ բարբան արծաթապատ զիսկիր զազաղօք, յորում լծեալ չորիք ոսկեանձք, եւ գունակ գունակ հասն դերձիւք զգագալսն զարգարելով, եւ անտի վառեալ զիսուք եւ

Եւ Յուզոյց շաղախեալ զնորովս մատոյց նմա (Աղեքսանդրի)... Իսկ յանկարծօրէն յամենայն Մաթեոսից ցոյցն եղեւ գոչիւն ու ժգին. եւ միահամուռ լինեալ թացեալք յապարանան ասելով՝ թէ սպանին սենեկապանքն զնա... Եւ սպառուեալ Պաղքմոսի... Եւ զմուտեալ զմարմինն (Աղեքսանդրի) եւ երեալ ի վերայ կառաց չորեոց եւ տանէր յԵրեւոստ:

Խորենացի (Գ. Խ) «... հրամայեաց (Արշակ) նոյն Արքանայ ի նոյն որսին սպանանել զԳնէլ, որպէս թէ ընդ խարս ինչ վերպակաւ, երեոց կամեր ձգել, նմա պատահեաց նետն...»

Ibid. (Գ. Կ) «... Գազաղք (Արտաշէսի) էին սուկեղէնք, գահոյք եւ անկողինքն բեհեգեայ, եւ պատմուածանն որ մարմնովն ոսկեթեւ... Եւ զգահոյիքն շուրջ՝ որդիքն եւ քաղմուտեալ թիւնն ազգականացն եւ առ սյուրբուք պաշտօնէիցն

Բաւական է դրա համար մատնացոյց լինել նրա երկու կէտերի վրայ:

Նախ՝ անվաւերի հեղինակը անգիտակցօրէն փոխ է առնում խորենացու ասածը՝ «եւ զգահոյիւքն շուրջ որդիքն», — որ վերաբերում է Արտաշէսին, որը յիրաւի ունէր շատ որդիներ, մինչդեռ Տրդատի որդոց մա-

նշանակօք. իսկ առաջի գագաղացն ձայն աստուածօրհնութեան եւ բուրմուռը խնկոց. իսկ անտի եւ աստի բարեկամք եւ սիրելիք, ընտանիք եւ բազումք յորդոցն նորա հետեւակ անդեալ, եւ զինի գաղաղացն փողք եւ տաւիգք ողբոց, եւ կուսանք ողբասաց. թող զայլ ամենայն ուամիկըն, որ երթային գհեա անթիւ բազմութեամբ: Եւ այսպէս հասեալք ի տեղին, արարեալ տապան թագաւորական ի քարանց կճեաց, եւ ի վերայ սագակի արկեալ, յորում եղեալ զպանձն պատուական, զանուշահոտ զպատարազն, զմեծ վաստակաւորն. եւ տարեալ թաղեցին զնա ի տեղեայ սրուսանաց մեծին Գրիգորի, զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզ... Տրդատ թագաւորեալ ամս յիսուն եւ եօթն եւ ասպ կատարեալ...»

զինուորութիւնք, եւ նահապետքն եւ նախարարութեանցն գուշոք եւ մանգամայն զօրականացն վաշտք... եւ առաջի պղնձի հօրհանելով փողս, եւ զինիան ձայնարկու կուսանք սե... զգետք եւ աշխարհղ կանայք, եւ գհեա՝ բազմութիւն ուամիկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին...»

Ibid., Բ, Գ, Բ. «...Տրդատ... թագաւորեաց ամս յիսուն եւ վեց:

ՅՈՂՆԱՆ. ԿԱԹՈՂԻԿՈՍ (Երուս. հրտ. էջ 55). «...Ապա զինի բազում ամսոց պատնէ զսուրբ մարմին նորա (Ս. Գրիգորի) Գառնիկ ան ճգնաւոր՝ աստուածային իմն գրգեհս անշութեամբ, եւ տարեալ գնէ ի գեղն թորգան յիւր իսկ ի զբօսանոց պարտիզկանն: Չկնի ամսոց ինչ եւ Ս. Տրդատ... տուեալ նմա յարբուցումն մահու, զոր տարեալ հանդուցանեն ի նմին աւանի ի նոյն պարտիզկան, մերձեղեալ ի քնարանս Ս. Գրիգորի...»

սին պատմութիւնը բաց ի խոսքով Փոքրից տեղեկութիւն չունի: Իւ երկրորդ՝ Տրդատ թագաւորին թաղում են թորդանում, որ հակասում է պատմութեան հաստատ տեղեկութիւններին: Յայտնի է, որ Հայոց թագաւորներին, գոնէ Գ եւ Գ դարերում, թաղում էին յայտնի Անի բերդում, Գարանաղեաց գաւառում: Հեթանոսական դարաշրջանում այստեղ էր Հայոց վեհապետն Աստուծոյ Արամազդի տաճարն, այնտեղ եւս պահուում էին թագաւորական գանձերը: Թէ յատկապէս Անի բերդը Հայոց Արշակունիների դամբարանն էր, երեւում է Փաւստոսից, որը հաղորդում է, թէ «Ապա... փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն խոսրով, թագաւորն Հայոց մեծաց: Ժողովեալ, աշխար եղեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց. եւ տարան առ իւր նախնիսն (sic) յԱնին յեկեղեցագաւառն Գարանաղեաց» (Գ, Ժա):

Մրանից ակներեւ է, որ խոսքովի հայրը Տրդատ եւս այստեղ էր թաղուած: Այս հաստատուում է, բաց ի դրանից, նոյն պատմի յետագայ խօսքերից այն մասին, թէ ինչպէս Պարսիկները Գ դարում Անի ամուր բերդաքաղաքն առնելուց յետոյ, ձեռք ձգեցին բոլոր այնտեղ գտնուած գանձերը եւ մինչեւ իսկ բանալով Հայոց թագաւորների դամբանները, իրենց հեա վերցրին նաեւ նոցա ոսկրները (Փաւստոս, Գ, իէ): Ինքը խորենացին բառացի կրկնում է (Գ, Ժ եւ իէ) սոյն վկայութիւնը Փոքր խոսքովի Անիում

Թաղեցիլու եւ այս բերդում Հայոց թագաւորների շիրիմներ գտնուելու մասին:

Ինչ վերաբերում է Թորդան գիւղին (նոյնպէս Գարանաղեաց գաւառում), որ տեղ ըստ անվաւերի թաղուեց Հայաստանի առաջին քրիստոնեայ թագաւորը, իսկապէս, ինչպէս մենք արդէն տեսանք, Հայոց կաթողիկոսների դամբարանն էր, իբրեւ նոցա սեփական կալուածք. այնտեղ էին Ս. Գր. Լուսաւորչի, նրա որդու Արթանէսի եւ Թոռ Յուսիկի շիրիմները:

Տրդատի եւ Լուսաւորչի թաղման տեղերը նոյնացնելուն կարող էր առիթ տուած լինել անվաւերի Հեղինակին՝ բաց ի Փաւստոսի Ճասկացուած մի կէտից (Գ, ԺԴ), Յովհանն Կաթողիկոսը, որը, ըստ կարգին, օգտուել է յետին աւանդութիւններից:



Ո Ւ Ղ Ղ Ե Լ Ի Ք

Տղաք է .		Կարգ .		
էջ	8 վ. տող	2	ընդունեց	ընդունեց
"	9 ն. "	5	վերջակէտ	վերջակէտ.
"	10 վ. "	8	ընդունեց	ընդունեց
"	11 վ. "	9	գծաւարութիւններ	գծաւարութիւնները
"	15 ն. "	6	սրից	որից
"	18 վ. "	4	էէ	էէ ²
"	18 վ. "	6	Տամուր սր	Տամուր է գիտում խորե- նացին որ
"	24 վ. "	14	հին	էին
"	30 վ. "	5	հարաւ հային	հարաւային
"	32 վ. "	2	պատմութեան	պատմութեան
"	40 վ. "	10	նա՛ Սուրմակ	նա՛ Սուրմակը,
"	40 ն. "	2	աթուղից	աթուղից:
"	47 վ. "	14	լինել	լինելը
"	50 վ. "	15	նկարներ	նկար
"	51 ն. "	60	յաջորդել	յաջորդելը
"	53 ն. "	5	Եւրոպայից ելած թիւնակաւանդ	է, որք ցոյց է տուած եւ երկու ձեռագիրների վարիանսը — թշնա- մանակամայն
"	54 վ. "	4	ինչպէս... Կաղիան- զացուն	ինչպէս... Կաղիանդա- ցուն (Այս խօսքին է վերաբերում 53 երե- սում գետեկած ծանու- թութիւնը)



Տղայք է.

Կարգք է.

1: 55	վ.	տաղ	4	Կաղնիօթ Էնեոկոյ՛	Կաղնիօթ Էնեոկոյ՛ (Ճանօթ թուփ եան մէջ՝ ստորեւ, պետք է լինի.) Տես Հայկազ. բառ- գիրքը՝ Հովհիան ք.)
59	վ.		8	Եզրակացութիւն	Եզրակացութեան վրա
59	վ.		9	Հնայելով որ Անդլեայի	Հնայելով Անդլեայի
73	ն.		10	Պատմութիւն է	Պատմութիւն է
74	վ.		9	Երբ նա պատերազմ	Երբ պատերազմ
74	վ.		18	Վեթիւսքի բարբը	Վեթիւսքի բարբը
83	վ.		11	Սոնետ գրած	Սոնետ գրած
85	վ.		15	Սղբերնեքի	Սղբերնեքի

ԱՂԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

- Ա. Գարեմըն արեան Հ. Գրիգորիս վ., Ուսումնասիրութիւնը Լեհաստանի ղառաստանագրոյն: 1. Պիշոֆ, Լեհաստանի իրաւունքը: 2. Գործը իրաւունք Հայոց: 1890: 8° Երես՝ 85+59: Ֆր. 1.25
- Բ. Մեանի իշեան Հ. Գարեմըն. Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիգրանց. (պատկերազարդ:)
1890: 8° Երես՝ 50: Ֆր. 1.—
- Գ. Տաշեան Հ. Յակոբքոս, Ազգաբանագրոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազգաբանագրոս գրոց: 1891: 8° Երես՝ ԺԱ+159: Ֆր. 1.25
- Դ. Դեմետրիոս Տանի Արեւելեան Հայրի 'Ուրբվինս: Թրգմ. Հ. Գ. վ. Գալմբեարեան: 1891: 8° Երես՝ 79: Ֆր. —.85
- Ե. Տաշեան Հ. Յակոբքոս վ., Ուսումնասիրութիւնը Ստոյն-Կալիստանեայ վարուց Աղերստեղրի: 1892: 8° Երես՝ Դ+272: Ֆր. 3.—
- Զ. Աշպեր Տըվրե եւ Գ. Փիսոն, Ուղեորութիւնի Փոքր Ասիա: Թրգմ. Հ. Յ. վ. Տաշեան: 1892: 8° Երես՝ 82: Ֆր. 1.—
- Է. Մառ Նիկ., Ամսոնային ուղեորութիւնից ղէպի Հայս: Թրգմ. Մոսկովիս Անոփեան: 1892: 8° Երես՝ 89: Ֆր. 1.25
- Ը. Գարեմըն Ա., Նորագոյն աղբերք Մովսիս Խորեանցոյ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. վ. Տաշեան: 1893: 8° Երես՝ Ժ+51: Ֆր. 1

- Թ. Գաղեմքեան և զ. Գրիգորիս Վ., Պատմութիւն հայ արագրութեան: Հտր. Ա. 1794—1860: (1 լուսանկարով:) 1895: 8° Երես՝ 232: Փր. 2.50
- Ժ. Կոնիքի Փր. Կ., Կենսութիւնը զրոց Դաւթի Այալի: Թրգմ. եւ յաւ. զ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8° Երես՝ Է+92: Փր. 1.25
- ԺԱ. Գրիգորի և զ. Գրիգորի Վ., Հայք յՆոյսարեթուալիս Գրանսիրուանիոյ 1680—1779: (1 զրեկտիւսով:) 1893: 8° Երես՝ Ժ+533: Փր. 4.50
- ԺԲ. Խաչաթեան Գր., Ջննոց Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն: 1893: 8° Երես՝ 78: Փր. 1.—
- ԺԳ. Տեր-Մովսիսեան Փարսադան, Հայ գիւղական տունը: Թրգմ. զ. Բ. Վ. Պիլէգիլեան: (6 տախտակ՝ 55 պատկ.) 1894: 8° Երես՝ 103: Փր. 2.—
- ԺԴ. Գաբրիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ. Հտր. Բ. կամ Յաւելուած: Թրգմ. զ. Յ. Վ. Տաշեան: 1894: 8° Երես՝ ԺԱ+43: Փր. 1.—
- ԺԵ. Տաշեան զ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնը հայերէն փոխառեալ բառից: Ա. զ. Հիւլալման, Սեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ. Փրոքէլման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ: Գ. զ. Հիւլալման, Հայկական Յատուկ սնունդը: 1894: 8° Երես՝ 9+145: Փր. 2.—
- ԺԶ. Տաշեան զ. Յակոբի Վ., Մատենագրական մանր ուսումնասիրութիւնը: Հտր. Ա.: Ա—Զ: Ա. Նեմեսիոս: Բ. Պրոկղ Դիաղոխոս: Գ. Խոսրովիկ: Դ. Գիրք Հերոնուածոց կամ Եպիփան: Ե. Պրոկղ: Զ. Սեկունդոս իմաստասէր: 1895: 8° Երես՝ ԺԲ+294: Փր. 3.60
- ԺԷ. Տաշեան զ. Յակոբի Վ., Հայկական աշխատասիրութիւնը հայագէտ Պ. Փէթթէրի, ի մի ամփոփուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթութեամբը: 1895: 8° Երես՝ 202: Փր. 2.50
- ԺԸ. Տերեան Կ., Սեւ ծովու ոռոտական եզերքը: 1895: 8° Երես՝ 192: Փր. 2.—
- ԺԹ. Գրիգորի և զ. Գրիգորի Վ., Գրանսիրուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերլա

- Հայաստանի ի գիր եւ ի պատկերս: 1896: 8° Երես՝ Թ+352: Փր. 3.60
- Ի. Տաշեան զ. Յակոբի Վ., «Ղարդապետութիւն առաքելոց, անվանեալական կանոնաց մատենաը. Թուղթ Յակոբայ առ Կողբատոս եւ Կանոնը Թաղէի: 1896: 8° Երես՝ Թ+442: Փր. 6.—
- ԻԱ. Տոմարեկի Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սամանները: Պատմական եւ տեղագրական հետազոտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տեղեկութիւնը Սասնոյ վրայ: Թրգմ. զ. Բ. Պիլէգիլեան: 1896: 8° Երես՝ Է+62: Փր. 1.—
- ԻԲ. Կարիքի Ա., Արագրու զրոյցը Մովսէս Խորենացոյ Պատմութեան մէջ: Թրգմ. զ. Գաբրիէլ Վ. Մէլէվիչեան: 1897. 8° էլ ԺԶ+107: Փր. 1.50
- ԻԳ. Յովնանեան զ. Ղ., Հետազոտութիւնը նախնաց ռամփորէնի վրայ: Ուսումնասիրութիւնը եւ քաղուածներ: Մասն Ա. Ռամփորէն մատենագրութիւնը: Տետր Ա: 1897, 8° էլ Ը+272: Փր. 4.—
- ԻԴ. Յովնանեան զ. Ղ., Հետազոտութիւնը նախնաց ռամփորէնի եւն: Տետր Բ: 1897: 8° էլ Ա—Ը—273—522: Փր. 3.—
- ԻԵ. Գեղեկ զ., Համառոտ պատմութիւն Հայոց: Թրգմ. զ. Գր. Վ. Գալմիսեան: Յաւելուածը թարգմանչին 1. Յանկ 1895—1897 Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազանագիրը Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց: 1897 8° էլ Ը+130: Փր. 1.50
- ԻԶ. Մեմեղիշեան զ. Գաբրիէլ Վ., Գիրք (կամ յողուած) գրեւու արուեստը: Նորուս հեղինակներուն ուղղեալ քանի մը կարեւոր անարկութիւններ: Յաւելուած Գիրք կարգալու արուեստը: 1898: 8° էլ Է+123: Փր. 1.25
- ԻԸ. Խաչաթեան Գր., Մ. Խորենացոյ Նորագոյն աղբերակների մասին քննադատական ուսումնասիրութիւնը: 1898: 8°, 56 էլ: Փր. 1.—
- ԻԸ. Տաշեան զ. Յ., Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչու-

- թեան արուեստին: (10 զնկատիպ պատկերով:) 1898: 8^o ԺԱ+202 էջ: Ֆր. 2.50
- ԻԹ. Դադրաշեան Յ., Փաւստոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարոշատը: Մ. Խորենացու աղբիւրների ուսումնասիրութիւն: 1898, 8^o 175 էջ: Ֆր. 2.50
- Լ. Մանրեանց Լ., Հայերէն բարբառախօսութիւն: Թրգմ. Ի ոռւսերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիչեան: 1899, 8^o Երես Է+26: Ֆր. —.50
- ԼԱ. Բօսեան Հ. Յ., Հայր Ի Զմիւռնիա եւ Ի շրջակայս: Հատոր Ա. Զմիւռնիա եւ Հայր. (պատկերազարդ:) 1899: 8^o Երես ԺԲ+369: Ֆր. 5.—
- ԼԲ. Բօսեան Հ. Յ., Հայր Ի Զմիւռնիա եւ Ի շրջակայս: Հատոր Բ. Զմիւռնիոյ վիճակին զլիաւոր քաղաքներն եւ Հայր. (պատկերազարդ:) 1899: 8^o Երես Ժ+161: Ֆր. 2.50
- ԼԳ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայր յՆդիսարեթուպոլիս Դրանսիլուանիոյ. Բ. Հատոր 1780—1825. (1 զնկատիպ:) 1899: 8^o Երես Է+558: Ֆր. 5.—
- ԼԴ. Գազանձեան Յ., Եւրոկիոյ Հայոց զաւառաբարառը: 1899: 8^o Երես Է+124: Ֆր. 1.—
- ԼԵ. Կարրիէր Ա., Հեթմանոս Հայաստանի ութ մեհեաններն Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացոյ համեմատ: Թրգմ. Հ. Յակովբոս Վ. Տաշեան: (1 աշխարհգրկն տախտակով:) 1899: 8^o Երես 48: Ֆր. —.70
- ԼԶ. Տաշեան Հ. Յ., Ժողովածոյը առակաց Վարդանայ, ըստ Ն. Մատի, տեղեկատուութիւն եւ քաղուածքներ: 1900: 8^o Երես ԺԱ+198: Ֆր. 2.50
- ԼԷ. Տաշեան Հ. Յ., Մատենագրական Մանր Ուսումնասիրութիւնը. (տես ԺԶ:) Մամ Բ: Է-Ժ. Խիկար եւ իւր հմաստութիւնն, Ազապետոս եւ իւր Յորդրականը առ Յուստինիանոս, Թղթակցութիւն Աբգարու եւ Բրիստոսի ըստ Նորագիտ արձանագրութեան Եփեսոսի, եւ Գէորգայ Պիսիղեայ վեցօրեայը: 1901: 8^o Երես ԺԲ+388: Ֆր. 4.50
- ԼԸ. Գր. Տէր-Պօղոսեան, Նկատողութիւններ Փաւստոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: 8^o Երես Լ+110: Ֆր. 1.50

- ԼԹ. Վերէր Դր. Սիւնն. Արարատը Ս. Գրոց մէջ: Թրգմ. Հ. Բանասրաս Վ. Պիլէգիլճեան: 1901: 8^o Երես Ե+77: Ֆր. 1.—
- Խ. Սանտաշաճեան Յովսէփ Վ., Ատրիստանայ եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնը կամ նոցին քաղուածք որոնք նաբի-Ուրարտու աշխարհն պատմութեան կը վերաբերին: 1901: 8^o Երես 262: Ֆր. 4-50
- ԽԱ. Խաչաթեանց Բագրատ, Հայ Ժողովրդական ղեկագնական վէպը: 1903: 8^o Երես Լ+72: Ֆր. 1.—
- ԽԲ. Մեանէվիչեան Հ. Գարրիէր Վ., Արդի լեզուագիտութիւնը: Հատոր Ա.: 1903: 8^o Երես Լ+204: Ֆր. 3.—
- ԽԳ. Մարկարտ Դր. Յ., Հայ Բղնաշխ: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեան: 1903: 8^o Երես 44: Ֆր. —.75
- ԽԴ. Գեղցեր Հ., Սկզբնաորութիւնը Բիւզանդեան բանակամերու ղրութեան (1 աշխարհագրական տախտակով): Թրգմ. Հ. Գ. ԳարանՖիլեան: 1903: 8^o Երես Է+83: Ֆր. 2.—
- ԽԵ. Կիւրիէրեան Բ. Վ., Ժովք, Ժովք-Տլուք եւ Հոմ-Կլայ, պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն: (1 աշխարհագրական տախտակով) 1904, 8^o Երես Լ+119: Ֆր. 1.50
- ԽԶ. Կիւրիէրեան Բ. Վ., Կոլոտ Յովհաննէս Պատրիարք. պատմագրական եւ բանասիրական ուսումնասիրութիւն: 1904: 8^o Երես ԺԴ+227: Ֆր. 3.50
- ԽԷ. Պեղերսքն Հ., Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան: Թարգմ. Հ. Գ. ԳարանՖիլեան: 1904: 8^o Երես Լ+87: Ֆր. 1.25
- ԽԸ. Տէր-Մկրտչեան Գ. եւ Ամառեան Հ. Յ., Բնութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորագիտ ձեռագրին: 1904: 8^o Երես Է+110: Ֆր. 1.50
- ԽԹ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայր յՆդիսարեթուպոլիս Դրանսիլուանիոյ. Գ. Հատոր 1825—1904: 8^o Երես Ժ+663: Ֆր. 7.—

- Ժ. Շարքը Մ., Հայաստան, Բրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան բարեխական-ասորեստանայ սեպագրերու համաձայն: Թրգմ. Հ. Բ. Պիլեզիկեան: 8^o Երես՝ 7+222: Փր. 3.—
- ԺԱ. Խաչաթեանց Պրոֆ. Գր., Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ, կամ՝ նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացւոյ մասին: Թրգմ. Արսէն Ս. Սիմոնեանց: 8^o Երես՝ Ը+124: Փր. 1.50

~~218~~

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431276

8863

